

**ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝
«ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ
«ՕՐԵՆՔԻ ՊԱՏՎԱՐ» ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ**

ԱՄՍԱԳԻՐՆ ԸՆԴԳՐԿՎԱԾ Է ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ
ՀԱՄԱՐ ՀՀ ԿԳՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑԱՆԿՈՒՄ

***Հրատարակվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
գիտական խորհրդի երաշխավորությամբ***

Լրատվական գործունեություն իրականացնող՝
ՀՀ ոստիկանության կրթահամալիր ՊՈԱԿ, գրանցման
վկայական 03Ա085891՝ տրված 15.09.2009թ.

Հասցե՝ Երևան 0004, Ծովակալ Բսակովի պողոտա 29,

Էլեկտրոնային կայք՝ www.edupolice.am,

Էլեկտրոնային փոստ՝ orenqipatvarjournal@mail.ru,

Հեռ. 010-77-15-24

Համարի թողարկման պատասխանատու՝ պատասխանատու քարտուղար
Տ. Խաչատրյան:

Խմբագրությունը կարող է հրապարակել նյութեր՝ համամիտ չլինելով
հեղինակների տեսակետներին:

ОСНОВАТЕЛЬ И ИЗДАТЕЛЬ:
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ
"ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ КОМПЛЕКС ПОЛИЦИИ РЕСПУБЛИКИ
АРМЕНИЯ"
"ЗАЩИТНИК ЗАКОНА" научно-методический журнал
Издается по рекомендации Научного совета Образовательного
комплекса полиции Республики Армения

ЖУРНАЛ РЕКОМЕНДОВАН ВЫСШИМ КВАЛИФИКАЦИОННЫМ КОМИТЕТОМ И ВКЛЮЧЕН В ПЕРЕЧЕНЬ ВЕДУЩИХ РЕЦЕНЗИРУЕМЫХ НАУЧНЫХ ЖУРНАЛОВ И ИЗДАНИЙ, В КОТОРЫХ ДОЛЖНЫ БЫТЬ ОПУБЛИКОВАНЫ ОСНОВНЫЕ НАУЧНЫЕ РЕЗУЛЬТАТЫ ДИССЕРТАЦИЙ НА СОИСКАНИЕ УЧЕНЫХ СТЕПЕНЕЙ ДОКТОРА И КАНДИДАТА НАУК

Адрес: Ереван 0004, проспект Адмирала Исакова 29

Официальный сайт: www.edupolice.am

Электронная почта: orenqipatvarjournal@mail.ru

Тел: 010-77-15-24

Ответственный за выпуск номера: ответственный секретарь Тигран Хачатрян

FOUNDER AND PUBLISHER:
"POLICE EDUCATIONAL COMPLEX OF RA" STATE NON-PROFIT
ORGANIZATION
"BULWARK OF LAW" scientific-methodical journal
It is published with the warranty of the Scientific Council of the Police
Educational Complex of RA

THE JOURNAL IS INCLUDED IN THE MAIN RESULTS AND FOR PUBLISHING THE THESIS IN RA'S MINISTER OF EDUCATION AND SCIENCE HIGHER QUALIFICATION COMMITTEE'S IN THE ACCEPTED SCIENTIFIC PUBLICATIONS LIST

Address: Yerevan 0004, Covakal Isakov Avenue 23,

Official web-cite: www.edupolice.am

Email: orenqipatvarjournal@mail.ru

Tel.: +374 10-77-15-24

Journal Issue Manager, Responsible Secretary T.Khachatryan

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐ

Գլխավոր խմբագիր - ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Մանուկ Մուրադյան,**

Գլխավոր խմբագրի տեղակալ - ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Միսակ Մարկոսյան,**

Պատասխանատու քարտուղար - ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կրթության որակի ապահովման և գիտական աշխատանքների բաժնի պետ, ոստիկանության կապիտան **Տիգրան Խաչատրյան**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԻ ԱՆՈՍՆԵՐ՝

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Գագիկ Գրիգորյան,**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության պետ, ոստիկանության փոխգնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Արտակ Մնացականյան,**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Արտակ Հովհաննիսյան,**

ՀՀ ոստիկանության պետի խորհրդական, ոստիկանության գնդապետ, ի.գ.դ. **Գրիգոր Բաղիրյան,**

ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության պետ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ. **Ռուսլան Մարանդյան,**

ՀՀ Սահմանադրական դատարանի գիտական հարցերով խորհրդական, ՀՀ վաստակավոր իրավաբան, ի.գ.դ., պրոֆեսոր **Աշոտ Խաչատրյան,**

Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, ի.գ.դ., պրոֆեսոր **Սերգեյ Առաքելյան,**

ՀՀ զինվորական դատախազի տեղակալ, ՀՀ վաստակավոր իրավաբան, ի.գ.թ. **Հովհաննես Քոչարյան,**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պայմանագրային դասախոս, ի.գ.թ., դոցենտ **Դավիթ Թումասյան,**

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր, ի.գ.թ., դոցենտ **Ռաֆիկ Խանդանյան,**

ՀՀ վարչական դատարանի դատավոր, ի.գ.թ. **Կարեն Զարիկյան,**

ՀՀ ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր, ի.գ.թ. **Զոն Հայրապետյան,**

ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր, ս.գ.դ., պրոֆեսոր **Օլեգ Բուլգակով,**

ՌԴ ՆԳՆ կառավարման ակադեմիայի պետի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր, ի.գ.թ., դոցենտ **Ալեքսանդր Պարադնիկով,**

ՌԴ ՆԳՆ Սանկտ Պետերբուրգի համալսարանի պետի գիտական աշխատանքների գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.դ., պրոֆեսոր **Մակսիմ Բավսուն,**

ՌԴ ՆԳՆ կառավարման ակադեմիայի պետական կառավարման տեսության և մեթոդոլոգիայի ամբիոնի պետի տեղակալ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, դոցենտ **Անդրեյ Անիսիև:**

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Главный редактор - начальник Образовательного комплекса полиции РА, полковник полиции, кандидат юридических наук, доцент **Манук Мурадян,**

Заместитель главного редактора - первый заместитель начальника Образовательного комплекса полиции РА, полковник полиции, кандидат юридических наук, доцент **Мисак Маркосян,**

Ответственный секретарь - начальник отдела обеспечения качества образования и научных работ Образовательного комплекса полиции РА, капитан полиции **Тигран Хачатрян.**

ЧЛЕНЫ РЕДАКЦИОННОГО СОВЕТА:

Начальник Академии Образовательного комплекса полиции РА, полковник полиции, кандидат юридических наук, доцент **Гагик Григорян,**

Начальник управления учебно-методического обеспечения и развития Образовательного комплекса полиции РА, кандидат юридических наук, доцент, подполковник полиции **Артак Мнацаканян,**

Заместитель начальника Академии Образовательного комплекса полиции РА, полковник полиции, кандидат юридических наук, доцент **Артак Оганесян,**

Советник начальника Полиции РА, полковник полиции, доктор юридических наук, **Григор Бадирян,**

Начальник Юридического управления Полиции РА, полковник полиции, кандидат юридических наук, **Руслан Марандян,**

Советник Конституционного суда РА по научным вопросам, Заслуженный юрист РА, доктор юридических наук, профессор **Ашот Хачатрян,**

Ректор Академии Юстиции, доктор юридических наук, профессор **Сергей Аракелян,**

Заместитель военного прокурора РА, Заслуженный юрист РА, кандидат юридических наук **Ованнес Кочарян,**

Преподаватель кафедры уголовного права и криминологии Академии Образовательного комплекса полиции РА на договорной основе, кандидат юридических наук, доцент **Давид Тумасян,**

Судья Апелляционного административного суда РА, кандидат юридических наук, доцент **Рафик Ханданян,**

Судья административного суда РА, кандидат юридических наук **Карен Зарикян,**

Судья Уголовного суда общей юрисдикции РА, кандидат юридических наук **Джон Айрапетян,**

Первый заместитель начальника Краснодарского университета МВД РФ, генерал-майор полиции, доктор технических наук, профессор **Олег Булгаков,**

Первый заместитель начальника Академии управления МВД РФ, генерал-майор полиции, кандидат юридических наук, доцент **Александр Парадников,**

Заместитель начальника по научной работе Санкт-Петербургского университета МВД РФ, полковник полиции, доктор юридических наук, профессор **Максим Бавсун,**

Заместитель начальника кафедры теории и методологии государственного управления Академии управления МВД РФ, доктор философ. наук, доцент **Андрей Анисин.**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բազրայան Ազատ

Օղբերասիվ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....7

Գևորգյան Արուսյակ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ..... 15

Թադևոսյան Արման

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԻՐԱՎԱՍՏԵՂԾ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ24

Կիրակոսյան Անի, Աղաբեկյան Արմեն

ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՌԵԺԻՄԻ ՎԱՐՉԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....39

Մարկոսյան Միսակ

ՆՈՐՄ-ԱՄԲՈՂՋԻ ԵՎ ՆՈՐՄ-ՄԱՍԻ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ57

Մարուքյան Գայանե

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ (ԳԻՏԱ-ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ).....79

Մելիքյան Մելիք

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊՐՈՎՈԿԱՑԻԱՅԻ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ..... 88

Նազարյան Նաիրա

ԱՐԽՊՏԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ 101

Геворгян Гарик

ВНЕСУДЕБНЫЕ СПОСОБЫ ВОССТАНОВЛЕНИЯ ВЛАДЕНИЯ НАД
НЕДВИЖИМЫМ ИМУЩЕСТВОМ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ..... 109

Ghambaryan Artur

THE DECLARATION OF INDEPENDENCE OF ARMENIA: THE PERMANENT
GUARANTEE OF STATEHOOD PRESERVATION 126

Kazanchian Lilit, Zaqaryan Ashot

SOME FEATURES OF THE MANIFESTATION OF LEGAL LIMITATION
OF STATE POWER..... 143

Khudoyan Garik

THE STABILITY OF THE CONSTITUTION AS A GUARANTEE FOR SOCIAL
SECURITY AND DEVELOPMENT 153

Muradyan Manuk

TIME PERIODS IN ADMINISTRATIVE PROCEEDINGS: GENERAL
CHARACTERISTICS AND FUNCTIONS (scientific and practical analysis)..... 164

ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բագրատյան Ազատ

*ՀՀ ռստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
օպերատիվ-հետախուզական գործունեության և
քրեագիտության ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
ռստիկանության մայոր*

Համառոտագիր: Հոդվածում ուսումնասիրվում են օպերատիվ-հետախուզական գործունեության հատկանիշների առանձնահատկությունները և օրենսդրական ամրագրման հարցերը, հիշատակվում են քննարկվող ոլորտի համար նշանակություն ունեցող հարակից նորմատիվ իրավական ակտերի դրույթները, փորձ է արվում նորովի մոտեցում ցուցաբերել օպերատիվ-հետախուզական գործունեության հասկացությանը: Ըստ այդմ՝ առաջարկվում է այնպիսի սահմանում, որն առանձնակի կարևորում է օպերատիվ-հետախուզական միջոցառումները, վկայում դրանց կենտրոնական նշանակության մասին՝ միևնույն ժամանակ հնարավորություն նախատեսելով այլ գործողությունների համար: Արդյունքում օպերատիվ-հետախուզական գործունեությունը չի դիտարկվում բացառապես օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսանկյունից:

Բանալի բառեր՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն, պետական գործունեություն, օպերատիվ-հետախուզական միջոցառում, բացահայտ և գաղտնի մեթոդներ ու միջոցներ, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններ, օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքներ:

2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտավ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին № ՀՕ-154-Ն ՀՀ օրենքը, որի նպատակն էր ապահովել օպերատիվ-հետախուզական և քրեադատավարական համակարգերի ռացիոնալ հարաբերակցությունը, համակարգային փոփոխությունների անցն-

ցում գործարկումը: Լրամշակման ենթարկվեց նաև օպերատիվ-հետախուզական գործունեության հասկացությունը: Այդ գործունեությունը բնութագրվեց որպես մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պետական և հասարակական անվտանգությունը հակաիրավական ոտնձգություններից պաշտպանելու նպատակով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից գաղտնի և բացահայտ մեթոդների ու միջոցների կիրառմամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների նախապատրաստում, իրականացում, արդյունքների ամրագրում և իրացում¹: Տվյալ սահմանման վերլուծությունը պայմանականորեն թույլ է տալիս առանձնացնել օպերատիվ-հետախուզական գործունեության հատկանիշները՝

1. Օպերատիվ-հետախուզական գործունեությունն օպերատիվ-հետախուզական միջոցառումների նախապատրաստում, իրականացում, արդյունքների ամրագրում և իրացումն է, որի ընթացքում կիրառվում են գաղտնի և բացահայտ մեթոդներ ու միջոցներ:

2. Օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակն է մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պետական և հասարակական անվտանգությունը պաշտպանել հակաիրավական ոտնձգություններից:

3. Օպերատիվ-հետախուզական գործունեությունն իրականացվում է օպերատիվ-հետախուզական գործունեության մարմինների կողմից:

Նշված սահմանմամբ օպերատիվ-հետախուզական գործունեությունն ուղղակիորեն հավասարեցվում է օպերատիվ-հետախուզական միջոցառմանը: Անշուշտ, օպերատիվ-հետախուզական միջոցառումն անկյունաքարային նշանակություն ունի ուսումնասիրվող ոլորտի համար, սակայն, այնուամենայնիվ, օպերատիվ-հետախուզական գործունեության բաղկացուցիչ մասն է և չի կարող ամբողջությամբ փոխարինել այդ գործունեությանը: Հակառակ դեպքում օպերատիվ-հետախուզական գործունեությունն արհեստականորեն սահմանափակվում է՝ նույնացվելով օպերատիվ-հետախուզական միջոցառմանը: Հաշվի առնելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը²՝ ավելի ճիշտ է հանդես գալ այն դիրքերից, որ օպերատիվ-հետա-

¹ Տե՛ս «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը:

² Տե՛ս «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը:

խուզական գործունեությունը պետական գործունեության տեսակ է, որում կենտրոնական տեղ են զբաղեցնում օպերատիվ-հետախուզական միջոցառումները: Շարունակելով քննարկումը՝ նշենք, որ օպերատիվ-հետախուզական մարմինները նախապատրաստվում են օպերատիվ-հետախուզական միջոցառումներին, ամրագրում և իրացնում դրանց արդյունքները, բայց արդյո՞ք իմաստ ունի դիտարկվող հասկացությունը սահմանելիս ստեղծել լրացուցիչ բարդություններ. չէ՞ որ օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացումը տվյալ դեպքում ենթադրում է ամբողջական գործընթաց՝ ներառելով նախորդող և հետևող գործողություններ: Կոնկրետ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքները հիմք են այլ օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման համար, այսինքն՝ դրանք կարող են ունենալ ինքնուրույն նշանակություն, և այս տեսանկյունից միգուցե արդարացված է իրացման հիշատակումը: Օրինակ՝ օպերատիվ հարցմամբ ստացվել են տվյալներ, որոնք իրացվել են արտաքին դիտման ընթացքում, կամ օպերատիվ-հետախուզական ճանապարհով դրանք իրացնելիս կանխվել է նախապատրաստվող հանցագործությունը: Դրա հետ մեկտեղ, արդյունքները հաճախ իրացվում են վարության գործողությունների միջոցով, ուստի այս դեպքում անհրաժեշտ է խուսափել «իրացում» եզրույթը գործածելուց: Կարիք չեմ տեսնում նաև գաղտնի և բացահայտ մեթոդներն ու միջոցներն ամրագրելու համար: Դրանք կարող են իրենց տեղը գտնել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի այլ նորմերում, ենթաօրենսդրական ակտերում՝ հատկապես հաշվի առնելով օպերատիվ-հետախուզական միջոցառման այլ եղանակով անցկացնելու հնարավորությունը:

Իրավաբանական գրականությունում իրավացիորեն արտահայտվում է տեսակետ, և դա կարող են հաստատել օպերատիվ փորձ ունեցող աշխատակիցները, որ օպերատիվ-հետախուզական գործունեությունը բացի օպերատիվ-հետախուզական միջոցառումներից ներառում է կազմակերպչական, մարտավարական և այլ բնույթի գործողություններ³, որոնք նույնպես ուղղված են այդ գործունեության անցկացմանը: Օրինակ՝ ստացված

³ Ст'я Аتماжитов В.М., Бобров В.Г. Оперативно-розыскные мероприятия: актуальные вопросы теории и практики // Оперативно-розыскные мероприятия: актуальные вопросы теории и практики: материалы научно-практического семинара / отв. ред. В.М. Аتماжитов. М.: Академия управления МВД России, 2005, т. 6-9:

արդյունքներն ստուգելը, օպերատիվ-հետախուզական գործունեության մարմիններին և օպերատիվ ստորաբաժանումներին հանձնարարություններ ուղարկելը: Այնուհանդերձ, նշված գործողությունները նպաստում են օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունավետության բարձրացմանը և ստորադաս են դրանց, ուստի օպերատիվ-հետախուզական գործունեության ինքնուրույն հատկանիշ չեն: Խնդիրներ կարող են առաջանալ նաև այդ գործողություններին օրենսդրական տեսք հաղորդելիս՝ նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ օպերատիվ-հետախուզական գործունեությունը չի կարող վերածվել միայն իրավական գիտելիքների գործածման: Հավելեմ, որ առկա են այնպիսի միջոցառումներ, որոնք ըստ էության օպերատիվ-հետախուզական են, սակայն ներառված չեն «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում, օրինակ՝ հանցագործություն կատարած անձին հետապնդելը, հետախուզվողի հայտնվելու հավանական վայրում դարանակալումը: Այս ամենը հաշվի առնելով՝ կարծում եմ, որ կարելի է առաջարկել օպերատիվ-հետախուզական գործունեության այնպիսի հասկացություն, որը խիստ կկարևորի օպերատիվ-հետախուզական միջոցառման դերը՝ միաժամանակ հնարավորություն նախատեսելով այլ գործողությունների համար:

Օպերատիվ-հետախուզական գործունեության հասկացությունը բացահայտում է այդ գործունեության նպատակը՝ հակաիրավական ոտնձգություններից պաշտպանել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պետական ու հասարակական անվտանգությունը: «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը նույնպես առանձնացնում է օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակները, մասնավորապես՝ հանցագործությունների հայտնաբերումը, կանխումը, խափանումը և բացահայտումը, հանցագործություն նախապատրաստող, կատարող կամ կատարած անձանց հայտնաբերումը: Կարծում եմ՝ սրանք օպերատիվ-հետախուզական գործունեության խնդիրներն են, քանի որ դրանց լուծումը թույլ է տալիս հասնել օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակին: Օրինակ՝ հանցագործության բացահայտմամբ պաշտպանվում են մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պետական և հասարակական անվտանգությունը: Առանձնացնելով «մարդ» և «քաղաքացի» բառերը՝ օրենսդիրը ցանկացել է ցույց տալ, որ օպերատիվ-հետախուզական գործունեությունը հավասարա-

պես պաշտպանում է ինչպես ՀՀ քաղաքացիներին, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց: Տվյալ դեպքում կարող ենք օգտագործել «անձ» եզրույթը, ինչը թույլ կտա ամփոփել այդ հասկացությունները: Միաժամանակ օպերատիվ-հետախուզական գործունեությամբ պաշտպանվող օբյեկտները պետք է թվարկել տրամաբանական ճիշտ հերթականությամբ՝ մասնավորից շարժվելով դեպի ավելի ընդհանուր կատեգորիա՝ անձ, հասարակություն, պետություն:

Վերլուծենք օպերատիվ-հետախուզական գործունեության մյուս հատկանիշը: Ըստ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելու և հետաքննություն կատարելու իրավունք ունեն ոստիկանությունը, ռազմական ոստիկանությունը, ազգային անվտանգության մարմինները, հարկային մարմինները, մաքսային մարմինները, քրեակատարողական ծառայությունը և հակակոռուպցիոն կոմիտեն: Յուրաքանչյուրը միասնական համակարգ է՝ իր կառուցվածքային ստորաբաժանումներով, սակայն նման ձևակերպմամբ տպավորություն է ստեղծվում ազգային անվտանգության, հարկային և մաքսային մի քանի մարմինների գոյության մասին: Դրա հետ մեկտեղ, օպերատիվ-հետախուզական մյուս մարմինների համեմատությամբ ռազմական ոստիկանությունը, քրեակատարողական ծառայությունը, հարկային և մաքսային ծառայությունները միակշիռ չեն, ընդ որում՝ հարկային և մաքսային ծառայությունների պարագայում խոսքը, ըստ էության, միևնույն մարմնի մասին է: Հետևաբար, որպես այդպիսիք անհրաժեշտ է առանձնացնել ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ արդարադատության նախարարությունը և ՀՀ պետական եկամուտների կոմիտեն: Ինչ վերաբերում է վերը նշված հոդվածում հետաքննության հիշատակմանը, ապա օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների վերաբերյալ քննիչի հանձնարարությունները կատարելու պարտականությունն⁴ արդեն իսկ բավարար է օպերատիվ-հետախուզական մակարդակով այդ գործառույթն ընդգծելու համար: Բացի այդ, հետաքննության մարմինը նախաքննության ընթացքում ունի նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլ լիազորություն-

⁴ Տե՛ս «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

ներ, օրինակ՝ օժանդակում է ապացուցողական և վարութային գործողությունների անցկացմանը, կատարում ձեռքակալում և դրան ուղեկցող անձնական խուզարկություն⁵: Ուստի բնավ պարտադիր չէ հետաքննության կատարման ամրագրումն օպերատիվ-հետախուզական գործունեության մարմինները սահմանելիս: Այս առումով կարելի է փոփոխություններ նախատեսել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածում, որոնք իրենց էությամբ կհամապատասխանեն նաև վերջինիս վերնագրին:

Այսպիսով՝ օպերատիվ-հետախուզական գործունեության հասկացությունում պետք է արտահայտվեն հետևյալ հատկանիշները՝

1. Օպերատիվ-հետախուզական գործունեությունը պետական գործունեություն է.

2. Օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակն անձի իրավունքներն ու ազատությունները, հասարակության և պետության անվտանգությունը հակաիրավական ոտնձգություններից պաշտպանելն է.

3. Օպերատիվ-հետախուզական գործունեությունն իրականացվում է օպերատիվ-հետախուզական մարմինների կողմից.

4. Օպերատիվ-հետախուզական միջոցառումներն առանցքային նշանակություն ունեն օպերատիվ-հետախուզական գործունեության համար:

Ամփոփելով ծավալված քննարկումը՝ նպատակահարմար էմ գտնում առաջարկել օպերատիվ-հետախուզական գործունեության հետևյալ հասկացությունը՝

Օպերատիվ-հետախուզական գործունեությունն անձի իրավունքներն ու ազատությունները, հասարակության և պետության անվտանգությունը հակաիրավական ոտնձգություններից պաշտպանելու նպատակով օպերատիվ-հետախուզական գործունեության մարմինների կողմից իրականացվող պետական գործունեություն է, որում առանցքային նշանակություն ունեն օպերատիվ-հետախուզական միջոցառումները:

⁵ Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասը:

ОСОБЕННОСТИ ЗАКОНОДАТЕЛЬНОГО ЗАКРЕПЛЕНИЯ ПРИЗНАКОВ ОПЕРАТИВНО-РОЗЫСКНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Багратян Азат Людвигович

*Преподаватель кафедры оперативно-розыскной
деятельности и криминалистики академии
образовательного комплекса полиции РА,
кандидат юридических наук, майор полиции*

В статье изучаются особенности признаков оперативно-розыскной деятельности, вопросы их законодательного закрепления, упоминаются положения смежных нормативно-правовых актов, имеющих значение для исследуемой области. Предпринимается попытка по-новому подойти к понятию оперативно-розыскной деятельности. В связи с этим предлагается определение, подчёркивающее центральное значение оперативно-розыскных мероприятий и в то же время предусматривающее возможность проведение других действий. В итоге оперативно-розыскная деятельность не рассматривается исключительно с точки зрения оперативно-розыскных мероприятий.

Ключевые слова: оперативно-розыскная деятельность, государственная деятельность, оперативно-розыскное мероприятие, гласные и негласные методы и средства, органы, осуществляющие оперативно-розыскную деятельность, результаты оперативно-розыскной деятельности.

SPECIFICS OF THE LEGISLATIVE CONSOLIDATION OF THE FEATURES OF THE OPERATIONAL AND INTELLIGENCE ACTIVITY

Bagratyan Azat

Lecturer at the Chair of Operational Search

Activity and Criminology, Academy of the

Police Educational Complex of the Republic of Armenia

PhD in Law, Police Major

This article studies the characteristics of the operational and intelligence activities and the issues of their legislative consolidation, reference is made to the provisions of related normative-legal acts that are significant for the area in question.

An attempt is made to take a new approach to the concept of operational and search activity. In this regard, a definition is proposed that puts emphasis on the key importance of the operational and intelligence measures, at the same time the possibility of conducting other actions is also provided. As a result, the operational search activity is not being considered solely from the perspective of operational and intelligence measures.

Key words: operational and intelligence activities; state activity, operational and intelligence measures, undisguised and covert methods and means, authorities carrying out operational and intelligence activity, results of the operational and intelligence activity.

Հոդվածը գրախոսվել է՝ 15.12.2022թ.:

Ներկայացվել է տպագրության՝ 15.12.2022թ.:

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ
ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ
ՆԱԽԱՊԱՅՄԱՆ**

Գևորգյան Արուսյակ

*Հոգեբանական գիտությունների թեկնածու,
Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի
կիրառական հոգեբանության ամբիոնի դասախոս*

Տեսական գրականության շրջանակներում սակավաթիվ են ղեկավարների կոնստրուկտիվ կառավարման հիմքում ընկած բաղադրիչների ուսումնասիրությունները: 2019-2021թթ. իրականացրել ենք տեսական և գործնական ուսումնասիրություն՝ սկզբնական շրջանում նախնական հարցում հասկանալու համար ինչպիսի խոչընդոտներ են առկա իրավապահ մարմինների կառավարման գործընթացում, և բազմաթիվ խնդիրների շարքում աշխատակիցների կողմից նշվել էր աշխատանքից բավարարվածության ցածր մակարդակը (փորձարարական հետազոտությանը մասնակցել են ՀՀ ստիկանության կրթահամալիրի 110 և Երևան քաղաքի վարչության բաժինների տարբեր ստորաբաժանումների 86 աշխատակիցներ), որի շրջանակներում էլ իրականացվել է ուսումնասիրություն՝ պարզելու համար, թե հատկապես որ բաղադրիչներին է այն առնչվում:


Ա. Վ. Բատարշևի աշխատանքից բավարարվածության ախտորոշման թեստը թույլ է տալիս գնահատել ոչ միայն աշխատողի՝ իր աշխատանքից ընդհանուր բավարարվածությունը, այլև դրա բաղադրիչները¹: Որպես ինտեգրալ ցուցիչ՝ այն արտացոլում է աշխատանքային կոլեկտիվում անհատի բարեկեցությունը կամ անբարեկեցությունը, բացահայտում է աշխատանքով բավարարվածությունը, աշխատանքի նկատմամբ հետաքրքրությունները,

¹ **Фетискин Н. П., Козлов В. В., Мануйлов Г. М.** (ред.), Социально-психологическая диагностика развития личности и малых групп. М. Изд-во Института психотерапии. 2002. – 490 с.

մասնագիտական գործունեության մեջ հավակնությունների մակարդակը, աշխատակիցների և ղեկավարության հետ փոխհարաբերություններից, աշխատանքի պայմաններից, կազմակերպությունից բավարարվածությունը և այլն: Թեստը բաղկացած է 18 պնդումից, որոնց բովանդակությանը հետազոտվողի վերաբերմունքը որոշվում է նրա՝ «այո», «երբեմն», «ոչ» տարբերակներից մեկի ընտրությամբ: Պատասխաններին տրվում են 0-2 միավորներ:

Մեր ստացած տվյալներից պարզ է դառնում, որ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժիններում գերակշռում է աշխատանքից բավարարվածության միջին մակարդակը, գրեթե նույն պատկերն է նաև ՀՀ ոստիկանության կրթահամալիրում: Բաժիններում աշխատանքից բավարարվածության բարձր մակարդակ առկա է 31%-ի, ցածր մակարդակ՝ 19%-ի և միջին՝ 50%-ի շրջանում, իսկ Կրթահամալիրում բարձր մակարդակ՝ 28%-ի, միջին մակարդակ՝ 46%-ի, ցածր՝ 26%-ի շրջանում (տես գծապատկեր 1):

Գծապատկեր 1.



Ոստիկանության ծառայողների (Կրթահամալիր, Բաժիններ) աշխատանքից բավարարվածության մակարդակը՝ տոկոսներով

Բավականին դժվար է որևէ դատողություն անել ստացված արդյունքների մասին, քանի որ աշխատակիցների մեծամասնության՝ աշխատանքից բավարարվածության մակարդակը միջին է և կազմում է պատասխանների

½-ը: Արդյունքներից պարզ է դառնում, որ ստորաբաժանումների աշխատակիցների՝ աշխատանքից բավարարվածությանը հատուկ է երկակիություն՝ մի կողմից միջին արտահայտվածությունը վկայում է, որ ինչ-ինչ բաներից բավարարված են, իսկ որոշներից՝ ոչ, մյուս կողմից՝ կան ինչպես աշխատանքից լիովին բավարարված, այնպես էլ ընդհանրապես չբավարարված աշխատակիցներ: Հետևաբար, պետք է պարզել, թե կառավարչական գործառույթ իրականացնելիս հատկապես ո՞ր հարցերը կարիք ունեն թիրախավորվելու ստորաբաժանումների ղեկավարների կողմից:


Աշխատանքի նկատմամբ հետաքրքրության բարձր մակարդակը 0,2-ով բաժիններում ավելի բարձր է, միջին մակարդակը ևս բարձր է, իսկ ցածր մակարդակը Կրթահամալիրում ավելի բարձր է, քան բաժիններում: Արդյունքները պայմանավորված են նրանով, որ Կրթահամալիրը բարձրագույն ռազմական և ոստիկանական ուսումնական հաստատություն է², որտեղ ոստիկանի մասնագիտական գիտելիքների, հմտությունների բարելավման ուղղությամբ աշխատանքները ոչ թե «բուն ոստիկանական» են, այլ գիտամանկավարժական, ուսումնամեթոդական, իսկ աշխատակիցները հենց ոստիկաններն են՝ բացառությամբ քաղաքացիական ծառայողների:

Կրթահամալիրում ոստիկանության ծառայողների գործունեության նպատակներն են՝

- ա) իրավաբանական կրթությամբ մասնագետների պատրաստումը,
- բ) համազորային և մանկավարժական կրթությամբ հրամանատարական կազմի մասնագետների պատրաստումը,
- գ) ոստիկանության միջին, ավագ և գլխավոր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողների վերապատրաստումը (մասնագիտական որակավորումը),
- դ) գիտամանկավարժական կադրերի պատրաստումը,
- ե) ոստիկանության գործունեությանն առնչվող հիմնախնդիրների գիտական մշակումը, իրավագիտության բնագավառում հետազոտությունների իրականացումը և այլն:

² <https://www.arlis.am> ՀՀ կառավարության որոշում, 9 նոյեմբերի 2006 թվականի N 1791-Ն, «ՀՀ ոստիկանության ակադեմիա» պետական հիմնարկը վերակազմակերպելու և «ՀՀ ոստիկանության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին (Վերջին այցի ժամկետ՝ 04.11.2021թ.)

Գծապատկեր 2.



Աշխատանքից բավարարվածության «բարձր», «միջին» և «ցածր» մակարդակ ունեցող աշխատակիցների առանձին բաղադրիչների արտահայտվածությունը

Աշխատանքային հաջողություններից բավարարվածության բարձր մակարդակը (2,4) Կրթահամալիրում է, որն առավելագույնն է: Միջին մակարդակը բաժիններում 0,1-ով, իսկ ցածր մակարդակը Կրթահամալիրում 0,2-ով բարձր է:

Կրթահամալիրի առավելագույն միավորը պայմանավորված է խրախուսման մի շարք մեխանիզմներով՝ ավելի քիչ ծանրաբեռնվածության պայմաններում: Չնայած, որ Կրթահամալիրի ՊԴ կազմի մասնագիտական առաջընթացի քաղաքականությունն ու ընթացակարգերը բխում են «ՀՀ Բարձ-

րագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքից»³ և այլ օրենքներից, ինչպես նաև ոստիկանության գործող օրենսդրությունից, որտեղ «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված են խրախուսման և ծառայողական առաջընթացի ձևերը, այնուամենայնիվ, ստեղծված է մի այլ հնարավորություն, երբ ոստիկանական կոչման բարձրացմանը ներկայացնելիս խրախուսման նպատակով կարող է միջնորդություն ներկայացվել վերադաս մարմիններին՝ ուսումնամեթոդական, գիտամանկավարժական գործունեության գերազանց կատարման համար աշխատակցին մեղալով, պատվոգրով կամ շնորհակալագրով պարգևատրելու համար: Իսկ գիտական առաջընթացի ապահովման համար պրոֆեսորադասախոսական կազմի ուսուցումն ասպիրանտուրայում կազմակերպվում է անվճար հիմունքներով:

Աշխատակիցների հետ ունեցած հարաբերությունների ցուցանիշները ցույց են տալիս, որ առավելագույն ցուցանիշը 0,2-ով Կրթահամալիրում է, միջին մակարդակը 1-ով բարձր է Կրթահամալիրից, իսկ ցածր մակարդակը 1-ով բարձր է բաժիններում: Այս պարագայում ստացվում է, որ բաժիններում առկա է աշխատակիցների հետ ունեցած հարաբերությունների միջին մակարդակ, իսկ Կրթահամալիրի համեմատ բարձր ցուցանիշների տարբերություններն այդքան էլ մեծ չեն: Հարկ է նշել, որ, ի տարբերություն ոստիկանության բաժինների, Կրթահամալիրում ստեղծված են գործընկերային և ընկերական հարաբերություններ, որտեղ հաճախակի աշխատակիցների միջև տեղի են ունենում քննարկումներ: Առկա է աշխատանքի վերաբերյալ հարցերի ընտրության համեմատական ազատություն, իսկ շփումները Կրթահամալիրում տեղի են ունենում ուսանողության, ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ, բաժինների պարագայում գերլարված աշխատանքային գործառույթների իրականացման ժամանակ շփումները հանցագործների հետ է, իսկ քննարկումները տեղի են ունենում դրանց շուրջ:

Ղեկավարի հետ ունեցած հարաբերությունների ցուցանիշները ցույց են տալիս, որ բաժիններում ցուցանիշը 0,2-ով բարձր է Կրթահամալիրի ցուցանիշից, միջին մակարդակի ցուցանիշը Կրթահամալիրում 0,7-ով բարձր է բաժիններից, ցածր մակարդակը ևս Կրթահամալիրում 0,7-ով բարձր է բա-

³ <https://www.arlis.am> ՀՀ օրենքը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», հոդված 15, կետ 8. (Վերջին այցի ժամկետ՝ 08.05.2021թ.)

ժինների ցուցանիշից: Ուրեմն՝ ոստիկանական օրենսդրությամբ նշված կարգավորումները թույլ են տալիս կառավարող ղեկավարությանը գործել ըստ Կրթահամալիրի մասին հստակ սահմանված ընթացակարգերի: Շատ դեպքերում ժողովրդավարական համալսարանական մարմինների անկախության տեսանկյունից ցանկալի կլիներ՝ փոփխություններ իրականացվեին գործող ոստիկանական օրենսդրական կարգավորումներում, որոնց դերը համալսարանների կրթական, գիտական և հետազոտական գործողությունների կոորդինացման և կարգավորման մեջ է: Մասնավորապես, կրթահամալիրի ենթակա բաժիններում և ՀՀ ոստիկանության տարբեր գլխավոր վարչությունների բաժինների աշխատակիցների աշխատանքի նշանակման հիմքերը նույնն են: Սակայն կրթահամալիրի բաժինների պետերի և աշխատակիցների՝ ամբիոնների պետերի և դասախոսների, ֆակուլտետի պետի և այլն, պաշտոնի նշանակումը պետք է իրականացվեր ընտրության միջոցով, որը նախատեսված է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով⁴:

Մասնագիտական գործունեության մեջ հավակնությունների մակարդակի ցուցանիշների համաձայն միջին և բարձր ցուցանիշներ գրանցվել են բաժիններում: Համապատասխանաբար բարձր մակարդակը 0,6-ով է բարձր, միջին մակարդակը՝ 0,4-ով, իսկ Կրթահամալիրում ցածր մակարդակն է բարձր: Սա պայմանավորված է նրանով, որ Կրթահամալիրում ստեղծված բարենպաստ, ոստիկանության ծառայության տեսանկյունից համեմատաբար թեթև պայմանները բավարարում են աշխատակիցներին, իսկ մեծամասամբ, երբ աշխատակիցների գործողությունները հաջողությամբ են պսակվում, ստացվող իրական արդյունքը կամ հավասար է հավակնությունների մակարդակին, կամ երբեմն դրանից բարձր է: Այնուամենայնիվ, պետք է նաև հաշվի առնել, որ քանի որ նույն գործողությունը կատարելիս տարբեր մարդիկ հավակնության տարբեր մակարդակ են ունենում, ապա նույն արդյունքը մեկը կարող է գնահատել որպես հաջողություն, մյուսը՝ անհաջողություն:

Նախապատվություն տալը ոչ թե բարձր եկամուտին, այլ տվյալ աշխատանքին մակարդակի ցուցանիշների համաձայն՝ միջին և բարձր ցուցանիշ-

⁴ <https://www.arlis.am> ՀՀ օրենքը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», հոդված 15, կետ 8. (Վերջին այցի ժամկետ՝ 08.05.2021թ.)

ներ գրանցվել են բաժիններում: Բարձր մակարդակը 0,3-ով է բարձր, միջին մակարդակը՝ 0,6-ով: Չնայած, գաղտնիք չէ, որ ուստիկանի աշխատանքը համարժեք բարձր չի վարձատրվում այդ աշխատանքի կատարման իրական բարդության, ուստիկանների գերծանրաբեռնվածության, ժամանակակից պայմաններում ուստիկանին ներկայացվող պահանջների համեմատությամբ: Մինչդեռ հայտնի է, որ մարդը մոտիվացված է աշխատանքին, երբ իր ջանքերի համար համարժեք փոխհատուցում է ստանում. եթե այն բավարար չէ կամ սուբյեկտիվորեն արժեք չունի, աշխատանքի մոտիվացիան նվազում է⁵: Ուստի կարելի է համարել, որ ուստիկանների մոտ գերակայում են գործունեության ներքին՝ ընթացաբովանդակային դրդապատճառները՝ ապահովելով գործունեության հուսալի իրականացումը: Այս մասին համապատասխան ուսումնասիրություն է իրականացվել Կրթահամալիրի դասախոս հ.գ.թ. Նազարյան Նաիրայի «Ուստիկանի անձի հոգեբանական առանձնահատկությունների պայմանավորվածությունը մասնագիտական գործունեությամբ»⁶ առենախոսության շրջանակներում:

Բավարարվածությունն աշխատանքային պայմաններից մակարդակի ցուցանիշների համաձայն՝ բարձր և ցածր մակարդակները հավասար են և՛ Կրթահամալիրում, և՛ բաժիններում, իսկ միջին մակարդակներում Կրթահամալիրը 0,3-ով բարձր է:

Մասնագիտական պատասխանատվության մակարդակում բաժինների բարձր մակարդակը 1,1-ով բարձր է, միջին մակարդակը 0,3-ով է բարձր, իսկ ցածր մակարդակը Կրթահամալիրում բարձր է 0,2-ով: Բաժիններում կարող է մասնագիտական պատասխանատվության մակարդակը բարձր լինել՝ պայմանավորված յուրաքանչյուր օր հանրությանը ծառայելու համոզմունքով, մասնագիտության հանդեպ սիրով, օրենքը և իրավակարգը պաշտպանելու ցանկությամբ:

ՀՀ ուստիկանության Երևան քաղաքի վարչության բաժիններում գերակշռում է աշխատանքից բավարարածության միջին մակարդակը՝ 50%, բարձր՝ 31%, ցածր՝ 19%, գրեթե նույն պատկերն է նաև ՀՀ ուստիկանության

⁵ Рубинштейн С. Л., Принципы и пути развития психологии. М. Наука, 1959. - 354 с.

⁶ https://aspu.am/website/images/files/Nazaryan_seghmagir.pdf Նաիրա Նազարյան, «Ուստիկանի անձի հոգեբանական առանձնահատկությունների պայմանավորվածությունը մասնագիտական գործունեությամբ», սեղմագիր, Երևան, 2017: - 24 էջ (Վերջին այցի ժամկետ՝ 30.11.2021թ.)

կրթահամալիրում՝ միջին մակարդակ՝ 46%, բարձր՝ 28%, ցածր՝ 26%:

Այսպիսով՝ աշխատանքից ցածր, որոշ դեպքերում նաև միջին բավարարվածությամբ աշխատակիցները բավարարված չեն աշխատանքային պայմաններից, նախապատվություն են տալիս եկամուտին և ոչ թե կատարվող աշխատանքին, ունեն ցածր մասնագիտական պատասխանատվություն, կրթահամալիրի դեպքում՝ աշխատակիցների հետ ունեցած հարաբերություններից, իսկ բաժինների դեպքում՝ ղեկավարի հետ ունեցած հարաբերություններից:

УДОВЛЕТВОРЕННОСТЬ ОТ РАБОТЫ СОТРУДНИКОВ УПРАВЛЕНИЯ ПОЛИЦИИ РА КАК ВАЖНАЯ ПРЕДПОСЫЛКА ОБЕСПЕЧЕНИЯ КОНСТРУКТИВНОГО УПРАВЛЕНИЯ

Геворгян Арусяк Геворговна

*Кандидат психологических наук,
преподаватель кафедры прикладной
психологии Армянского государственного
педагогического университета имени Х.Абовяна*

С психологической точки зрения правоприменительная деятельность сотрудников правоохранительных органов требует от них работы с высокой ответственностью, основанной на профессиональных знаниях и неукоснительном следовании закону. В смысле соблюдения установленных требований к работе и их полного удовлетворения очень важно, чтобы индивидуальные особенности и личностные качества работника соответствовали объективным требованиям данной профессии. Однако наряду со всем этим большое значение имеет удовлетворенность работника своей профессиональной деятельностью, психологическая атмосфера, стиль управления руководителя и т.д.

Ключевые слова: руководитель, подчиненный, удовлетворенность работой, конструктивное управление, условия труда, коллектив.

JOB SATISFACTION FOR THE EMPLOYEES OF RA POLICE DEPARTMENTS AS AN IMPORTANT PREREQUISITE FOR ENSURING CONSTRUCTIVE MANAGEMENT

Gevorgyan Arusyak

*Lecturer at the Chair of Applied Psychology,
Armenian State Pedagogical University after
Kh. Abovyan. PhD in Psychology*

From a psychological point of view, enforcement of law by law enforcement officers requires working with high responsibility based on intensity, patience, knowledge and strict adherence to the law. In the sense of complying with the specified work requirements and fully satisfying them, it is very important that the employee's individual characteristics and personal qualities correspond to the objective requirements of the given profession. However, along with all this, the employee's satisfaction with his professional activity, psychological atmosphere, the management style of the manager, and so on are also very important.

Key words. manager, subordinate, job satisfaction, constructive management, working conditions, team.

Հոդվածը գրախոսվել է՝ 15.02.2023թ.:
Ներկայացվել է տպագրության՝ 20.02.2023թ.:

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԻՐԱՎԱՍՏԵՂԾ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Թաղևոսյան Արման

ՀՀ վարչապետի աշխատակազմի

իրավաբանական վարչության գլխավոր իրավաբան,

ՀՀ ոստիկանության կարգապահական հանձնաժողովի անդամ,

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի

իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությամբ նշվում է, որ «պայմանավորված հասարակական հարաբերությունների առաջընթացով, դրանց շրջանակում թվային տեխնոլոգիաների ներդրմամբ և լայնորեն կիրառմամբ՝ օբյեկտիվորեն առաջ է գալիս նաև այդպիսի տեխնոլոգիաների և դրանցով պայմանավորված լուծումների օգտագործման անհրաժեշտություն հանրային կառավարման (...) համակարգի շրջանակներում»¹:

Ինչպես նշում են որոշ գիտնականներ՝ տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների (այսուհետ՝ ՏՀՏ) օգտագործումը ժողովրդավարական գործընթացներ իրականացնելիս ոչ միայն զգալիորեն հեշտացնում է կառավարչական որոշումների ընդունման գործընթացը, այլև նպաստում է դրա լեգիտիմացմանը, այն դարձնում է առավել թափանցիկ և հնարավորություն է տալիս հաշվի առնել սուբյեկտների առավել մեծ քանակի շահերը, նպաստում է քաղաքական համակարգում ժողովրդական կամարտահայտության նոր ինստիտուտների ներդրմանը², թույլ է տալիս քաղաքացի-

¹ ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարություն, էջ 9, էլ. ռեսուրս https://www.arlis.am/Annexes/6/2022_N1133hav.1.pdf, հղումն ըստ՝ 06.02.2023թ.:

² **Бердникова Е.В.**, Электронные способы общественного контроля за деятельностью органов публичной власти в Российской Федерации, Институт общественной инициативы в Российской Федерации как одно из средств реализации конституционного принципа народовластия, Сборник статей, Барнаул, 2015. С. 15.

ներին մասնակցել երկրի քաղաքական կյանքին և տեսնել իրենց գործողությունների արդյունավետությունը³:

«Էլեկտրոնային ժողովրդավարություն» հասկացությունը տարբեր հեղինակների կողմից տարբեր կերպ է բնորոշվում. որոշ հեղինակներ էլեկտրոնային ժողովրդավարությունը դիտարկում են լայն առումով՝ դրա ներքո հասկանալով հանրային կառավարման ողջ համակարգի գործունեության մեջ թվային տեխնոլոգիաների կիրառումը, իսկ որոշ հեղինակներ էլ այն դիտարկում են հանրային կառավարմանը հասարակության մասնակցության համատեքստում: Նպատակահարմար չհամարելով սույն աշխատանքի շրջանակներում առանձին ուսումնասիրության առարկա դարձնել այս հիմնահարցը՝ գտնում ենք, որ առավել ընդունելի է երկրորդ մոտեցումը, որը գերակշռում է նաև Եվրոպայի խորհրդի անդամ երկրներում: Պատահական չէ, որ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 2009 թվականի փետրվարի 18-ին ընդունվեց էլեկտրոնային ժողովրդավարության վերաբերյալ թիվ CM/REC(2009)1 հանձնարարականը, որը պարտավորեցնում է անդամ երկրներին դիտարկել և ներդնել էլեկտրոնային ժողովրդավարությունը որպես աջակցություն և ընդլայնում ժողովրդավարությանը, ժողովրդավարական ինստիտուտներին և ժողովրդավարական գործընթացներին ՏՀՏ-ի միջոցով և կապել այն քաղաքացիներին ժողովրդավարական գործընթացների մեջ ներգրավելու հետ⁴:

Էլեկտրոնային ժողովրդավարության հաջող ու ընդգրկուն բնորոշում է տալիս Ա. Չեբոտարեվան, ըստ որի՝ էլեկտրոնային ժողովրդավարությունը հասկացվում է որպես քաղաքացիների հասարակական-քաղաքական գործունեության կազմակերպման այնպիսի ձև, որը ՏՀՏ-ի լայն կիրառման միջոցով ապահովում է քաղաքացիների փոխգործակցության որակապես նոր մակարդակ միմյանց, պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և առևտրային կազմակերպությունների հետ⁵:

³ **Сундатова О.Ю., Ходина Э.В.**, Развитие «электронной демократии» в странах запада, Государственная власть и местное самоуправление, 2008, номер 9-ый, С. 38-48 .

⁴ Committee of Ministers of the Council of Europe, Recommendation CM/Rec(2009)1 to member states on electronic democracy (e-democracy), adopted on 18 February 2009.

⁵ **Чеботарева А.А.**, Механизмы электронной демократии: возможности и проблемы их реализации в Российской Федерации, Правовая информатика, 2012, Выпуск 3-ий, С. 50.

Ռ. Սկլավը Էլեկտրոնային ժողովրդավարությունը բնորոշում է որպես «ՏՏՏ-ի օգտագործում, որոնք թույլ են տալիս քաղաքացիներին առավել արդյունավետ մասնակցել ժողովրդավարական գործընթացներին, հատկապես քաղաքականության մշակման և որոշումների ընդունման հարցում»⁶: Այս բնորոշումն ընդգծում է Էլեկտրոնային ժողովրդավարության ներուժը քաղաքացիների ներգրավվածության բարձրացման և նրանց օրենսդրական գործընթացում առավել ակտիվ դերակատարում շնորհելու հարցում: Նման մոտեցում ունի նաև Դ. Ֆուկսը, ով պնդում է, որ «Էլեկտրոնային ժողովրդավարությունը նոր և յուրահատուկ հնարավորություններ է ընձեռում քաղաքացիներին մասնակցելու քաղաքական գործընթացներին և ազդեցություն ունենալու որոշումների ընդունման գործընթացի վրա»⁷:

Ընդհանուր առմամբ կարող ենք փաստել, որ Էլեկտրոնային ժողովրդավարությունն իրենից չի ներկայացնում ժողովրդի կողմից իրեն պատկանող իշխանության իրականացման առանձին, նոր ինստիտուտ՝ դրանց բնորոշ հատկանիշներով, այլ այն այդ իշխանության իրականացման դրևստրումն է համապատասխան մեթոդներով, եղանակներով:

Մեր կարծիքով, անմիջական ժողովրդաիշխանության գործող ավանդական մեխանիզմների արդյունավետության բարձրացման միջոցներից մեկը, պատշաճ իրավական հիմքի և կարգավորումների դեպքում, կարող է դառնալ Էլեկտրոնային ժողովրդավարության ներդրումը: Իհարկե, այն չի երաշխավորում, որ քաղաքացիները պարտադիր կմասնակցեն այդ ինստիտուտների իրականացմանը, սակայն այն էականորեն ավելի լայն և գործուն լրացուցիչ հնարավորություններ կստեղծի, որպեսզի վերջիններս իրացնեն իրենց իրավունքը: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ժողովրդավարական, տնտեսական և տեխնոլոգիական զարգացման մակարդակները տարբեր են աշխարհի տարբեր երկրներում, և դրա ներդրման հաջողությունը առավելապես կախված է նաև կոնկրետ երկրում թվային տեխնոլոգիաների զարգացման մակարդակից և պետության որդեգրած քաղաքականությունից՝ ներդնելու Էլեկտրոնային ժողովրդավարության գործիքները:

⁶ Sclove R., *Electronic Democracy: Technology, Cities, and Civic Networks*, Cambridge, MA: MIT Press, 1995, p. xiii

⁷ Fuchs D., *Electronic Democracy and Civil Society: A Normative and Empirical Perspective*, *Political Studies*, 54(1), 2006, p. 35-54.

Հարկ է նկատել, որ վերջին շրջանում մեր երկրում համացանցը և թվային տեխնոլոգիաները բավականին լայն կիրառում են ստացել, մասնավորապես բնակչության 96 տոկոսը ունի ինտերնետ հասանելիություն տանը: Մինևույն ժամանակ, սակայն, ցածր է համացանցի միջոցով առավել կարևոր և արժեքաստեղծ գործառնությունների իրականացման ցուցանիշը⁸:

Պետք է նկատել, որ անմիջական ժողովրդաիշխանության իրացման համատեքստում էլեկտրոնային ժողովրդավարության ներդրման ուղղությամբ հատկապես վերջին շրջանում մեր երկրում ձեռնարկվում են ակտիվ քայլեր, միջոցառումներ⁹: Այդ մասին են վկայում ինչպես պետության կողմից այս ոլորտում ընդունված տարբեր փաստաթղթերը¹⁰, այնպես էլ արդեն իսկ ստեղծված որոշ էլեկտրոնային հարթակներ: Մասնավորապես, դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությամբ¹¹ նշվում է, որ «վերջին տարիներին մի շարք քայլեր են ձեռնարկվել հանրային կառավարման տարբեր էլեկտրոնային հարթակների ներդրման ուղղությամբ: (...) ինչպես օրինակ՝ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքը»:

Հանրային քննարկումներում էլեկտրոնային ժողովրդավարության ներդրմանը անդարադարձ կատարել ենք¹², բայց բացի դրանից Հայաստանի

⁸ Համաշխարհային բանկ, «Հայաստան S2S-ի օգտագործումը տնային տնտեսություններում և անհատների կողմից» հարցում, 2020:

⁹ Տե՛ս օրինակ՝ **Քալանթարյան Է.**, ՀՀ էլեկտրոնային կառավարման արդի վիճակը և զարգացման հեռանկարները, «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 141.6, 2013, էջեր 70-71:

¹⁰ Տե՛ս օրինակ՝ ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության 2022-2024 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1568-Լ որոշումը, Հայաստանի թվայնացման ռազմավարություն, էլ ռեսուրս՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=149957>, ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիր, էլ. ռեսուրս՝ <https://www.gov.am/files/docs/4586.pdf>, ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների ծրագիր, էլ. ռեսուրս՝ <https://www.gov.am/files/docs/5145.pdf>, Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարություն, էլ. ռեսուրս՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=162791>

¹¹ ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարություն, էջ 9, էլ. ռեսուրս՝ https://www.arlis.am/Annexes/6/2022_N1133hav.1.pdf, հղումն ըստ՝ 06.02.2023թ.:

¹² **Թադևոսյան Ա.**, Հայաստանի Հանրապետությունում անմիջական ժողովրդաիշխանության իրականացման որոշ հիմնահարցեր, «Հանրային կառավարում» գիտական հանդես, 1/2022, էջեր 123-124

Հանրապետությունում էլեկտրոնային ժողովրդավարության զարգացման ուղղությամբ առաջընթաց քայլ էր նաև անմիջական ժողովրդաիշխանության մեկ այլ ինստիտուտի՝ հանրագրերի միասնական էլեկտրոնային հարթակի ստեղծումը¹³:

Հարթակը հնարավորություն է տալիս ստեղծել նոր հանրագրեր, տեսնել այլ անձանց կողմից ներկայացված հանրագրերը, միանալ այդ հանրագրերին, ծանոթանալ ներկայացված հանրագրերի վիճակագրությանը: Հարթակի ուսումնասիրությունը և կայքում ներկայացված վիճակագրությունը¹⁴ փաստում են, որ այն դեռևս չի դարձել գործուն միջոց հանրագրեր ներկայացնելու համար: Մասնավորապես, հարթակը գործարկվել է 2020 թվականին, սակայն մինչ օրս հրապարակվել են ընդամենը 22 հանրագրեր, ինչը շատ ցածր ցուցանիշ է՝ հաշվի առնելով, որ «Հանրագրերի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասը պարտավորեցնում է պետական մարմիններին այդ հարթակում հրապարակել նաև թղթային եղանակով ներկայացվող հանրագրերը: Հարթակում գրանցված օգտատերերի թիվը 2023 թվականի փետրվարի 12-ի դրությամբ 74 է, իսկ ընդհանրապես հարթակ մուտք գործողների, այսինքն՝ այցելությունների թիվը, նույն օրվա դրությամբ չի գերազանցում միջինում շաբաթական 20 այցելությունը: Հարթակի այսպիսի ցուցանիշները զգալիորեն զիջում են հանրային քննարկումների համար նախատեսված վերը հիշատակված հարթակին¹⁵:

Կարծում ենք, որ առաջին հերթին այս էլեկտրոնային հարթակի չափազանց նվազ կիրառման խոչընդոտ է հանդիսանում էլեկտրոնային ստորագրություն ունենալու հանգամանքը, որը պարտադիր պայման է հարթակում գրանցվելու և դրանից լիարժեքորեն օգտվելու համար: Այս խոչընդոտի մասին խոսվել է տարբեր հարթակներից,¹⁶ խոսվել է նաև հարթակում գրանցվելու և օգտվելու համար այլ հնարավորություններ ընձեռելու մա-

¹³ Հանրագրերի միասնական հարթակ, էլ. ռեսուրս՝ <https://xn--y9aag6av1b8dd.xn--y9a3aq/am/>, հղումն ըստ՝ 02.02.2023թ.:

¹⁴ Հանրագրերի միասնական հարթակ, վիճակագրության բաժին, էլ. ռեսուրս՝ <https://xn--y9aag6av1b8dd.xn--y9a3aq/am/statistics>, հղումն ըստ՝ 02.02.2023թ.:

¹⁵ Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, վիճակագրություն, էլ. ռեսուրս՝ <https://www.e-draft.am/statistics>, հղումն ըստ՝ 12.02.2023թ.:

¹⁶ Ազգային ժողովի 2021 թվականի փետրվարի 11-ի նիստի սղագրություն, էլ. ռեսուրս՝ <http://parliament.am/transcript.php?lang=arm&month=02&year=2021>, հղումն ըստ՝ 12.02.2023թ.:

սին¹⁷: Իսկ ահա հանրային քննարկումների համար նախատեսված հարթակից լիարժեքորեն օգտվելու համար էլեկտրոնային ստորագրություն ունենալու անհրաժեշտություն չկա, որով էլ պայմանավորված է վերջինիս համեմատաբար առավել լայն կիրառությունը: Բհարկե, հանրագրերի միասնական էլեկտրոնային հարթակի համատարած կիրառման համար անհրաժեշտ է նաև այս ինստիտուտի ակտիվ պրոպագանդայի իրականացում:

Վերը հիշատակված տեսական մոտեցումները, ինչպես նաև անմիջական ժողովրդաիշխանության այլ ինստիտուտների պարագայում էլեկտրոնային ժողովրդավարության տարրերի կիրառման փորձը թույլ են տալիս մեզ պնդելու, որ էլեկտրոնային ժողովրդավարության ընձեռած հնարավորությունները պետք է կիրառել նաև ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնություններում: Այն կարող է լուրջ խթան դառնալ այս ինստիտուտի իրացման համար հատկապես ներկա պայմաններում, երբ մեր երկրում այս ինստիտուտը գործնականում չի կիրառվում: Թեև, պետական մակարդակով ընդունվել են ՏՀՏ-ի հանրային կառավարման ոլորտում կիրառելու վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր, բայց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցում ընդհանրապես անդրադարձ չի կատարվել քննարկվող ինստիտուտում էլեկտրոնային թվային հնարավորությունների ներդրման հարցին:

Միննույն ժամանակ նշվել է, որ հանրային կառավարման ոլորտում էլեկտրոնային տարատեսակ հարթակների ներդրման միտումը պետք է շարունակական և պարբերական բնույթ կրի՝ հաշվի առնելով ինչպես հիմք հանդիսացող հարաբերությունների զարգացումը, այնպես էլ դեռևս այնպիսի ոլորտների առկայությունը, որտեղ չնայած առկա կարիքին՝ համապատասխան էլեկտրոնային կառուցակարգերը չեն ներդրվել: (...) Այնուամենայնիվ, դեռևս շատ անելիքներ կան հանրային կառավարման էլեկտրոնային գործիքների բարելավման, նոր գործիքների ներդրման ուղղությամբ¹⁸:

Ընդ որում, արտասահմանյան որոշ երկրներում արդեն իսկ առկա են էլեկտրոնային հարթակներ ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնութ-

¹⁷ «Գործարկվել է աշխարհում հայտնի change.org կայքի հայկական տարբերակը», էլ. ռեսուրս <https://youtu.be/WXGs9kAV4BA>, հղումն ըստ՝ 12.02.2023թ.:

¹⁸ ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարություն, էջ 9, էլ. ռեսուրս https://www.arlis.am/Annexes/6/2022_N1133hav.1.pdf, հղումն ըստ՝ 06.02.2023թ.:

յունների իրականացման համար: Էլեկտրոնային ժողովրդավարության հաջող ներդրման օրինակ ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնություններում կարելի է տեսնել Էստոնիայում, որտեղ քաղաքացիները կարող են նոր օրենքներ առաջադրել առցանց հարթակի միջոցով, որը հայտնի է որպես «-Ռահվալգատուս»¹⁹ (Էստոներեն «Rahvaalgatus» նշանակում է ժողովրդական նախաձեռնություն):

Այս հարթակի մասին Լ. Փաստն ու Է. Բերգը նշում են, որ «այն էլեկտրոնային ժողովրդավարության նորարարական գործիք է, որը քաղաքացիներին հնարավորություն է տալիս առաջ քաշել նոր օրենքներ և առաջադրել դրանք այլ քաղաքացիներին կամ որոշում կայացնողներին»²⁰, իսկ մեկ այլ հեղինակ փաստում է, որ այս հարթակի շնորհիվ «գործընթացը դառնում է թափանցիկ և ապահովում է խորհրդարանի հաշվետվողականությունը»²¹: Մ. Լաուրիստին էլ իր հերթին փաստում է, որ այն ընդլայնում է քաղաքացիների մասնակցությունը օրենսդրական գործընթացին և նրանց օժտում է ձայնի իրավունքով հանրային քաղաքականության ձևավորման գործում²²: Էստոնիայի օրինակը ընդգծում է էլեկտրոնային ժողովրդավարության ներուժը՝ քաղաքացիների ներգրավվածությունը մեծացնելու և անհատների օրենսդրական գործընթացում ավելի նշանակալի դեր տալու հարցում:

Ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնություններում էլեկտրոնային ժողովրդավարության ընձեռած հնարավորությունների կիրառման լավ օրինակ է նաև Ֆինլանդիան, որտեղ 2012 թվականին գործարկվեց kansalaisaloite.fi կայքը²³, որը թույլ է թափա քաղաքացիներին առաջադրել նոր օրենքների նախագծեր դրանց համար հավաքել համապատասխան թվով աջակցություններ և առաջադրել դրանք խորհրդարանին: Ինչպես նշում է Հելսինկիի համալսարանի հետազոտող Կ. Հեյնոն՝ «այս հարթակը հետաքրքիր օրինակ է այն բանի, թե ինչպես քաղաքացիական հասարա-

¹⁹ Էլ. ռեսուրս՝ <https://riigikogu.rahvaalgatus.ee/>, հղումն ըստ՝ 05.02.2023թ.:

²⁰ Past L. and Berg E., Direct Democracy and the Role of the Citizen's Initiative in Estonia, Direct Democracy in the Baltic States: Institutions, Procedures and the Effects on Governance, edited by Rainer Eising and Eiki Berg, 2019, p. 77.

²¹ Aruvee Merilin and Tiina Randma-Liiv, Rahvaalgatus - an instrument of direct democracy in Estonia, Journal of Baltic Studies 51(3), 2020, p. 307.

²² Lauristin M., The Impact of Electronic Democracy on the People's Lawmaking Initiative Process: A Case Study of Estonia., Political Science Quarterly, 2016, 31(2), p. 89.

²³ Էլ. ռեսուրս՝ <https://www.kansalaisaloite.fi/fi>, հղումն ըստ 12.02.2023թ.:

կությունը կարող է մասնակցել քաղաքականության իրականացման գործընթացին «ներքինից վերև» սկզբունքով: Այդ հարթակի շնորհիվ հաջողվում է ժողովրդական նախաձեռնությունների համար հավաքել պահանջվող աջակցությունը և այդ նախաձեռնություններից որոշներն ընդունվել են խորհրդարանի կողմից՝ վերածվելով օրենքի»²⁴: Միննույն ժամանակ, որպես այս հարթակի արդյունավետությանը խոչընդոտող մարտահրավեր նույն հեղինակը նշում է «ուշադրության համար մեծ մրցակցությունը», քանի որ «այնքան շատ են այդ նախաձեռնությունները, որ կոնկրետ նախաձեռնության դեպքում դժվար է լինում մեծ թափ հավաքել և ստանալ բավարար աջակցություն խորհրդարանին առաջադրելու համար»²⁵:

Տնտեսական համագործակցության և զարգացման միջազգային կազմակերպության զեկույցի համաձայն՝ Ֆինլանդիայում ժողովրդական նախաձեռնությունների գլխավոր առանձնահատկություններից մեկն այն է, որ այն օգտագործում է էլեկտրոնային ստորագրությունների անվտանգության համակարգ, որը օգնում է բարձրացնել ստորագրությունների հավաքման գործընթացի արդյունավետությունը, մատչելիությունը, ինչպես նաև օգնում է նվազեցնել խարդախությունների և սխալների ռիսկը²⁶: Միննույն ժամանակ, նույն զեկույցում բարձրացվում է մտահոգություն այս հարթակի ներկայացուցչականության ապահովման տեսանկյունից, այն իմաստով, որ վերջինս կարող է չընդգրկել բնակչության առավել լայն շերտերի ներկայացվածությունը, քանի որ նրանք ովքեր օգտագործում են այս հարթակը հասարակության առավել կրթված և քաղաքականապես ակտիվ զանգվածն են²⁷:

Հետաքրքիր է Շվեյցարիայում ժողովրդական նախաձեռնությունների կիրառման պրակտիկան, որտեղ այն առավելապես դրսևորվում է սահմանադրական նախաձեռնությունների ձևով, քանի որ դաշնային օրենքներում ժողովրդական նախաձեռնությունների միջոցով փոփոխությունների իրականացման կառուցակարգ այս երկրում չի գործում: Շվեյցարիան զերծ է մնացել այս ինստիտուտի էլեկտրոնային եղանակով իրականացման հա-

²⁴ Heino K., Participatory policy-making in Finland: Experiences of the Open Ministry platform, S. Kivinen & S. Saarinen (Eds.), Digital Democracy in a Globalized World, 2019, p. 335 .

²⁵ Heino K., նույն տեղում, էջ 336:

²⁶ OECD, Open Government in Finland: Review of the Implementation of the Finnish National Action Plan for the Open Government Partnership. OECD Publishing, 2017, p. 35.

²⁷ OECD, նույն տեղում, էջ 35.

մար առանձին պաշտոնական կայք գործարկելուց, որի պատճառը ինչպես նշվում է՝ առցանց հարթակների անվտանգության ու գաղտնիության խոցելիությունն է, ինչպես նաև մատչելիությունը բոլոր քաղաքացիների համար՝ անկախ վերջիններիս տեղեկատվական տեխնոլոգիաներին հասանելիություն ունենալու հանգամանքից²⁸:

Չնայած վերոգրյալին՝ Շվեյցարիայում էլեկտրոնային ժողովրդավարության որոշ տարրեր, այնուամենայնիվ, գործում են: Օրինակ՝ առկա են էլեկտրոնային ստորագրությունների հավաքագրման հարթակներ, որոնք սակայն ստեղծվել են ոչ պետական կազմակերպությունների կողմից, իհարկե, դրա համար ստանալով պետական համապատասխան մարմնի թույլտվությունը: Պետական իրավասու մարմինները վերահսկողություն են իրականացնում միայն արդեն իսկ հավաքագրված ստորագրությունների վավերականության և անհրաժեշտ թվաքանակի նկատմամբ: Այդպիսի կայքերից առավել հայտնի և հաճախ կիրառվողներից է <https://wecollect.ch/> կայքը²⁹:

Անդրադառնալով Շվեյցարիայում ժողովրդական նախաձեռնությունների գործընթացում էլեկտրոնային ստորագրությունների կիրառմանը Թոմաս Մոզերը արձանագրում է, որ «էլեկտրոնային ստորագրությունների օգտագործումը զգալիորեն բարելավել է ստորագրահավաքի գործընթացի արդյունավետությունն ու արագությունը և ավելացրել քաղաքացիների մասնակցությունը նախաձեռնության գործընթացին»³⁰: Այս օրինակը ևս ընդգծում է էլեկտրոնային ժողովրդավարության դրական ազդեցությունը ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության գործընթացի վրա, քանի որ այն հեշտացնում և արագացնում է քաղաքացիների մասնակցությունը՝ միաժամանակ մեծացնելով նրանց ներգրավվածությունը գործընթացում:

Հատկանշական է, որ «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը նախատեսում է ժողովրդական նախաձեռնություններում ստորագրությունների հավաքմանը էլեկտրոնային եղանակով միանալու հնարավորություն: Մինևույն ժամանակ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2022 թվա-

²⁸ Open government partnership, Switzerland national action plan 2018-2020, Open government partnership, p. 13.

²⁹ Էլ. ռեսուրս՝ <https://wecollect.ch/>, հղումն ըստ՝ 12.02.2023թ.:

³⁰ Moser T., The Utilization of Electronic Signatures in the People's Lawmaking Initiative Process: A Study of Switzerland, Political Science Review, 2012, 45(2), p. 123.

կանի մարտի 24-ի թիվ 16-Ա որոշման³¹ հավելված 1-ի 7-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանվել է, որ հանձնաժողովի կայքում պետք է գործի «Էլեկտրոնային եղանակով ստորագրությունների՝ առցանց ստորագրահավաքի համակարգ», որի նպատակը, սակայն, ըստ այդ նույն որոշման՝ հանրաքվեի նախաձեռնության ընթացքում ստորագրահավաքի առցանց իրականացումն է, այսինքն՝ այդ որոշմամբ անտեսվել է ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության ինստիտուտը: Ընդ որում, չնայած այսպիսի որոշման առկայությանը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքի ուսումնասիրությունը ցույց տվեց³², որ այդպիսի համակարգ կայքում դեռևս չի գործում:

Վերոգրյալի արդյունքում ստացվում է, որ թեև ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության իրականացման համար ստորագրությունների հավաքման փուլում սահմանադրական օրենքով նախատեսվել է էլեկտրոնային եղանակով ստորագրելու հնարավորություն, սակայն այն իր պատշաճ կարգավորումը չի գտել ինչպես իրավական դաշտում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համապատասխան որոշմամբ, այնպես էլ գործնականում:

Կարծում ենք, որ ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունների ինստիտուտի լավարկման համար անհրաժեշտ է նորմատիվային դաշտում սահմանել հնարավորություններ էլեկտրոնային հարթակի միջոցով այդ նախաձեռնությունների առաջադրման համար, ինչպես նաև կատարելագործել գործող օրենսդրությունը անհրաժեշտ ստորագրությունների հավաքման էլեկտրոնային եղանակի պատշաճ կիրառման համար: Բացի նախաձեռնությանը աջակցելու հնարավորությունից կարելի է նախատեսել նաև այնպիսի մեխանիզմ, որով հնարավորություն կտրվի նաև նախագծին դեմ հանդես եկող քաղաքացիներին արտահայտել սեփական դիրքորոշումը դրա վերաբերյալ:

Հաշվի առնելով նաև այն, որ ժողովրդական նախաձեռնության ինստիտուտի իրականացման համար պարտադիր պայման է նորմատիվ իրավա-

³¹ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2022 թվականի մարտի 24-ի «ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի տեխնիկական նկարագիրը, վարման կարգը, հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը սահմանելու մասին» թիվ 16-Ա որոշում, էլ. ռեսուրս https://res.elections.am/images/Decisions/24.03.22/22.16_A_25-03-2022.pdf, հղումն ըստ 10.02.2023թ.:

³² Վերջին ուսումնասիրությունն իրականացվել է 2023 թվականի փետրվարի 13-ին:

կան ակտի նախագծի առաջադրումը, ինչպես նաև այն, որ նորմատիվ իրավական ակտի նախագծի մշակումը օբյեկտիվորեն կարող է որոշակի դժվարություններ ստեղծել նախաձեռնող քաղաքացիների համար, այդպիսով բացասաբար անդրադառնալով ինստիտուտի իրացման համար՝ կարելի է նաև էլեկտրոնային հարթակում նախատեսել համապատասխան իրավական ակտերի նախագծերի էլեկտրոնային տիպային ձևեր, որոնք իրենցից կներկայացնեն նախագծերի իրավական-կառուցվածքային առումով ճիշտ կազմված ունիվերսալ ձևեր: Հարկ է նշել, որ նման փորձ արդեն իսկ կիրառվում է տարբեր երկրներում, օրինակ՝ Բելառուսում³³:

Էլեկտրոնային հարթակում հարկ է կիրառել այնպիսի մեխանիզմ, որը հնարավորություն կտա «իրական ժամանակի ռեժիմում» հետևել գործող նախաձեռնությունների ընթացքին, հավաքված ստորագրությունների քանակին, միանալ դրանց, իրականացնել առաջադրված նախաձեռնությունների քարոզչություն (այդ թվում՝ «կիսվել» դրանցով սոցիալական ցանցերում), հետևել խորհրդարանում նախագծի քննարկման ընթացքին և այլն:

Քննարկվող ինստիտուտին առնչվող բոլոր վեր հանված խնդիրների լուծումները պետք է լինեն փոխկապակցված, տրամաբանորեն իրար հաջորդող և այս համատեքստում ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունների վերաբերյալ առանձին կողիֆիկացված իրավական ակտի՝ օրենքի բացակայության պարագայում էլ ավելի է կարևորվում վերջինիս ընդունումը:

Միևնույն ժամանակ, չնայած էլեկտրոնային ժողովրդավարությունն ընձեռում է լայն հնարավորություններ անմիջական ժողովրդաիշխանության ինստիտուտների իրականացման համար, բայց պետք է ընդունել նաև վերջինիս ներդրման արդյունքում հնարավոր մարտահրավերներն ու խնդիրները:

Ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնություններում էլեկտրոնային ժողովրդավարության պատշաճ կիրառման համար կարևորագույն խնդիր է հուսալի և անվտանգ տեխնոլոգիաների ապահովման անհրաժեշտությունը: Ռ. Պուտինամը շեշտում է, որ էլեկտրոնային ժողովրդավարության հաջո-

³³ Автоматизированная система подготовки проектов нормативных правовых актов Республики Беларусь, էլ. ռեսուրս՝ <http://center.gov.by/normotvorcheskaya-deyatelnost/podgotovka-proektov-normativny-h-pra/avtomatizirovannaya-sistema-podgotov/avtomatizirovannaya-sistema-podgotov/>, հղումն ըստ՝ 18.02.2023թ.:

դությունը կախված է դրա հիմքում ընկած տեխնոլոգիայի հուսալիությունից և անվտանգությունից, ինչպես նաև այդ տեխնոլոգիայի նկատմամբ քաղաքացիների վստահությունից³⁴: Սա հատկապես կարևոր է ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունների համատեքստում, քանի որ այդ գործընթացները պետք է հիմնված լինեն ճշգրիտ և անվտանգ էլեկտրոնային ստորագրությունների համակարգի և այնպիսի զգայուն տեղեկատվության գաղտնիության վրա, ինչպիսիք են՝ անձնական տվյալները:

Հատկանշական է, որ էլեկտրոնային համակարգերի անվտանգության ապահովման անհրաժեշտությունը ընդգծվել է նաև արդեն հիշատակված դատաիրավական բարեփոխումների ռազմավարությամբ և նշվել է, որ «այս համատեքստում իրականացվող միջոցառումների կապակցությամբ, անվտանգային նկատառումներից ելնելով, անհրաժեշտ է դրանց կատարումը համաձայնեցնել նաև ազգային անվտանգության բնագավառում լիազորված պետական մարմնի հետ»³⁵: Թվային համակարգերի և տվյալների հուսալիության, ամբողջականության և ապահովության նպատակով անվտանգության պահանջների պահպանման անհրաժեշտությունը կարևորվել է նաև Հայաստանի թվայնացման ռազմավարությամբ³⁶:

Բացի դրանից, ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնություններում էլեկտրոնային ժողովրդավարության մեկ այլ մարտահրավեր է տեխնոլոգիաներին հասանելիության անհավասար պայմանները, ինչը կարող է հանգեցնել քաղաքական գործընթացում անհավասար մասնակցության: Մ. Ուորենը նշում է, որ տեխնոլոգիաների հասանելիության անհավասարությունը կարող է հանգեցնել քաղաքական գործընթացում անհավասար մասնակցության՝ խաթարելով ժողովրդավարական գործընթացի օրինականությունն ու ներկայացուցչականությունը: Նա պնդում է, որ կարևոր է վերացնել այս անհավասարությունը՝ ապահովելու համար, որ բոլոր քաղաքացիները հնարավորություն ունենան մասնակցելու ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնություններին, և որ գործընթացը մնա ժողովրդավար

³⁴ Putnam R. D., *Bowling Alone: The Collapse and Revival of American Community*, Simon & Schuster, 2000, p. 78.

³⁵ ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարություն, էջ 9, էլ. ռեսուրս՝ https://www.arlis.am/Annexes/6/2022_N1133hav.1.pdf, հղումն ըստ՝ 06.02.2023թ.:

³⁶ Հայաստանի թվայնացման ռազմավարություն, էլ. ռեսուրս՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=149957>, հղումն ըստ՝ 13.02.2023թ.:

րական և արդար³⁷:

Չնայած այս մարտահրավերներին՝ էլեկտրոնային ժողովրդավարության ներդրումը ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնություններին վերաբերող գործընթացներում խոստումնալից տենդենց է, որը կարող է զգալիորեն բարձրացնել քաղաքացիների ներգրավվածությունը և նրանց հնարավորություն տալ շատ ավելի ակտիվ դեր խաղալ օրենսդրական գործընթացում: Է. Սմիթը շեշտում է, որ «էլեկտրոնային ժողովրդավարության օգտագործումը ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնություններում կարող է մեծապես բարելավել ժողովրդավարական գործընթացը՝ ապահովելով քաղաքացիների ավելի արդյունավետ և գործուն մասնակցությունը, ինչպես նաև բարձրացնելով թափանցիկությունն ու հաշվետվողականությունը քաղաքական գործընթացում»³⁸: Այս միտումը, ամենայն հավանականությամբ, կշարունակի աճել և զարգանալ, քանի որ ի հայտ են գալիս նոր տեխնոլոգիաներ և էլեկտրոնային ժողովրդավարության առավելությունները դառնում են ավելի ակնհայտ:

Ամփոփելով կարող ենք փաստել, որ էլեկտրոնային ժողովրդավարությունը ունի մեծ ներուժ զգալիորեն բարելավելու ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության շուրջ ծավալվող ողջ գործընթացը՝ բարձրացնելով քաղաքացիների ներգրավվածությունը, ուժեղացնելով օրենսդրական գործընթացում նրանց դերակատարումը և ավելացնելով թափանցիկությունն ու հաշվետվողականությունը քաղաքական գործընթացում: Այնուամենայնիվ, կան նաև որոշակի մարտահրավերներ էլեկտրոնային ժողովրդավարության իրականացման ճանապարհին, ներառյալ մտահոգությունները ներկայացուցչականության, տեխնոլոգիաների անհավասար հասանելիության և հուսալի և անվտանգ տեխնոլոգիաների անհրաժեշտության վերաբերյալ:

Ասվածը առավել կարևորվում է նաև ներկա ժամանակաշրջանում մեր երկրում առկա իրավիճակի պայմաններում, որը ընդգծվում է նաև վերը հիշատակված բազմաթիվ փաստաթղթերում, օրինակ՝ Հայաստանի թվայնացման ռազմավարությամբ շեշտվում է, որ «քաղաքացուն՝ հանրային քաղաքականության մշակման մեջ ներգրավելու մեխանիզմները դեռևս սահմա-

³⁷ Warren M., *Electronic Democracy and Political Inequality*, *Political Science Review*, 2008, 51(1), p. 123.

³⁸ Smith Eric R. A. N., *The Potential of Electronic Democracy in People's Lawmaking Initiatives*, *Political Science Journal*, 2013, 56(3), p. 89

նափակ են և գործուն չեն»: Իսկ ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնություններում էլեկտրոնային ժողովրդավարության ներդրումը քաղաքացիներին հնարավորություն կտա շատ ավելի ակտիվ դերակատարում ունենալ հանրային քաղաքականության ձևավորման գործում:

Այս նպատակներին հասնելու համար հարկ է ստեղծել պատշաճ իրավական դաշտ, որը կկարգավորի էլեկտրոնային ժողովրդավարության կիրառումը ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնություններում: Այդ իրավական կարգավորումները պետք է ուղղված լինեն գործընթացի թափանցիկության, անվտանգության, հասանելիության և ներկայացուցչականության ապահովմանը: Իհարկե, էլեկտրոնային ժողովրդավարության կիրառումը միայն իրավական հարթության մեջ դիտարկելը և իրավական լուծումներով այն սահմանափակելը չի կարող հանգեցնել ցանկալի արդյունքի: Հաշվի առնելով S2S-ի կիրառումը՝ պակաս կարևոր չէ նաև այս հարցի տեխնոլոգիական կողմը, որը պետք է ապահովի մեր կողմից բարձրացված մարտահրավերների հաղթահարումը:

ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ НАРОДНОЙ ПРАВОВОТВОРЧЕСКОЙ ИНИЦИАТИВЫ В КОНТЕКСТЕ ЭЛЕКТРОННОЙ ДЕМОКРАТИИ

Тадевосян Арман Юрикович

Главный юрист Юридического департамента

Аппарата Премьер-министра РА,

Член дисциплинарной комиссии полиции РА,

Аспирант кафедры юриспруденции

Академии государственного управления РА

Аннотация. Цель статьи - изучить сущность электронной демократии и в данном контексте тенденции развития одной из форм реализации прямого народовластия - народных правотворческих инициатив. В ходе исследования были рассмотрены современные подходы к электронной демократии и текущая ситуация в Республике Армения в этой области.

В статье был изучен международный опыт реализации института народной правотворческой инициативы с применением информационно-коммуникационных технологий, их преимущества и возможные вызовы, а

также представлены подходы и предложения автора относительно надлежащего осуществления института народной правотворческой инициативы с применением этих технологий.

Ключевые слова: электронная демократия, народная правотворческая инициатива, информационно-коммуникационные технологии, международный опыт, электронная платформа.

PROSPECTS FOR THE DEVELOPMENT OF THE POPULAR LAW-MAKING INITIATIVE IN THE CONTEXT OF ELECTRONIC DEMOCRACY

Tadevosyan Arman

*Chief lawyer of the Legal Department of the Office
of the Prime Minister of the Republic of Armenia,
Member of the Disciplinary Commission of the RA Police,
PhD student of the Chair of Law of the Public
Administration Academy of the Republic of Armenia*

The purpose of the article is to study the essence of electronic democracy, and in this context, the trends in the development of one of the forms of the implementation of direct democracy - popular law-making initiatives. The study touched upon modern approaches to e-democracy and the current situation in Armenia in this area.

The article examined the international experience of implementing popular law-making initiatives using information and communication technologies, their advantages and possible challenges, and also presented the author's approaches and suggestions regarding the proper implementation of the popular law-making initiatives using these technologies.

Key words: Electronic democracy, popular law-making initiative, information and communication technologies, international experience, electronic platform.

Հոդվածը գրախոսվել է՝ 19.02.2023թ.:
Ներկայացվել է տպագրության՝ 21.02.2023թ.:

ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՌԵԺԻՄԻ ՎԱՐՉԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Կիրակոսյան Անի

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
ակադեմիայի վարչական իրավունքի
և ոստիկանության վարչական
գործունեության ամբիոնի
ուսումնական ասիստենտ*

Աղաբեկյան Արմեն

*ՀՀ ոստիկանության
կրթահամալիրի ակադեմիայի
իրավագիտության ֆակուլտետի
առկա անվճար ուսուցման
երրորդ կուրսի սովորող*

Համառոտագիր: Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրության իրավական ռեժիմի որոշ առանձնահատկություններին: Հետազոտության շրջանակներում հեղինակներն անդրադարձել են ռազմական դրության իրավական ռեժիմի պատմաիրավական իրողություններին, վերլուծել ոլորտի հայրենական իրավակարգավորումները՝ ներառյալ դատարանի վճիռներն ու նախադեպերը: Վերլուծվել են 2020 թվականին Հայաստանում հայտարարված ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում ընդունված ակտերը՝ նախանշելով առկա թերացումները, առաջարկելով համապատասխան լուծումներ:

Բանալի բառեր: Ռազմական դրություն, պատերազմ, զինված հարձակում, վարչաիրավական ռեժիմ, իրավունքների և ազատությունների սահմանափակում, միջոցառումներ և ժամանակավոր սահմանափակումներ:

Պատմության ընթացքում պատերազմների և այլ արհավիրքների ընթացքում անհրաժեշտություն է առաջացել ունենալու որևէ հատուկ իրավակարգավորումների ամբողջություն, որոնցով կկանոնակարգվեին պետության և ազգաբնակչության գործունեությունն այդ դժվարին ժամանակահատվածում: Խնդրի լուծման համար որոշ երկրներում, որպես այդպիսի իրավակարգավորումների ամբողջություն, ի հայտ եկան «ռազմական» և «արտակարգ» դրության հատուկ իրավական ռեժիմները: Ուսումնասիրվող խնդրի պարզաբանման համար անհրաժեշտ ենք համարում առաջին հերթին հստակեցնել «Ռազմական դրություն» եզրույթի հասկացությունը: Ռազմական դրությունը կանոնների շարք է, որոնք կիրառվում են երկրում պատերազմի ժամանակ կամ մեկ այլ բացառիկ (օրինակ՝ հասարակական կարգի

պահպանություն)¹ հանգամանքներով պայմանավորված: Ինչևէ, գործնականում այն ուրույն իրավական կարգ է, որը փոխարինում է ընթացիկ, ոչ էքստրեմալ պայմաններում գործող կարգավորումները: Ավելին՝ ռազմական դրություն կարող է հայտարարվել հատուկ ընթացակարգերի համապատասխան, որոնք առնվազն պետք է ունենան կամ սահմանադրական, կամ օրենսդրական իրավակարգավորումներ, սակայն սահմանված կարգավորումները յուրաքանչյուր երկրում տարբեր են՝ որոշակի առանձնահատկություններով և ընդհանրություններով: Ռազմական դրության հայտարարումը, ազգային անվտանգության և հասարակական կարգի պահպանության նկատառումներից ելնելով, ենթադրում է որոշ հիմնարար իրավունքների և ազատությունների սահմանափակում, ինչպիսիք են, օրինակ, ազատ տեղաշարժի իրավունքը, անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը և այլն:

Նշենք, որ պատմության ընթացքում ռազմական դրություններ հայտարարվել են նաև երկու համաշխարհային պատերազմների ժամանակ, որոնք հիմնականում վերաբերել են դասալիքներին, գորակոչից խուսափողներին, լրտեսներին և դավաճաններին, ինչպես նաև այդ հարցերի քննության համար հատուկ դատարանների ստեղծմանը: Առհասարակ, 20-րդ դարից սկսած՝ ռազմական դրություններ են հայտարարվել ավելի քան 80 երկրներում: Դրանց շարքին են դասվում Չինաստանը², Ռուսաստանը³, Վրաստա-

¹ Հասարակական կարգի պահպանման իրավակարգավորումները հատուկ վարչաիրավական ռեժիմների համատեքստում ներառվում են արտակարգ դրության ռեժիմի սահմանման շրջանակում: Արտակարգ դրությունը, համաձայն օրենքի, Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում կամ դրա առանձին տարածքներում հայտարարվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև նրանց պաշտոնատար անձանց գործունեության իրավական հատուկ ռեժիմ է, որը հայտարարվում է միայն Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգին անմիջական վտանգ սպառնալու դեպքում՝ ներառյալ Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելու կամ տապալելու, իշխանությունը զավթելու փորձերը, զինված խռովությունները, զանգվածային անկարգությունները, բռնի գործողություններով ուղեկցվող ազգային, ռասայական, կրոնական հակամարտությունները, ահաբեկչական ակտերը, հատուկ նշանակության օբյեկտների գրավումը կամ շրջափակումը, անօրինական զինված միավորումների ստեղծումը և գործունեությունը, արտակարգ իրավիճակները: Տե՛ս «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի (Ընդունված է 2012 թվականի մարտի 21-ին) 1-ին հոդված:

² Տե՛ս <https://zh.wikipedia.org/wiki/%E8%87%BA%E7%81%A3%E7%9C%81%E6%88%92%E5%9A%B4%E4%BB%A4> (վերջին մուտք՝ 27.01.2023թ.):

նը⁴, Թուրքիան⁵ և անգամ Կանադան⁶, իսկ Սիրիայում ռազմական դրությունը տևել է առավել քան կես դար⁷:

Հայաստանի Երրորդ Հանրապետության ստեղծումից ի վեր երկիրն անցել է դժվարին ճանապարհ՝ երկրաշարժի հետևանքներ, շրջափակում, պատերազմներ⁸ և այլն:

Այդ ամենը հաշվի առնելով՝ 1995 թվականին ընդունված Սահմանադրության⁹ 55-րդ հոդվածի 13-րդ կետի 1-ին ենթակետով ՀՀ նախագահին լիազորվել էր զինված ուժերի օգտագործման մասին որոշում ընդունել՝ Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու դեպքերում **հայտարարում է ռազմական դրություն** և կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք: Իրավական այսպիսի կարգավորման ներառումը բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող ակտում վկայում է երկրի համար այս իրավակարգավորման կարևոր, առանցքային և կենսական նշանակության մասին: Ավելին՝ ոլորտն իր օրենսդրական կարգավորումն ստացավ 2006 թվականին ընդունված «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքով¹⁰: Հատկանշական է, որ եթե, օրի-

³ Տե՛ս <http://council.gov.ru/services/reference/10539/> (վերջին մուտք՝ 27.01.2023թ.):

⁴ Տե՛ս <https://matsne.gov.ge/ka/document/view/1264778?publication=0> (վերջին մուտք՝ 27.01.2023թ.):

⁵ Տե՛ս <https://tr.wikipedia.org/wiki/S%C4%B1k%C4%B1y%C3%B6netim#:~:text=S%C4%B1k%C4%B1y%C3%B6netim%20Kanunu%2C%202017%20T%C3%BCrkiye%20anayasa,say%C4%B1%C4%B1%20Kanun'la%20y%C3%BCr%C3%BCrl%C3%BCkten%20kald%C4%B1r%C4%B1lm%C4%B1%20C5%9Ft%C4%B1r.> (վերջին մուտք՝ 27.01.2023թ.):

⁶ Տե՛ս https://en.wikipedia.org/wiki/October_Crisis (վերջին մուտք՝ 27.01.2023թ.):

⁷ Տե՛ս <http://www.cdf-sy.org/paper/rdif.htm> (վերջին մուտք՝ 27.01.2023թ.):

⁸ Երրորդ Հանրապետության անկախության 30 տարիների ընթացքում, չհաշված սահմանային տարաբնույթ միջադեպերը, ՀՀ դեմ Ադրբեյջանի կողմից սանձարձակվել է 1992-1994 թթ. Արցախյան առաջին պատերազմը (տե՛ս <http://www.nkr.am/hy/azerbaijani-aggression>), 2016 թվականի ապրիլյան քառօրյա պատերազմը (տե՛ս <http://www.nkr.am/hy/four-day-war>) և 2020 թվականի 44-օրյա պատերազմը (տե՛ս Արցախյան 44-օրյա պատերազմը և հարավային կովկասի աշխարհաքաղաքական փոխակերպման գործընթացը, Ալեն Ղևոնդյան, Բանբեր Երևանի համալսարանի, միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, 2022, № 1, 9-22 էջեր):

⁹ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն՝ ընդունված 05.07.1995թ.:

¹⁰ Տե՛ս «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք, 05.12.2006թ. ՀՀՊՏ 2007.01.17/4(528):

նակ, Հայաստանում, Վրաստանում կամ Ռուսաստանում ռազմական դրության իրավական ռեժիմն ինքնուրույն օրենսդրական կարգավորում է ստացել, ապա այլ երկրներում, օրինակ՝ Կանադայում, 1914 թվականի օգոստոսի 22-ին ընդունված «Ռազմական միջոցների մասին» օրենքը կիրառվել է երեք անգամ, իսկ 1988 թվականից փոխարինվել է «Արտակարգ դրության մասին» օրենքով¹¹:

Ռազմական դրության իրավական ռեժիմի առանձնահատկություններից խոսելիս անհրաժեշտ է նաև պարզաբանել և տարանջատել «ռազմական դրություն» և «պատերազմ» եզրույթները:

«Պատերազմը» կազմկերպված կոլեկտիվի կողմից բռնության դրսևորում է, որն ազդում է երկու կամ ավելի հասարակությունների փոխհարաբերությունների կամ նույն հասարակության ներսում ուժերի հարաբերակցության վրա: Այն կանոնակարգվում է զինված ընդհարումների իրավունքով և այսպես կոչված միջազգային մարդասիրական իրավունքի նորմերով¹²: Առաջին անգամ պատերազմի հասկացությունը միջազգային իավունքում ամրագրվել է 1899 թվականի Հաագայի խաղաղության 1-ին կոնֆերանսում, որտեղ 27 պետությունների մասնակցությամբ 110 պատվիրակություն ընդունեց միջազգային ընդհարումների խաղաղ կարգավորման մասին կոնվենցիան և ցամաքային պատերազմի վարման կանոնները: Սակայն 1946 թվականին Նյուրնբերգի միջազգային ռազմական տրիբունալը ցամաքային պատերազմի մասին Հաագայի կոնվենցիայի վերաբերյալ արձանագրել է. «Կոնվենցիայում ամրագրված ցամաքային պատերազմի կանոններն անհերքելիորեն դրանց ընդունման ժամանակ գործող միջազգային իրավունքից մեկ քայլ առաջ էին, սակայն 1939 թվականին այդ կանոնները բոլոր քաղաքակիրթ ազգերի կողմից դիտարկվում էին որպես պատերազմի կանոնների և սովորույթների հոչակագիր»¹³:

Ժամանակակից միջազգային իրավունքը սահմանափակում է այն դեպքերը, երբ պետությունը պատերազմական գործողություններ վարելիս կա-

¹¹Տե՛ս https://en.wikipedia.org/wiki/Martial_law#:~:text=During%20the%20colonial%20era%2C%20martial,during%20the%201837%E2%80%931838%20insurrections. (վերջին մուտք՝ 27.01.2023թ.):

¹² Տե՛ս <https://guide-humanitarian-law.org/content/article/3/war/> (վերջին մուտք՝ 27.01.2023թ.):

¹³ Տե՛ս <https://ihl-databases.icrc.org/en/ihl-treaties/hague-conv-iv-1907> (վերջին մուտք՝ 27.01.2023թ.):

րող է դիմել ուժի կիրառմանը, ինչպես նաև պատերազմի վարման թույլատրելի միջոցներն ու մեթոդները՝ անկախ հետապնդվող նպատակից: Այս իմաստով ներկայումս ագրեսիան ճանաչվում է որպես ուժի ապօրինի կիրառման ամենավտանգավոր ձևը և, հետևաբար, համարվում է ամենաճանր հանցագործություններից, որը կարող է կատարվել՝ հանգեցնելով մեկ այլ պետության ոչնչացման և դրա տարածքային ամբողջականության խախտման: 20-րդ դարի կեսերին պատերազմ վարելու իրավունքի աստիճանական ճնշումը սահմանափակեց նաև ուժի կիրառման դեպքում ինքնապաշտպանական նպատակով պաշտպանվող կողմի՝ ռազմական միջոցների դիմելու իրավունքը: Այս մոտեցումն ամրագրվեց Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ՝ արգելելով պետությունների միջև ուժի կիրառումը¹⁴:

Ինչ վերաբերում է «ռազմական դրությանը», ապա այն, ինչպես նշվեց, իրավական ռեժիմի հատուկ տարատեսակ է, որը ՀՀ-ում ունի վարչաիրավական օրենսդրական կարգավորում:

Կրկին պատմական ակնարկ կատարելով դեպի 20-րդ դարի սկիզբ՝ կներկայացնենք Իտալիայի Հանրապետության օրինակը՝ որպես ռազմական դրության ռեժիմ հայտարարած առաջին պետություններից: Այդ փուլում, պատերազմական ժամանակահատվածով պայմանավորված, Իտալիայի գործող իրավական համակարգն ազատական ոճից թևակոխել էր ռեպրեսիվի. և 1915 թվականին ընդունված Սերկրի տնտեսական և ռազմական պաշտպանության մասին թիվ 273 օրենքով գրեթե մենաշնորհային իրավունքով կառավարությունը լիազորվեց միանձնյա տնօրինելու լրատվության միջոցները (հոդված 4) և երկրի պաշտպանունակության հարցերը (հոդված 11)¹⁵: Կառավարությունը, մեկ անգամ ստանալով մենաշնորհային լիազորությունների գրեթե անսահմանափակ հնարավորություն, իր հերթին տեղական ինքնակառավարման մարմիններին լիազորեց անձանց որոշակի

¹⁴ 26.06.1945թ. ընդունված ՄԱԿ կանոնադրության 51-րդ հոդվածի համաձայն՝ «սույն Կանոնադրությունը ոչնչով չի խաթարում անհատական կամ կոլեկտիվ ինքնապաշտպանության անկապտելի իրավունքը Միավորված ազգերի կազմակերպության որևէ անդամի հարձակման ենթարկվելու դեպքում, քանի դեռ Անվտանգության խորհուրդը չի ձեռնարկի միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման միջոցառումներ»:

¹⁵ St 'u LEGGE 21 marzo 1915, n. 273 Portante provvedimenti per la difesa economica e militare dello Stato.

իրավունքների սահմանափակման հնարավորություններ՝ հավաքներ անցկացնելու իրավունքը սահմանափակելու¹⁶, գրաքննության¹⁷, ամսագրերի¹⁸, հեռախոսազանգերի, հեռագրերի և ռադիոհեռագրերի¹⁹, փոստի վերահսկման²⁰: Նույն տարվա հունիսին ընդունված մեկ այլ՝ այսպես կոչված Ոկեղծ նորությունների մասին՝ հրամանագրով խիստ տույժեր նախատեսվեցին այն անձանց համար, ովքեր շփվում էին մի խումբ անձանց կամ անհատների հետ՝ փոխանցելով ազգային պաշտպանության կամ ռազմական գործողությունների մասին տեղեկատվություն, որը տարբերվում էր Կառավարության կամ Բանակի բարձրագույն հրամանատարության կողմից արված հայտարարություններից²¹:

Կրկին անդրադառնալով ոլորտի կարգավորման հայրենական մոտեցումներին՝ հարկ է նշել, որ դեռևս 1995 թվականից «ռազմական դրության» վերաբերյալ ՀՀ Սահմանադրությունում առկա կարգավորումները պահպանվեցին 2005 թվականի Սահմանադրական փոփոխություններում՝ ամրագրելով իրավական ռեժիմի օրենսդրական կարգավորման անհրաժեշտությունը²², որը կյանքի կոչվեց 2006 թվականի դեկտեմբերի 5-ին ընդունված «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքով:

Հետագայում արդեն 2015 թ. կրկին փոփոխված ՀՀ Սահմանադրության 119-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվեց²³, որ «Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայությո-

¹⁶ Տե՛ս REGIO DECRETO-LEGGE 23 maggio 1915, n. 674 Concernente provvedimenti straordinari in materia di pubblica sicurezza.

¹⁷ Գրաքննություն բառը երբևէ չի հայտնվել դեկրետներում, սակայն դա հենց այդ էր, որ կա: Սռավել մանրամասն տե՛ս A. Fiori, Il filtro deformante - La censura sulla stampa durante la Prima Guerra Mondiale, Roma, Istituto storico italiano per l'età moderna e contemporanea, 2001:

¹⁸ Տե՛ս Disposizioni per la stampa: REGIO DECRETO 23 maggio 1915, n. 675:

¹⁹ Տե՛ս REGIO DECRETO 23 maggio 1915, n. 688 Riguardante la censura telegrafica, telefonica e radiotelegrafica in caso di circostanze straordinarie.

²⁰ Տե՛ս REGIO DECRETO 23 Maggio 1915, n. 689 che riguarda la censura postale in caso di circostanze straordinarie. (pubblicato nella gazzetta ufficiale n.129 del 24 maggio 1915):

²¹ Տե՛ս Decree Law no. 885, 20 June 1915; Circular Letter no.609 of the "Official Military Journal", 20 June 1915.

²² Տե՛ս ՀՀ Սահմանադրության (27.11.2005թ. փոփոխություններով) 55-րդ հոդվածի 13-րդ մասի 4-րդ պարբերությունը:

²³ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (06.12.2015թ. փոփոխություններով) ՀՀՊՏ 21.12.2015թ. /Հասուկ թողարկում Հոդ. 1118 :

յան կամ պատերազմ հայտարարվելու դեպքերում Կառավարությունը հայտարարում է ռազմական դրություն, ուղերձով դիմում է ժողովրդին և կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք»: «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «ռազմական դրությունը բացառապես Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքում իրականացվող ժամանակավոր միջոցառում է, որն իրենից ներկայացնում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեության հատուկ իրավական ռեժիմ և թույլատրում է իրավաբանական անձանց, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների և ազատությունների որոշակի սահմանափակումների և նրանց նկատմամբ լրացուցիչ պարտավորությունների սահմանում»²⁴:

Օրենսդիրը որպես ռազմական դրություն հայտարարելու նպատակ է սահմանել՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և տնտեսության զորահավաքային ծավալման համար առավելագույն բարենպաստ պայմանների ստեղծմամբ դիմակայել Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակմանը կամ կանխել դրա անմիջական վտանգը, ինչպես նաև ապահովել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բնականոն գործունեությունն ու մարդկանց կյանքի և անվտանգության պաշտպանությունը ռազմական դրության պայմաններում²⁵:

Նույն օրենքի համաձայն՝ Ռազմական դրություն հայտարարվում է միայն այն հանգամանքների առկայության դեպքում, որոնք անմիջականորեն սպառնում են ՀՀ ինքնիշխանությանը, անվտանգությանը, տարածքային ամբողջականությանը և դրանով պայմանավորված՝ քաղաքացիների կյանքին ու անվտանգությանը, և այդ հանգամանքների վերացումն անհնարին է առանց արտակարգ միջոցներ ձեռնարկելու: Այդպիսի հանգամանքներ են՝ ա) այլ պետության զինված ուժերի ներխուժումը ՀՀ տարածք, նման ներխուժման հետևանքով ՀՀ ցանկացած տարածքի բռնազավթումը. բ) այլ պետության զինված ուժերի կողմից ՀՀ տարածք ներխուժելու անմիջական

²⁴ Տե՛ս «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը:

²⁵ Տե՛ս «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի (ընդունված է 2006 թվականի դեկտեմբերի 5-ին) 3-րդ հոդվածը:

վտանգի առկայությունը. գ) այլ պետության զինված ուժերի կողմից ՀՀ տարածքի ուժահարումը. դ) այլ պետության զինված ուժերի կողմից ՀՀ զինված ուժերի կամ այլ գորքերի վրա հարձակումը՝ անկախ վերջիններիս տեղակայման վայրից. ե) այլ պետության գործողությունները, որոնք թույլ են տալիս երրորդ պետությանն իր տարածքն օգտագործել ՀՀ նկատմամբ զինված հարձակում իրականացնելու համար. զ) այլ պետության կողմից ՀՀ տարածք ուղարկված կամ նրա անունից գործող զինված խմբերի, ապակայունացնող ուժերի կամ վարձկանների զինված ոտնձգությունները ՀՀ նկատմամբ²⁶:

Այսպես, ելնելով վերը նշված նորմերի համակարգային վերլուծությունից՝ կարելի է ռազմական դրությունը բնորոշել որպես հատուկ վարչաիրավական ռեժիմի տեսակ, որը սահմանվում է հանրային իշխանության կողմից՝ երկրին սպառնացող ռազմական բնույթի վտանգներին դիմակայելու, զինված հարձակմանը, արտաքին ագրեսիային կամ դրանց սպառնալիքի ցանկացած դրսևորմանը հակազդելու համար, որի ժամանակ իշխանությունները պարտականություն են ստանձնում կանխել և չեզոքացնել վրա հասած վտանգները, ապահովել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բնականոն գործունեությունն ու մարդկանց կյանքի և անվտանգության պաշտպանությունը ռազմական դրության պայմաններում:

«Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը սահմանում այն միջոցառումների և ժամանակավոր սահմանափակումների ցանկը, որոնք կարող են իրականացվել ռազմական դրության ընթացքում²⁷, հետևաբար, մեր դիտարկմամբ, եթե ռազմական դրության

²⁶ Այս համատեքստում ռազմական հարձակում կարող է նաև համարվել՝ «այլ պետության զինված ուժերի կողմից ցանկացած այլ գործողությունները կամ դրանց նախապատրաստությունը, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության կամ միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքների և նորմերի խախտմամբ իրականացված այլ գործողությունները, որոնք իրական սպառնալիք են ստեղծում ՀՀ ինքնիշխանության, անվտանգության և տարածքային ամբողջականության համար՝ ներառյալ ՀՀ պատերազմ հայտարարելը»: Տե՛ս «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը:

²⁷ Դրանց թվում են՝ ռազմական դրություն հայտարարվելու դեպքում ռազմական դրության ամբողջ ժամկետի ընթացքում կարող են իրականացվել օրենքով սահմանված կարգով կարծիքի արտահայտման ազատության սահմանափակում, ինչպես նաև սպազորող սարքերի, ռադիոհեռարձակող, ձայնաուժեղացնող տեխնիկական միջոցների,

հայտարարմանը չի հետևելու համապատասխան **միջոցառումների և ժամանակավոր սահմանափակումների շրջանակը սահմանող կարգավորում**²⁸, **ապա հայտարարված ռազմական դրությունը կդառնա զուտ ինքնանպատակ:**

Չափազանց կարևոր է ընդգծել, որ մարդու և քաղաքացու իրավունքների ցանկացած սահմանափակում պետք է կանոնակարգված և նախատեսված լինի ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով՝ միջազգային պայմանագրերին համապատասխան: Այսպես, անձանց հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներն արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ սահմանված են ՀՀ Սահմանադրության 76-րդ հոդվածով²⁹: Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ գործադիր մարմիններն իրենց ակտերով միջնորդավորում են սահմանափակման կիրառումը կոնկրետ հարաբերություններում: Մակայն այդպիսի սահմանափակման պայմանները, սահմանափակման գործադիր սուբյեկտներն ու օբյեկտները, եղանակներն ու ժամկետները պետք է հստակ սահմանված լինեն օրենքով: Ընդ որում՝ ռազմական դրության պայմաններում (...) ֆիզիկական անձանց սահմանադրական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները (...), իրավաբանական անձանց առաջադրվող լրացուցիչ պարտավորությունները պետք է իրականացվեն այն սահմաններում, որոնք

բազմացնող տեխնիկայի ժամանակավոր առգրավում կամ կալանք, լրագրողների հավատարմագրման հատուկ կարգի, կապի միջոցներից օգտվելու հատուկ կանոնների սահմանում:

²⁸ «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ Ռազմական դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, ի թիվս այլնի, պետք է սահմանվեն՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, կազմակերպությունների իրավունքների և ազատության ժամանակավոր սահմանափակումների, կիրառվող միջոցառումների, ինչպես նաև նրանց նկատմամբ լրացուցիչ պարտավորությունների ցանկը:

²⁹ Արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները՝ բացառությամբ Սահմանադրության 23-26-րդ, 28-30-րդ, 35-37-րդ հոդվածներում, 38-րդ հոդվածի 1-ին մասում, 41-րդ հոդվածի 1-ին մասում, 47-րդ հոդվածի 1-ին մասում, 5-րդ մասի 1-ին նախադասությունում և 8-րդ մասում, 52-րդ, 55-րդ հոդվածի 2-րդ մասում, 56-րդ, 61-րդ, 63-72-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում:

ապահովում են Սահմանադրության 76-րդ հոդվածի պահանջները և համարժեք են ռազմական դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքներին, ինչպես նաև պետք է համապատասխանեն մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին և բխեն ռազմական դրության պայմաններում (արտակարգ իրավիճակներում) պարտավորություններից շեղվելու վերաբերյալ միջազգային պարտավորություններից³⁰:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի³¹ «Արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղում» վերտառությամբ 15-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ «պատերազմի կամ այլ արտակարգ դրության ժամանակ, որը սպառնում է ազգի կյանքին, յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմ կարող է միջոցառումներ ձեռնարկել՝ սույն Կոնվենցիայով ամրագրված իր պարտավորություններից շեղվելով միայն այն չափով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը՝ պայմանով, որ նման միջոցառումներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքով ստանձնած նրա մյուս պարտավորությունների հետ»³²: Այսինքն՝ Եվրոպայի խորհրդի ցանկացած անդամ պետություն կարող է շեղվել Կոնվենցիայով ստանձնած իր պարտավո-

³⁰ Տե՛ս «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը:

³¹ Տե՛ս Կոնվենցիա մարդու իրավունքների եվ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին՝ փոփոխված 11-րդ արձանագրությամբ (ընդունվել է 04.11.1950 թ., Հռոմ) ՀՀՊՏ 2002.06.05/17(192) Հոդ.367:

³² ՄԻԵԴ-ն ընդգծել է, որ պետություններն այդ ոլորտում չունեն անսահմանափակ հայեցողություն. դատարանն իրավասու է որոշել՝ արդյոք պետությունները գերազանցել են ճգնաժամի «պահանջների հստակ չափը, թե՛ ոչ» (CASE OF IRELAND V. THE UNITED KINGDOM, գանգատ թիվ 5310/71, 18.01.1978թ. վճիռ, կետ 207): Դատարանն ուսումնասիրում է, inter alia, թե արդյոք սովորական օրենքները բավարար են եղել արտակարգ իրադրությունը հաղթահարելու համար (CASE OF IRELAND V. THE UNITED KINGDOM, գանգատ թիվ 5310/71, 18.01.1978 վճիռ, կետ 212), պարտավորություններից շեղումն ունի՞ սահմանափակ շրջանակներ, և որո՞նք են դրա հիմքերը, պարտադրված միջոցառումներին զուգահեռ ապահովվե՞լ են երաշխիքները, գործնականում հնարավո՞ր է եղել իրականացնել դատական վերահսկողություն այս գործողությունների նկատմամբ (CASE OF BRANNIGAN AND MCBRIDE V. THE UNITED KINGDOM, գանգատ թիվ 14553/89; 14554/89, 26.05.1993 վճիռ, կետեր 59, 61-66), ձեռնարկված միջոցառումները համաչափ են եղել հետապնդվող նպատակին, և արդյոք առկա՞ է եղել անհիմն խտրականություն (CASE OF A. AND OTHERS V. THE UNITED KINGDOM, գանգատ թիվ 3455/05, 19.02.2009թ. վճիռ, կետ 190):

որություններից, բայց միայն այնքանով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը:

«Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո, և առհասարակ ՀՀ-ում, ռազմական դրություն առաջին անգամ հայտարարվեց 27.09.2020թ. «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» ՀՀ կառավարության 1586-Ն որոշմամբ³³, որի Հավելվածի 8, 9.1, 9.2 կետերով ՀՀ ամբողջ տարածքում արգելվեց հավաքների և գործադուլների կազմակերպումը, անցկացումը և դրանց մասնակցելը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց՝ ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովմանը և պետական անվտանգության ապահովմանն առնչվող գործողությունները (այդ թվում՝ էլույթները, հրապարակումները) քննադատող, հերքող, դրանց արդյունավետությունը կասկածի տակ դնող կամ որևէ այլ կերպ արժեզրկող հաղորդումների հրապարակումը, ՀՀ և Արցախի Հանրապետության պաշտպանունակության ու անվտանգության դեմ ուղղված քարոզչությունը, այդ թվում՝ ՀՀ և ԱՀ պաշտպանունակությունը կասկածի տակ դնող հաղորդումների հրապարակումը, ընդ որում՝ սահմանված արգելքների խախտումն առաջացնում է վարչական պատասխանատվություն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.5 հոդվածով սահմանված կարգով³⁴: Այսինքն՝ սույն որոշմամբ ՀՀ կառավարության կող-

³³ «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» N 1586-Ն որոշումը (այսուհետ՝ նաև Որոշում) ընդունվել, ստորագրվել և ուժի մեջ է մտել 2020 թվականի սեպտեմբերի 27-ին: Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրությունը վերացնելու մասին» 2021 թվականի մարտի 24-ի ԱԺՌ-001-Ն որոշմամբ Կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» N 1586-Ն որոշմամբ հայտարարված ռազմական դրությունը վերացվել է:

³⁴ Տե՛ս ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (ՀՍՍՀԳՍ 1985/23) 182.5-րդ Հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերը համապատասխանաբար պատասխանատվություն է նախատեսում Լրատվական գործունեություն իրականացնողի կողմից ռազմական դրության ընթացքում տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնները խախտելը, լրագրողի կողմից հավատարմագրման հատուկ կարգը չպահպանելը, կապի միջոցներից օգտվելու հատուկ կանոնները խախտելու, լրատվական գործունեություն չիրականացնող անձանց կողմից ռազմական դրության ընթացքում տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնները խախտելը կամ կարծիքի արտահայտման ազատության սահմանափակման կանոնները խախտելու և հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով նախատեսված տույժերին ենթարկվելուց հետո՝

մից սահմանափակվեցին անձի կարծիք արտահայտելու, հավաքներ կազմակերպելու, անցկացնելու և մասնակցելու իրավունքները:

Հատկանշական է, որ ՀՀ սահմանադրական դատարանը, քննելով Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Կառավարության 2020 թ. սեպտեմբերի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» թիվ 1586-Ն որոշման հավելվածի 9.1-ին և 9.2-րդ կետերի, ՎԻՎ վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.5-րդ հոդվածի 5-7-րդ մասերի, դրանց հետ փոխկապակցված 13-րդ և 14-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը, գտել է, որ հիմնական իրավունքները կամ ազատությունները սահմանափակող օրենքների հստակությունը, կանխատեսելիությունը և մատչելիությունն ուղիղ համեմատական են հիմնական իրավունքի սահմանափակման աստիճանին. **որքան ավելի ինտենսիվ է այդ սահմանափակումը, այնքան ավելի հստակ, կանխատեսելի և մատչելի պետք է լինեն հիշյալ օրենքների ձևակերպումները, որպեսզի երկխոսություն չառաջացնեն մասնավոր անձանց համար արգելքների, այլ սահմանափակումների կամ նրանց վրա դրված պարտականությունների առկայության և բովանդակության հարցում:** Հաշվի առնելով վերոնշյալը և արձանագրելով, որ Որոշման հավելվածի 9.1-ին կետի՝ «արդյունավետությունը կասկածի տակ դնող», «որևէ այլ կերպ արժեզրկող» բառակապակցությունները կարող են առաջ բերել երկխոսություն մասնավոր անձանց համար արգելքների/սահմանափակումների կամ նրանց վրա դրված պարտականությունների առկայության և բովանդակության հարցում, Սահմանադրական դատարանը եզրահանգել է, որ Որոշման հավելվածի 9.1-ին կետի՝ «դրանց արդյունավետությունը կասկածի տակ դնող կամ որևէ այլ կերպ արժեզրկող» բառակապակցությունը **համահունչ չէ որոշակիության սահմանադրական սկզբունքին**՝ նշված բառակապակցությունը ճանաչելով Սահմանադրության 42-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր³⁵:

անհապաղ, ռազմական դրության ընթացքում սահմանված տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնների խախտմամբ տարածված հրապարակումը չվերացնելու համար:

³⁵ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 4 մայիսի 2021 թվականի թիվ ՍԴՈ-1592 որոշումը (միասնական կայք 2021.05.03-2021.05.16 Պաշտոնական հրապարակման օրը՝ 10.05.2021թ.):

Սահմանադրական դատարանի սույն որոշումը, ինչպես նաև նշված նորմատիվ իրավական ակտի³⁶ որոշ դրույթների՝ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտին համապատասխանության հարցը քննարկելիս ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/9623/05/20 դատական գործը³⁷, վեր են հանում ռազմական դրության կառավարչական ռեժիմին արագ անցում կատարելիս թույլ տրված բացթողումները: Աներկբա է, որ նման իրավիճակներում առաջին հերթին պետության գործադիր մարմինները պետք է կարողանան բացառապես օրենքի շրջանակներում օպերատիվ և արդյունավետ գործել, իսկ Սահմանադրությանը չհակասելու պայմանով՝ նաև սահմանված ընթացակարգերից որոշակի շեղում թույլ տալ՝ սահմանվելով վերջիններիս կողմից որոշումների ընդունման ավելի պարզ ընթացակարգ³⁸:

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ ՀՀ-ում հայտարարված ռազմական դրություն վարչաիրավական ռեժիմին կատարված անցումն այդքան էլ սահուն չէր, ինչը պայմանավորված էր և՛ սուբյեկտիվ, և՛ օբյեկտիվ մի շարք հանգամանքներով՝ արագ գործելու պարտականության հստակ ամրագրման բացակայություն, իրավունքների սահմանափակման արդյունքում դժգոհության ալիք, ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի որոշ բացեր և այլն: Արդյունքում, համաձայն ուսումնասիրությունների՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.5 հոդվածի հիմքով կայացված վարչական ակտերի գերակշռող մասը բեկանվել է³⁹:

Անշուշտ, այս խնդրի լուծմանն է միտված ներկայումս շրջանառվող «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքում փոփո-

³⁶ ՀՀ Կառավարության 2020 թ. սեպտեմբերի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» թիվ 1586-Ն որոշում:

³⁷ Առավել մանրամասն տե՛ս ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/9623/05/20 դատական գործով վճիռ:

³⁸ Այստեղ խոսքը նաև արագացված կարգի մասին է՝ շրջանցելով ընդունված ընթացակարգերը՝ համապատասխան կարգավորումներ ընդունելու մասին, որոնց ընդունման հապաղումը կհանգեցնի պաշտպանվող շահերի առավել վտանգավոր հետևանքների: Սույն պարտավորության իրագործումը հանրային իշխանության պարտականությունն է:

³⁹ Առավել մանրամասն տե՛ս ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/8400/05/20, ՎԴ/8648/05/20, ՎԴ/11011/05/20, ՎԴ/0238/05/21, ՎԴ/7270/05/21 դատական գործերով վճիռներ:

խություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը⁴⁰, որը միտված է ռազմական դրության իրավական ռեժիմի առավել արդյունավետ կանոնակարգմանը և առկա թերությունների վերացմանը: Այսպես՝ որոշման նախագծում առաջարկվող փոփոխություններով, ի թիվս այլնի, նախատեսվում է ռազմական դրություն հայտարարվելու դեպքում իրականացվող միջոցառումների և ժամանակավոր սահմանափակումների մեջ ավելացնել Հայաստանի Հանրապետության տարածքում ինտերնետային կայքերի, սոցիալական ցանցերի, ինտերնետային հավելվածների գործողության ժամանակավոր կասեցում (արգելափակում), ինչպես նաև ինտերնետի հասանելիության մասնակի կամ ամբողջական սահմանափակում:

Առաջարկվում է նաև ստեղծել ռազմական դրության պայմաններում կիրառվող ոչ ռազմական բնույթի միջոցառումների իրականացումը և սահմանափակումների կիրառումը համակարգող մարմին, որը կարող է համակարգել ռազմական դրության պայմաններում կիրառվող ոչ ռազմական բնույթի միջոցառումների իրականացումը և սահմանափակումների կիրառումը:

Մեր կարծիքով, նշված փոփոխությունները, իհարկե, կարող են հանգեցնել ռազմական դրության հայտարարման պայմաններում կառավարչական մեխանիզմների արդյունավետության բարձրացման, սակայն իրական դրական լուծումներ և արդյունք ապահովելու համար հանրային իշխանությունները պետք է վեր հանեն հիշատակված դատական ակտերում նախանշված խնդիրները (հանգուցալուծեն իրավական ակտերի միջև առկա հակասությունները): Այս նպատակով անհրաժեշտ է գործուն կառուցակարգեր մշակել երկիրը (իրավական համակարգը) խաղաղ պայմաններից ռազմական դրության իրավական ռեժիմի վիճակին առավել սահուն վերափոխելու (անցումնը ապահովելու) համար, ինչպես նաև այդ ընթացքում անձանց իրավունքների խախտումը բացառելու և այդ գործընթացի, ինչպես նաև կիրառվող սահմանափակումների նկատմամբ վերահսկողության արդյունավետ մեխանիզմներ սահմանելու ուղղությամբ:

⁴⁰ Առավել մանրամասն տե՛ս <https://www.e-draft.am/projects/5186/about> (վերջին մուտք՝ 27.01.2023թ.):

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն՝ ընդունված 05.07.1995թ.:
2. ՀՀ Սահմանադրության 27.11.2005թ. փոփոխություններով (ՀՀՊՏ 2005.12.05/Հատուկ թողարկում Հոդ. 1426):
3. ՀՀ Սահմանադրության 06.12.2015թ. փոփոխություններով (ՀՀՊՏ 2015.12.21թ./Հատուկ թողարկում Հոդ. 1118):
4. ՄԱԿ կանոնադրություն՝ ընդունված 26.06.1945թ. (ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/4(12)):
5. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա՝ փոփոխված 11-րդ արձանագրությամբ ընդունված 04.11.1950 (ՀՀՊՏ 2002.06.05/17(192) Հոդ.367):
6. «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 05.12.2006թ. (ՀՀՊՏ 2007.01.17/4(528) Հոդ.27):
7. «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 21.03.2012թ. (ՀՀՊՏ 2012.04.25/21(895) Հոդ.473 մարտի 21-ին):
8. ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք՝ ընդունված 06.12.1985թ. (ՀՍՍՀԳՍՏ 1985/23):
9. «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» N 1586-Ն որոշումը՝ ընդունված 27.09.2020 (Միասնական կայք 2020.09.21-2020.10.04 Պաշտոնական հրապարակման օրը՝ 27.09.2020թ.):
10. ՀՀ Սահմանադրական դատարանի 4 մայիսի 2021 թվականի թիվ ՍԴՌ-1592 որոշումը (միասնական կայք 2021.05.03-2021.05.16, Պաշտոնական հրապարակման օրը՝ 10.05.2021թ.):
11. ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/9623/05/20 դատական գործով որոշում:
12. ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/8400/05/20, ՎԴ/8648/05/20, ՎԴ/11011/05/20, ՎԴ/0238/05/21, ՎԴ/7270/05/21 դատական գործերով վճիռներ:
13. Արցախյան 44-օրյա պատերազմը և հարավային կովկասի աշխարհաքաղաքական փոխակերպման գործընթացը, Ալեն Դևոնդյան, Բանբեր Երևանի համալսարանի, միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, 2022, № 1:
14. CASE OF IRELAND V. THE UNITED KINGDOM, գանգատ թիվ 5310/71, 18.01.1978 թ. վճիռ:
15. CASE OF IRELAND V. THE UNITED KINGDOM, գանգատ թիվ 5310/71, 18.01.1978 թ. վճիռ:
16. CASE OF BRANNIGAN AND MCBRIDE V. THE UNITED KINGDOM, գանգատ թիվ 14553/89; 14554/89, 26.05.1993 թ. վճիռ:

17. CASE OF A. AND OTHERS V. THE UNITED KINGDOM, Գանձառ թիվ 3455/05, 19.02.2009 թ. վճիռ:
18. LEGGE 21 marzo 1915, n. 273 Portante provvedimenti per la difesa economica e militare dello Stato.
19. REGIO DECRETO-LEGGE 23 maggio 1915, n. 674 Concernente provvedimenti straordinari in materia di pubblica sicurezza.
20. A. Fiori, Il filtro deformante - La censura sulla stampa durante la Prima Guerra Mondiale, Roma, Istituto storico italiano per l'età moderna e contemporanea, 2001:
21. Disposizioni per la stampa: REGIO DECRETO 23 maggio 1915, n. 675:
22. REGIO DECRETO 23 maggio 1915, n. 688 Riguardante la censura telegrafica, telefonica e radiotelegrafica in caso di circostanze straordinarie.
23. REGIO DECRETO 23 Maggio 1915, n. 689 che riguarda la censura postale in caso di circostanze straordinarie. (pubblicato nella gazzetta ufficiale n.129 del 24 maggio 1915).
24. LEGGE 21 marzo 1915, n. 273 Portante provvedimenti per la difesa economica e militare dello Stato.
25. Decree Law no. 885, 20 June 1915; Circular Letter no.609 of the “Official Military Journal”, 20 June 1915:
26. <https://zh.wikipedia.org/wiki/%E8%87%BA%E7%81%A3%E7%9C%81%E6%88%92%E5%9A%B4%E4%BB%A4> (վերջին մուտք՝ 27.01.2023):
27. <http://council.gov.ru/services/reference/10539/> (վերջին մուտք՝ 27.01.2023):
28. <https://matsne.gov.ge/ka/document/view/1264778?publication=0> (վերջին մուտք՝ 27.01.2023):
29. <https://tr.wikipedia.org/wiki/S%C4%B1k%C4%B1y%C3%B6netim#:~:text=S%C4%B1k%C4%B1y%C3%B6netim%20Kanunu%2C%202017%20T%C3%BCrkiye%20anayasa,say%C4%B1%C4%B1%20Kanun'la%20y%C3%BCr%C3%BCrl%C3%BCkten%20kald%C4%B1r%C4%B1lm%C4%B1%C5%9Ft%C4%B1r.> (վերջին մուտք՝ 27.01.2023):
30. https://en.wikipedia.org/wiki/October_Crisis (վերջին մուտք՝ 27.01.2023):
31. <http://www.cdf-sy.org/paper/rdif.htm> (վերջին մուտք՝ 27.01.2023):
32. <http://www.nkr.am/hy/azerbaijani-aggression> (վերջին մուտք՝ 27.01.2023):
33. <http://www.nkr.am/hy/four-day-war> (վերջին մուտք՝ 27.01.2023):
34. https://en.wikipedia.org/wiki/Martial_law#:~:text=During%20the%20colonial%20era%2C%20martial,during%20the%201837%E2%80%931838%20insurrections. (վերջին մուտք՝ 27.01.2023)
35. <https://guide-humanitarian-law.org/content/article/3/war/> (վերջին մուտք՝ 27.01.2023)

-
36. <https://ihl-databases.icrc.org/en/ihl-treaties/hague-conv-iv-1907> (վերջին փոփոխումը՝ 27.01.2023): <https://www.e-draft.am/projects/5186/about> (վերջին փոփոխումը՝ 27.01.2023):

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ АДМИНИСТРАТИВНО-ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ РЕЖИМА ВОЕННОГО ПОЛОЖЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Киракосян Ани Андраниковна

Ассистент кафедры административного права и административной деятельности полиции Академии Образовательного комплекса полиции Республики Армения

Агабекян Армен Вачикович

Учащийся 3 курса юридического факультета Академии Образовательного комплекса полиции Республики Армения

Аннотация. Статья посвящена некоторым особенностям правового режима военного положения в Республике Армения. В рамках исследования авторы изучили реалии правового режима военного положения в историко-правовом контексте, проанализировали отечественные правовые нормы, охватывающие исследуемую область, в том числе, судебные решения и прецеденты. Были проанализированы акты, принятые во время правового режима военного положения, введённого в Республике Армения в 2020 году, с указанием на имеющиеся правовые недостатки и соответствующие предложения по их решению.

Ключевые слова: военное положение, война, вооруженное нападение, административно-правовой режим, ограничение прав и свобод, мероприятия и временные ограничения.

SOME SPECIFICS OF THE ADMINISTRATIVE LEGAL REGULATIONS OF THE REGIME OF MARTIAL LAW IN THE REPUBLIC OF ARMENIA

Kirakosyan Ani

Assistant at the Chair of Administrative Law and Police Administrative Activities, Academy of the Police Educational Complex of the Republic of Armenia

Aghabekyan Armen

Third Year student at the Faculty of Law of the Academy of the Police Educational Complex of the Republic of Armenia.

Summary: The article is dedicated to some specifics of the legal regime of martial law in the Republic of Armenia. Within the framework of the research, the authors studied the realities of the legal regime of martial law in the historical and legal context, analyzed domestic legal regulations covering the field in question, including court decisions and precedents. The acts, adopted during the regime of martial law declared in Armenia in 2020, were analyzed with indication of existing shortcomings and relevant proposals for their solution.

Key words: Martial law, war, armed attack, administrative and legal regime, restriction of rights and freedoms, actions and temporary restrictions.

Հոդվածը գրախոսվել է՝ 02.02.2023թ.:
Ներկայացվել է տպագրության՝ 05.02.2023թ.:

ՆՈՐՄ-ԱՍԲՈՂՋԻ ԵՎ ՆՈՐՄ-ՄԱՍԻ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ

Մարկոսյան Միսակ

*ՀՀ ռատիկանության կրթահամալիրի պետի
առաջին տեղակալ, իրավաբանական
գիտությունների թեկնածու, դոցենտ,
ռատիկանության գնդապետ*

1. Ներածություն

2021 թվականի մայիսի 5-ին Հայաստանի Հանրապետության ազգային ժողովն ընդունեց Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ քր. օր.), որն ուժի մեջ մտավ 2022 թվականի հուլիսի 1-ից: Քր. օր-ում տեղ գտած նորամուծություններից մեկը Հատուկ մասով նախատեսված քրեախրավական նորմերի մրցակցության օրենսդրական կարգավորումն է (52-րդ հոդված): Որպես Հատուկ մասով նախատեսված քրեախրավական նորմերի մրցակցության ինքնուրույն տեսակ՝ քր. օր-ը նախատեսել է նաև նորմ-ամբողջի և նորմ-մասի մրցակցությունը (52-րդ հոդվածի 6-րդ մաս):

Մասնագիտական գրականության տարբեր աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակների շրջանում միասնական մոտեցում չկա նորմ-ամբողջի և նորմ-մասի մրցակցությանն առնչվող մի շարք հարցերի վերաբերյալ: Մասնավորապես, տարբեր դիրքորոշումներ են արտահայտվել այն հարցերի վերաբերյալ, թե որոնք են նորմ-ամբողջի և նորմ-մասի մրցակցության հնարավոր դրսևորումները և դրանց լուծումները, ինչ պայմանների դեպքում քր.օր-ի Հատուկ մասի մի նորմը կարող է դիտարկվել որպես մեկ այլ նորմի մաս: Այդ հարցերն առավել արդիական են դառնում հայրենական նոր քրեական օրենսդրության գործողության պայմաններում, քանի որ դրանց ճիշտ պարզաբանումից է կախված դատաքննչական պրակտիկայում քրեախրավական նորմերի մրցակցության նշված տեսակի միատեսակ լուծումը: Նորմ-ամբողջի և նորմ-մասի մրցակցության վերաբերյալ խորքային տեսական վերլուծությունների անհրաժեշտության մասին

նշված է նաև ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույցում¹:

Սույն հետազոտության նպատակն է տեսական գրականության ուսումնասիրության և քր. օր-ի համապատասխան նորմերի համակարգային վերլուծության միջոցով ներկայացնել նորմ-ամբողջի և նորմ-մասի մրցակցության տիպային դրսևորումներն ու առաջարկել այդ մրցակցության ճիշտ լուծման միասնական ալգորիթմը:

2. Ընդհանուր դրույթներ

Քր. օր-ի 52-րդ հոդվածի 6-րդ մասում նախատեսվել է նորմ-ամբողջի և նորմ-մասի մրցակցության հետևյալ կարգավորումը՝ «Եթե հանցակազմի բաղկացուցիչ մաս է այլ հանցանքի կատարումը, ապա դրա համար անձն առանձին ենթարկվում է քրեական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ այդ հանցագործության համար սույն օրենսգրքով հավասար կամ ավելի խիստ պատիժ է նախատեսված, քան այն հանցակազմի համար, որի բաղկացուցիչ մասն է տվյալ հանցանքը»:

Մրցակցության այս տեսակը տարբերվում է քր. օր-ի 52-րդ հոդվածով նախատեսված մրցակցության մյուս տեսակներից (մեղմացնող և ծանրացնող հանգամանքներով հանցակազմեր նախատեսող նորմերի մրցակցություն, ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցություն և այլն): Մրցակցության մյուս տեսակներից յուրաքանչյուրի համար օրենսդիրը սահմանել է մեկ անվերապահ լուծում, որը կախված չէ մրցակցող նորմերով նախատեսված պատիժների համեմատությունից և բխում է քր. օր-ի 52-րդ հոդվածի 1-ին մասի ընդհանուր կանոնից, այն է. «Քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում արարքը որակվում է սույն օրենսգրքի մեկ հոդվածով կամ հոդվածի մեկ մասով կամ կետով»:

Իսկ նորմ-ամբողջի և նորմ-մասի մրցակցության լուծումը կախված է դրանցով նախատեսված պատիժների համեմատությունից. եթե նորմ-մասով նախատեսված պատիժը հավասար կամ ավելի խիստ է, քան նորմ-ամբողջով նախատեսված պատիժը, ապա քր. օր-ի 52-րդ հոդվածի 1-ին

¹ Տե՛ս **Գաբուզյան Ա., Մարգարյան Ա., Միմոնյան Տ.**, ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց: 2022թ., էջ 121// <https://rm.coe.int/new-criminal-code-guideline-arm/1680a72c57> (վերջին մուտք 11.01.2023թ.):

մասով սահմանված ընդհանուր կանոնն այլևս չի գործում, և արարքը պետք է որակել հանցանքների համակցությամբ:

Փաստորեն, նորմ-ամբողջի և նորմ-մասի մրցակցությունը ճիշտ լուծելու համար անհրաժեշտ է հաջորդաբար լուծել երկու խնդիր՝

1) հաստատել, որ ընտրված նորմերը հարաբերակցվում են որպես ամբողջ և մաս,

2) համեմատել այդ նորմերով նախատեսված պատիժները և դրա հիման վրա որոշել արարքի որակումը՝ միայն նորմ-ամբողջով, թե՞ հանցանքների համակցությամբ:

Երկրորդ խնդրի լուծումը գործնականում բարդություններ չի առաջացնում: Առավել բարդ է առաջին խնդրի լուծումը: Որպեսզի հաստատենք, որ ընտրված նորմերը գտնվում են ամբողջի և մասի հարաբերության մեջ, պետք է հասկանանք, թե ինչ դրսևորումներ կարող է ունենալ նորմ-ամբողջի և նորմ-մասի մրցակցությունը:

3. Նորմ-ամբողջի և նորմ-մասի մրցակցության դրսևորումները, որոնք ենթակա են լուծման քր. օր-ի 52-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա

Վ.Ն. Կուդրյավցևը նորմ-ամբողջի և նորմ-մասի մրցակցությունը բնորոշել է որպես երկու կամ ավելի այնպիսի նորմերի առկայություն, որոնցից մեկն ընդգրկում է կատարված արարքն ամբողջությամբ, իսկ մյուսները՝ այդ արարքի միայն առանձին մասերը²:

Նշված բնորոշումից բխում է, որ նորմ-ամբողջի և նորմ-մասի մրցակցության մասին կարելի է խոսել միայն կոնկրետ արարքի կապակցությամբ: Միսալ է պնդել, թե քր. օր-ի այս կամ այն նորմը միշտ և անվերապահորեն հանդես է գալիս որպես մեկ այլ նորմի մաս: Օրինակ՝ սխալ կլինի պնդել, որ քր. օր-ի 194-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված նորմը (հոգեկան ներգործության հիմնական հանցակազմ) միշտ և անվերապահորեն հանդես է գալիս որպես քր. օր-ի 252-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված նորմի (ավազակության հիմնական հանցակազմ) մաս: Այսպես՝ հոգեկան ներգործության հանցակազմի օբյեկտիվ կողմի երկրնորելի դրսևորումներից է նաև գույք ոչնչացնելու սպառնալիքը, որը երբեք չի կարող դիտարկվել որպես ավազակության հանցակազմի մաս: Հակառակը, ավազակության հանցա-

² См. у Кудрявцев В.Н. Общая теория квалификации преступлений. – 2-е изд., переб. и допол. – М.: Юрист, 2006, էջեր 225-228:

կազմի երկընտրելի եղանակներից է բռնության գործադրումը, որը չի համապատասխանում հոգեկան ներգործության հանցակազմի օբյեկտիվ կողմի որևէ դրսևորմանը: Հոգեկան ներգործությունը սահմանող նորմը կարող է դիտարկվել որպես ավագակությունը սահմանող նորմի մաս միայն կոնկրետ արարքի կապակցությամբ, երբ հանցավորը գույքը հափշտակել է տուժածի նկատմամբ բռնության սպառնալիքով:

Նորմ-ամբողջի և նորմ-մասի մրցակցության բոլոր դրսևորումների համար ընդհանուր է այն, որ անձը մեկ կամ մի քանի արարքով կատարում է եզակի հանցանք, որի հատկանիշների մի մասը «ծածկվում» է միայն նորմ-ամբողջով, իսկ մյուս մասը «ծածկվում» է և՛ նորմ-ամբողջով, և՛ նորմ-մասով (նորմ-մասերով): Նորմ-ամբողջը և նորմ-մասը միմյանց հետ բովանդակային ենթակայության հարաբերության մեջ են³:

Նորմ-ամբողջի և նորմ-մասի մրցակցության դրսևորումներն առանձնացնելու հիմքում կարող են դրվել տարբեր չափանիշներ: Մեր կարծիքով՝ արարքի որակման համար նշանակություն ունեն հետևյալ չափանիշները՝

1) Նորմ-ամբողջով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի կառուցվածքը և ըստ այդմ՝ անձի կատարած արարքների քանակը (պարզ օբյեկտիվ կողմ (մեկ արարք) կամ բարդացված օբյեկտիվ կողմ (երկու կամ ավելի արարք)):

2) Նորմ-մասերի քանակը (մեկ նորմ-մաս կամ երկու կամ ավելի նորմ մասեր):

3) Նորմ-ամբողջով նախատեսված արարքի (արարքների) «ծածկվածությունը» նորմ-մասով (նորմ-մասերով) (Ոծածկվում էՈ ամբողջությամբ կամ «ծածկվում է» մասամբ):

4) Նորմ-ամբողջով նախատեսված հանցակազմի տեսակն ըստ նկարագրման եղանակի (նյութական կամ ձևական (հատված)):

5) Նորմ-ամբողջով նախատեսված հետևանքի «ծածկվածությունը» նորմ-մասով (նորմ-մասերով) («ծածկվում է» ամբողջությամբ, «ծածկվում է» մասամբ, չի «ծածկվում»):

Մեր հաշվարկներով՝ տեխնիկապես կարելի է առանձնացնել վերոնշյալ տարբերակների 48 համադրություն, սակայն գործնականում հնարավոր է

³ Տե՛ս **Գրիգորյան Գ.Թ.**, Քրեաիրավական նորմերի մրցակցությունը: Մենագրություն: Երևան, ՈԼԻՆՈՒՄ հրատ., 2008, էջ 74:

նորմ-ամբողջի և նորմ-մասի մրցակցության՝ վերոնշյալ չափանիշների տարբեր համադրությամբ առանձնացված 13 դրսևորում⁴:

Ստորև ներկայացվում են նորմ-ամբողջի և նորմ-մասի մրցակցության առավել տիպային դրսևորումները:

1) Անձը մեկ արարքով կատարել է պարզ օբյեկտիվ կողմով նյութական հանցակազմով հանցանք, որն ամբողջությամբ «ծածկվում» է նորմ-ամբողջով, իսկ այդ հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող արարքը (գործողություն կամ անգործություն) «ծածկվում» է նաև մեկ նորմ-մասով: Տվյալ դեպքում նորմ-մասով չի «ծածկվում» հանցակազմի օբյեկտիվ կողմի մեկ այլ պարտադիր հատկանիշ՝ հետևանքը: *Օրինակ՝ հանցավորը տուժածին սպառնացել է, որ նրա նկատմամբ կկատարի սեքսուալ բնույթի բռնի գործողություն, ինչի արդյունքում տուժածն ինքնասպանություն է գործել: Գործով հաստատվել է, որ հանցավորը գործել է անուղղակի դիտավորությամբ, այսինքն՝ տուժածի ինքնասպանությունը նրա նպատակը չի եղել, սակայն նա նախատեսել է դրա իրական հնարավորությունը, և նրա համար միևնույն է եղել՝ տուժածն ինքնասպան կլինի՞, թե՞ ոչ:*

Նշված արարքն ամբողջությամբ «ծածկվում» է նորմ-ամբողջով՝ քր. օր-ի 162-րդ հոդվածի 3-րդ մասով (սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ արժանապատվությունը նվաստացնելու եղանակով անձին ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը)⁵: Հանցավորի կատարած բռն արարքը՝ սեքսուալ բնույթի բռնի գործողություն կատարելու սպառնալիքը «ծածկվում» է նորմ-մասով՝ 194-րդ հոդվածի 1-ին մասով (հոգեկան ներգործությունը): Ընդ որում՝ նորմ-ամբողջով և նորմ-մասով նախատեսված հանցակազմերի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող արարքներն ամբողջությամբ համընկնում են: Նորմ-մասով չի «ծածկվում» նորմ-ամբողջով նախատեսված հետևանքը՝ տուժածի ինքնասպանությունը:

⁴ Օրինակ՝ հնարավոր չէ, որ նորմ-ամբողջով նախատեսված լինի ձևական հանցակազմով հանցանք, և նորմ-մասով Ոճածկվի ը նորմ-ամբողջով նախատեսված հետևանքը, քանի որ ձևական հանցակազմում չի կարող լինել հետևանք:

⁵ Այս և հետագա օրինակներում քր. օր-ի Հատուկ մասի այս կամ այն հոդվածի մասը (կետը) մենք նորմ ենք անվանում որոշակի վերապահումով, քանի որ իրականում նորմի որոշ մասեր (հանցագործության սուբյեկտի տարիքը և մեղսունակությունը սահմանող) ամրագրված են քր. օր-ի Ընդհանուր մասում:

2) Անձը մեկ արարքով կատարել է պարզ օբյեկտիվ կողմով նյութական հանցակազմով հանցանք, որն ամբողջությամբ «ծածկվում» է նորմ-ամբողջով, իսկ այդ հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող արարքը (գործողություն կամ անգործություն) և հետևանքի մի մասը «ծածկվում» են նաև մեկ նորմ-մասով: Տվյալ դեպքում նորմ-մասով չի «ծածկվում» հետևանքի մյուս մասը: *Օրինակ՝ հանցավորը տուժածին սպանելու նպատակով դանակով դիտավորությամբ հարվածել է նրա կրծքավանդակին՝ առողջությանը պատճառելով կյանքի համար վտանգավոր ծանր վնաս, ինչից տուժածը մահացել է:*

Այս դեպքում նորմ-ամբողջն սպանությունը նախատեսող նորմն է (քր. օր-ի 155-րդ հոդվածի 1-ին մաս), իսկ նորմ մասը՝ առողջությանը ծանր վնաս պատճառելը նախատեսող նորմը (քր. օր-ի 166-րդ հոդվածի 1-ին մաս): Տվյալ դեպքում նորմ-մասով ամբողջությամբ «ծածկվում» է նորմ-ամբողջով նախատեսված հանցանքի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող արարքը՝ դանակով տուժածի կրծքավանդակին հարվածելը: Բացի այդ արարքից, հանցավորը տուժածին սպանելուն ուղղված որևէ այլ արարք չի կատարել: Այսինքն՝ տուժածին դանակով հարվածելը միաժամանակ և՛ սպանության, և՛ առողջությանը ծանր վնաս պատճառելու օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է: Ըստ էության՝ սպանությունը հնարավոր չէ կատարել առանց տուժածի առողջությանը վնաս պատճառելու: Մասնագիտական գրականության մեջ նույնիսկ կարծիք է արտահայտվել այն մասին, որ սպանությունը կարելի էր բնորոշել որպես մեկ ուրիշի առողջությանը վնաս պատճառելու միջոցով նրան ապօրինաբար կյանքից զրկել⁶: Փաստորեն, քննարկվող դեպքում նորմ-մասը «ծածկում» է ոչ միայն նորմ-ամբողջով նախատեսված հանցանքի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող արարքը, այլև հետևանքի մի մասը⁷:

Ընդ որում՝ քննարկվող դեպքում նույնիսկ եթե նորմ-ամբողջով նախատեսված հանցանքն ավարտին չհասցվի հանցավորի կամքից անկախ հանգամանքներով, ապա այդ հանցանքի փորձը նախատեսող նորմը, մինևույն է, հանդես է գալու որպես նորմ-ամբողջ: Այսինքն՝ սպանության փորձը կլա-

⁶ St' u **Ораздурдыев А.М.** Характеристика объекта составного преступления//Вестник Волжского университета им. **В. Н. Татищева.** 2011, № 75, էջեր 80-85:

⁷ Որքան էլ տարօրինակ հնչի, քրեաիրավական իմաստով տուժածի առողջությանը պատճառված վնասը պետք է համարել նրա մահվան մի մասը:

նում է առողջությանը ծանր վնաս պատճառելուն: Դա բխում է քր. օր-ի 44-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կանոնից՝ համաձայն որի. «Եթե հանցափորձի ժամանակ հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված վնասից ավելի փոքր վնաս է պատճառվում, քան ընդգրկված էր դիտավորության մեջ, ապա դա կլանվում է անձի դիտավորության մեջ»:

3) Անձը երկու կամ ավելի արարքներով կատարել է բարդացված օբյեկտիվ կողմ ունեցող մեկ հանցանք, որն ամբողջությամբ «ծածկվում» է նորմ-ամբողջով, իսկ այդ հանցանքի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող արարքներից մեկը «ծածկվում» է նաև մեկ նորմ-մասով: Տվյալ դեպքում նորմ-մասով չի «ծածկվում» հանցակազմի պարտադիր հատկանիշ հանդիսացող մյուս արարքը: Ընդ որում՝ «չծածկվող» արարքը, առանձին վերցրած, ինքնուրույն հանցակազմ չի պարունակում⁸: *Օրինակ՝ հանցավորը չափահաս տուժածին սպանելու սպառնալիքով վերջինիս հետ ունեցել է սեռական հարաբերություն:*

Կատարված արարքն ամբողջությամբ «ծածկվում» է նորմ-ամբողջով՝ քր. օր-ի 198-րդ հոդվածի 1-ին մասով (սեքսուալ բնույթի բռնի գործողությունները): Նշված հանցագործության օբյեկտիվ կողմը բարդացված է և բաղկացած է երկու արարքներից՝ սպանության սպառնալիք և սեռական հարաբերություն: Սպանության սպառնալիքը «ծածկվում» է նաև նորմ-մասով՝ քր. օր-ի 194-րդ հոդվածի 1-ին մասով (հոգեկան ներգործությունը): Նորմ-մասով «չծածկվող» մասը՝ չափահաս անձի հետ սեռական հարաբերությունը, առանձին վերցրած, ինքնուրույն հանցակազմ չի պարունակում: Տվյալ դեպքում եթե նորմ-մասը պայմանականորեն ուժը կորցրած ճանաչվի, ապա կատարված արարքի ոչ մի մաս դուրս չի մնա հանցավոր համարվող արարքների շրջանակից: Սակայն եթե պայմանականորեն ուժը կորցրած ճանաչվի նորմ-ամբողջը, ապա կատարված արարքի մի մասը՝ չափահաս անձի հետ սեռական հարաբերությունը, դուրս կմնա հանցավոր համարվող արարքների շրջանակից:

4) Անձը երկու կամ ավելի արարքներով կատարել է բարդացված օբյեկտիվ կողմ ունեցող մեկ հանցանք, որն ամբողջությամբ «ծածկվում» է նորմ-ամ-

⁸ Քննարկվող դեպքում նորմ-ամբողջով կարող է նախատեսված լինել ինչպես նյութական, այնպես էլ ձևական (հատված) հանցակազմ: Եթե նորմ-ամբողջով նախատեսված է նյութական հանցակազմ, ապա նորմ-մասով նախատեսված հանցակազմը ևս պետք է լինի նյութական, որպեսզի ՈճածկիՈ նորմ-ամբողջով նախատեսված հետևանքը:

բողջով, իսկ այդ հանցանքի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող արարքներից յուրաքանչյուրը «ծածկվում» է առանձին նորմ-մասերով: Տվյալ դեպքում մի նորմ-մասը, առանձին վերցրած, չի «ծածկում» այն արարքը, որը «ծածկում» է մյուս նորմ-մասը: Ընդ որում՝ նորմ-մասերով «ծածկվող» արարքները, առանձին վերցրած, ինքնուրույն հանցակազմ են պարունակում⁹: Քննարկվող դեպքում գործ ունենք բաղկացական հանցագործության հետ¹⁰: *Օրինակ՝ հանցավորը տուժածի պայուսակը հափշտակելու նպատակով նրա առողջությանը պատճառել է միջին ծանրության վնաս, որից հետո տուժածի աչքի առաջ նրանից վերցրել է պայուսակը և դիմել փախուստի:*

Նշված արարքն ամբողջությամբ «ծածկվում» է ավագակության հանցակազմը նախատեսող նորմով (քր. օր-ի 252-րդ հոդվածի 1-ին մաս), որը հանդես է գալիս որպես նորմ-ամբողջ: Մինևույն ժամանակ կատարված հանցանքը բաղկացած է երկու առանձին արարքներից՝ տուժածի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը և նրա պայուսակը բացահայտ հափշտակելը, որոնք նախատեսված են նորմ-մասերով (համապատասխանաբար քր. օր-ի 167-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետ և 253-րդ հոդվածի 1-ին մաս): Տվյալ դեպքում էթե նորմ-մասերը պայմանականորեն ուժը կորցրած ճանաչվեն, ապա կատարված արարքի ոչ մի մաս դուրս չի մնա հանցավոր համարվող արարքների շրջանակից: Մինևույն ժամանակ, էթե պայմանականորեն ուժը կորցրած ճանաչվի նորմ-ամբողջը, ապա կատարված

⁹ Քննարկվող դեպքում նույնպես նորմ-ամբողջով կարող է նախատեսված լինել ինչպես նյութական, այնպես էլ ձևական (հատված) հանցակազմ: Եթե նորմ-ամբողջով նախատեսված է նյութական հանցակազմ, ապա նորմ-մասերից առնվազն մեկով նախատեսված հանցակազմը ևս պետք է լինի նյութական, որպեսզի «ծածկի» նորմ-ամբողջով նախատեսված հետևանքը:

¹⁰ Բաղկացական հանցանքները եզակի բարդ հանցանքների տեսակներից մեկն են: Չնայած մասնագիտական գրականության մեջ հանդիպող բաղկացական հանցանքի բնորոշումների որոշ տարբերություններին, քրեական իրավունքում ընդհանուր առմամբ պահպանվում է դեռևս անցյալ դարի կեսերին տրված այն բնորոշման տրամաբանությունը՝ ըստ որի բաղկացական են համարվում երկու կամ ավելի հանցանքներից բաղկացած հանցանքները, և հենց այդ պատճառով էլ դրանք կոչվում են բաղկացական: Առավել մանրամասն տե՛ս, օրինակ, **Кузнецова Н. Ф.** Значение преступных последствий для уголовной ответственности. - М., 1958. էջ 117; Советское уголовное и исправительно-трудовое право. Книга 1. Общая часть советского уголовного права: Учебник. - М., 1987. էջ 100; **Галиакбаров Р., Ефимов М., Фролов Е.** Множественность преступных деяний как институт советского уголовного права // Советская юстиция. 1967. № 2. էջ 6, **Գրիգորյան Գ.Թ.**, Նշված աշխ., էջեր 76-77:

արարքի ոչ մի մաս նույնպես դուրս չի մնա հանցավոր համարվող արարքների շրջանակից, քանի որ այդ արարքն ամբողջությամբ «կծածկվի» երկու նորմ-մասերով: Պարզապես օրենսդիրը երկու առանձին հանցանքներից բաղկացած արարքը նախատեսել է որպես ինքնուրույն հանցանք՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ հանցանքների հատկապես այդպիսի համադրությունը հարաբերականորեն տարածված է, ինչի շնորհիվ այն ձեռք է բերում կրիմինալոգիական տիպայնություն¹¹:

Բերված օրինակում բաղկացական հանցանքը նախատեսված է քր. օր-ի Հատուկ մասի հոդվածի առաջին մասով և հիմնական հանցակազմ պարունակող հանցանք է: Սակայն բաղկացական հանցանքը կարող է հանդես գալ նաև որպես ծանրացնող հանգամանքներով հանցանք: *Օրինակ՝ հանցավորը, տուժածի կամքին հակառակ, նրա առողջությանը թեթև վնաս պատճառելով, ապօրինի մուտք է գործել վերջինիս բնակարան*: Այս օրինակում նորմ-ամբողջը քր. օր-ի 207-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետն է (բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը, որը կատարվել է բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով), իսկ նորմ-մասերն են քր. օր-ի 171-րդ հոդվածի 1-ին մասը և 207-րդ հոդվածի 1-ին մասը:

4. Իրավիճակներ, որոնց դեպքում քր. օր-ի 52-րդ հոդվածի 6-րդ մասը կիրառելի չէ

Գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ առկա են անձի կատարած արարքն ամբողջությամբ և մասամբ «ծածկող» նորմեր, որոնք արտաքուստ գտնվում են ամբողջի և մասի հարաբերության մեջ, սակայն քր. օր-ի 52-րդ հոդվածի 6-րդ մասը կիրառելի չէ: Այդ իրավիճակներում արարքը պետք է որակել միայն նորմ-ամբողջով՝ ղեկավարվելով քր. օր-ով սահմանված որևէ այլ կանոնով: Մասնավորապես, խոսքը հետևյալ իրավիճակների մասին է:

1) **Անձը կատարել է նորմ-մասերով «ծածկվող» երկու կամ ավելի արարք, որոնք կազմում են շարունակվող հանցագործություն, որն իր հերթին ամբողջությամբ «ծածկվում» է նորմ-ամբողջով:** *Օրինակ՝ խանութի գանձապահը, միասնական դիտավորություն ունանալով իրեն վստահված դրամական մի-*

¹¹ Արարքի տիպայնության և քրեաիրավական արգելքներ սահմանելիս օրենսդրի կողմից հաշվի առնվող այլ հանգամանքների մասին առավել մանրամասն տե՛ս **Մարկոսյան Մ.**, Քրեականացման և ապաքրեականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Երևան, ՈԼԻմուշԹ հրատ., 2011թ., էջեր 66-96:

ջոզներից հափշտակել 600.000 ՀՀ դրամ, այդ դիտավորությունն իրագործել է երկու օրվա ընթացքում՝ յուրաքանչյուր օր հափշտակելով 300.000 ՀՀ դրամ:

Տվյալ օրինակում հանցավոր արարքի դրվագներից յուրաքանչյուրը պարունակում է քր. օր-ի 256-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմը (վստահված գույքը հափշտակելը), իսկ միասին վերցրած՝ այդ դրվագները շարունակվող հանցագործություն են, որը նախատեսված է նորմ-ամբողջով՝ քր. օր-ի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (վստահված գույքը հափշտակելը, որը կատարվել է խոշոր չափերով): Այս դեպքում մի նորմ-մասը չի «ծածկում» մյուս նորմ-մասով նախատեսված արարքը: Թեև նշված օրինակում հանցավոր արարքի դրվագները միասնական հանցագործության բաղկացուցիչ մասեր են, նշված արարքը որակելիս քր. օր-ի 52-րդ հոդվածի 6-րդ մասը կիրառման ենթակա չէ: Տվյալ դեպքում արարքը որակելիս անհրաժեշտ է ղեկավարվել քր. օր-ի 51-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կանոնով, որի համաձայն հանցագործությունների բազմակիությունը բացակայում է մեկ շարունակվող հանցագործության դեպքում:

2) Անձը կատարել է արարք, որն ամբողջությամբ Ոճածկվում է նորմ-ամբողջով և մասամբ «ծածկվում» է նորմ-մասով, սակայն նորմ-մասի վկայակոչող դիսպոզիցիայում նշված է նորմ-ամբողջով նախատեսված հանցանքի հատկանիշների բացակայության մասին: *Օրինակ՝ հանցավորն առևանգել է տուժածին:*

Տվյալ օրինակում նորմ-ամբողջը քր. օր-ի 191-րդ հոդվածի 1-ին մասն է (մարդուն առևանգելը), իսկ նորմ-մասը՝ 192-րդ հոդվածի 1-ին մասը (ազատությունից ապօրինի զրկելը): Թեև նշված օրինակում ազատությունից ապօրինի զրկելը մարդուն առևանգելու բաղկացուցիչ մաս է, նշված արարքը որակելիս քր. օր-ի 52-րդ հոդվածի 6-րդ մասը կիրառման ենթակա չէ: Քր. օր-ի 192-րդ հոդվածի կիրառումն ի սկզբանե բացառվում է, քանի որ դրանով նախատեսված է հանցակազմի նեգատիվ հատկանիշ¹²՝ 191-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշների բացակայությունը:

5. Նորմ-ամբողջի և նորմ-մասի մրցակցության լուծման ալգորիթմը

Հանցանքի որակման սովորական իրավիճակներում իրավակիրառողը գլխավորապես գործ ունի երկու համադրվող օբյեկտների հետ՝ կատարված

¹² Նեգատիվ են կոչվում հանցակազմի այն հատկանիշները, որոնք մատնանշում են տվյալ հանցավոր արարքի այս կամ այն որակների և հատկությունների բացակայությունը: Առավել մանրամասն տե՛ս **Кудрявцев В.Н.** Նշված աշխ., 2006, էջ 104:

արարքը և քրեաիրավական նորմը: Նորմ-ամբողջի և նորմ-մասի մրցակցության լուծման դեպքում համադրվող օբյեկտները չորսն են՝ արարք-ամբողջը, արարք-մասը, նորմ-ամբողջը և նորմ-մասը: Ելնելով դրանից՝ կարծում ենք, որ նորմ-ամբողջի և նորմ-մասի մրցակցության լուծման համար անհրաժեշտ է դեկլարվել այնպիսի միասնական ալգորիթմով, որը թույլ կտա ստուգել նշված չորս օբյեկտների ճիշտ հարաբերակցությունը:

Եվ այսպես, պատկերացնենք, որ անձը կատարել է արարք (արարք-ամբողջը), որից հնարավոր է առանձնացնել առանձին բաղկացուցիչ մաս (արարք-մասը), և իրավակիրառողն ընտրել է երկու քրեաիրավական նորմ, որոնցից մեկը (նորմ-ամբողջը) «հավակնում է ծածկել» արարք-ամբողջին, իսկ մյուսը (նորմ-մասը կամ նորմ-մասերը) «հավակնում է (են) ծածկել» արարք-մասին: Նման իրավիճակներում առաջարկում ենք դեկլարվել հաջորդական գործողություններից բաղկացած հետևյալ միասնական ալգորիթմով:

1) Արարք-ամբողջի և նորմ-ամբողջի համապատասխանության ստուգում: Այս գործողության նպատակն է հաստատել, որ արարք-ամբողջն իր բաղկացուցիչ մասերի միասնության ուժով հնարավոր է բնութագրել որպես եզակի հանցանք:

Մասնագիտական գրականության մեջ եզակի հանցանքը բնորոշվում է որպես մեկ կամ մի քանի գործողություններից (անգործությունից) բաղկացած արարք, որը բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների միասնությամբ և համապատասխանում է մեկ քրեաիրավական նորմին¹³:

Արարք-ամբողջի բաղկացուցիչ մասերի միասնությունը հաստատելու համար նախ անհրաժեշտ է առանձնացնել արարք-ամբողջի հատկանիշների երկու խումբ՝ այն հատկանիշները, որոնք համընկնում են արարք-մասի հետ և այն հատկանիշները, որոնք չեն համընկնում արարք-մասի հետ: Այնուհետև անհրաժեշտ է պարզել, թե արդյո՞ք հատկանիշների այդ երկու խմբերը կապված են օբյեկտիվ և սուբյեկտիվ կապերով:

Օբյեկտիվ կապը կարող է արտահայտվել արարքի, դրա կատարման տեղի, ժամանակի, եղանակի, իրադրության, գործիքի և միջոցի, հանցագոր-

¹³ St' u **Куличенко Н. Н.** Уголовно-правовая оценка единичного сложного преступления. Дисс. ...канд. юрид. наук. Омск, 2006, էջ 11:

ծության առարկայի, տուժածի ընդհանրության մեջ, ինչպես նաև արարք-մասի և արարք-ամբողջի հետևանքի միջև առկա պատճառական կապի մեջ:

Ինչ վերաբերում է սուբյեկտիվ կապին, ապա դրա բովանդակությունը կախված է արարք-ամբողջի հանցակազմի տեսակից և սուբյեկտիվ կողմի առանձնահատկություններից:

Մասնավորապես, եթե արարք-ամբողջը ձևական հանցակազմով դիտավորյալ հանցանք է, ապա անհրաժեշտ է հաստատել, որ արարք-մասը կատարելիս հանցավորը գիտակցել է նաև արարք-մասի հետ չհամընկնող փաստական հանգամանքները, և արարք-ամբողջի կատարումը եղել է նրա նպատակը կամ նպատակին հասնելու միջոցը, (ուղղակի դիտավորություն) կամ տվյալ արարքի իրականացումը նրա նպատակը չէր, այնուամենայնիվ, նա կատարել է դա (անուղղակի դիտավորություն):

Եթե արարք-ամբողջը նյութական հանցակազմով դիտավորյալ հանցանք է, ապա անհրաժեշտ է հաստատել, որ արարք-մասը կատարելիս արարք-ամբողջի հետևանքների առաջացումն անձի նպատակն է եղել կամ նպատակին հասնելու միջոց, կամ նա նախատեսել է դրանց առաջացման անխուսափելիությունը (ուղղակի դիտավորություն) կամ արարք-ամբողջի հետևանքների առաջացումն անձի նպատակը չի եղել, սակայն նա նախատեսել է դրանց առաջացման իրական հնարավորությունը, և նրա համար միննույն է եղել՝ դրանք կառաջանա՞ն, թե՞ ոչ (անուղղակի դիտավորություն):

Հարկ է նշել, որ դեպքերի մեծամասնությունում արարք-ամբողջի կատարման դիտավորությունն անձի մոտ ձևավորված է լինում նախքան արարք-մասի կատարումը: Սակայն որոշ դեպքերում հնարավոր է, որ անձի մոտ արարք-ամբողջին ուղղված դիտավորությունն առաջանա արարք-մասը կատարելու ընթացքում: Խոսքն այն դեպքերի մասին է, երբ հանցավորի սկզբնական դիտավորությամբ ընդգրկված լինի միայն նորմ-մասով նախատեսված հանցանքի կատարումը, սակայն դրա ընթացքում հանցավորի դիտավորությունը փոխվի, և այդ հանցանքը վերաճի¹⁴ նորմ-ամբողջով նա-

¹⁴ Մի հանցանքից մեկ այլ հանցանքի վերաճած արարքը կարող է դիտարկվել որպես եզակի հանցանք այն դեպքում, երբ սկզբնական (վերաճող) և հետագա (վերաճած) հանցանքները նախատեսված են քրեական օրենսգրքի Հատուկ մասի նույն գլխով և ուղղված են նույն տուժածի (առարկայի) դեմ: Առավել մանրամասն տե՛ս **Чижин Д.С.**

խատեսված հանցանքի: Օրինակ՝ հանցավորը ցանկացել է առանց բռնություն գործադրելու կամ դրա սպառնալիքի տուժածի ձեռքից խլել պայուսակն ու դիմել փախուստի: Տուժածի ձեռքից պայուսակը խլելու ընթացքում վերջինս բռնել է հանցավորի ձեռքն ու փորձել է հետ վերցնել պայուսակը: Բռնվածքից ազատվելու և հափշտակությունն ավարտին հասցնելու համար հանցավորը բռունցքով հարվածել է տուժածի դեմքին՝ նրա առողջությանը պատճառելով թեթև վնաս, և պայուսակով հանդերձ դիմել է փախուստի:

Նշված օրինակում նորմ-ամբողջը 252-րդ հոդվածի 1-ին մասն է (ավագակություն), և առկա են երկու նորմ-մասեր՝ քր. օր-ի 253-րդ հոդվածի 1-ին մասը (կողոպուտ) և 171-րդ հոդվածի 1-ին մասը (առողջությանը թեթև վնաս պատճառելը): Հանցավորի երկու արարքները՝ տուժածի պայուսակը խլելն ու նրա առողջությանը թեթև վնաս պատճառելը, իրենց միասնության մեջ կազմում են եզակի հանցանք՝ ավագակություն:

Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ արարք-ամբողջն անզգույշ հանցանք է, ապա այդ պարագայում անհրաժեշտ է հաստատել, որ արարք-մասը կատարելիս անձը նախատեսել է արարք-ամբողջի վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն առանց բավարար հիմքերի համոզված է եղել, որ տվյալ դեպքում դրանք կկանխվեն (հանցավոր ինքնավստահություն), կամ չի նախատեսել արարք-ամբողջի վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, թեև տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր նախատեսել (հանցավոր անփութություն):

Այսպիսով՝ եթե արարք-ամբողջի հատկանիշների միջև օբյեկտիվ կամ սուբյեկտիվ կապերը բացակայում են, ապա բացակայում է նաև եզակի հանցանքը, ուստի նորմ-ամբողջի և նորմ-մասի մրցակցություն առկա չէ:

Օրինակ՝ հանցավորն սպառնացել է տուժածին, որ կտռանգի վերջինիս, որից հետո տուժածն ինքնասպանություն է գործել: Գործով հաստատվել է, որ հանցավորը տուժածի ինքնասպանության նկատմամբ դրսևորել է անուղղակի դիտավորություն: Մինևույն ժամանակ գործով հաստատվել է, որ տուժածը ինքնասպանություն գործել է ոչ թե իրեն ուղղված առևանգման սպառնալիքի պատճառով, այլ անպատասխան սիրո պատճառով:

Բերված օրինակում բացակայում է արարք-ամբողջը, քանի որ հանցավորի կատարած արարքն ամբողջությամբ չի համապատասխանում քր. օր-ի 162-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցակազմի հատկանիշներին (սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ արժանապատվությունը նվաստացնելու եղանակով անձին ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը): Մասնավորապես, բացակայում է հանցավորի արարքի և վտանգավոր հետևանքի միջև պատճառական կապը, որը նշված հանցակազմի պարտադիր հատկանիշ է: Բերված օրինակում հանցավորի բուն արարքն առանց հետևանքի՝ առևանգման սպառնալիքը, պարունակում է հոգեկան ներգործության հանցակազմ (քր. օր-ի 194-րդ հոդվածի 1-ին մաս): Թեև այդ արարքի ու առաջացած հետևանքի միջև առերևույթ առկա է սուբյեկտիվ կապ՝ անուղղակի դիտավորության ձևով, այուամենայնիվ, արարք-ամբողջը բացակայում է: Հետևաբար՝ չկա նաև նորմ-ամբողջի և նորմ-մասի մրցակցություն, և հանցավորի արարքը պարզապես պետք է որակել որպես հոգեկան ներգործություն:

Քննարկենք մեկ այլ օրինակ: Հանցավորը վրեժի շարժառիթով ծանր վնաս է պատճառել տուժածի առողջությանը, որից հետո նրա մոտ դիտավորություն է առաջացել բացահայտ հափշտակել վիրավոր տուժածի դրամապանակը, ինչը հանցավորը կատարել է:

Նշված օրինակում հանցավորի երկու արարքները կապված են օբյեկտիվ կապերով, ինչը դրսևորվել է դրանց կատարման տեղի, ժամանակի, տուժածի ընդհանրության ձևով: Սակայն այդ արարքները, միասին վերցրած. չեն կարող դիտարկվել որպես եզակի հանցանք (ավազակություն), քանի որ բացակայում է արարքների միջև սուբյեկտիվ կապը: Ավազակության սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է այն, որ բռնությունը կամ սպառնալիքն ի սկզբանե պետք է ուղղված լինի գույքը հափշտակելուն:

Հարկ է նշել, որ երկու արարքների միջև օբյեկտիվ և սուբյեկտիվ կապերի հաստատումը դեռևս բավարար չէ պնդելու համար, որ այդ արարքներն իրենց միասնության մեջ եզակի հանցանք են: Անհրաժեշտ է հաստատել նաև, որ արարքների հատկապես այդպիսի համադրությունն օրենսդիրը նախատեսել է որպես մեկ քրեաիրավական նորմով նախատեսված միասնական հանցանք:

Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է հաստատել, որ արարք-ամբողջն իր մեջ ներառում է այն փաստական հանգամանքները, որոնք բավարար են

նորմ-ամբողջով նախատեսված հանցակազմի առկայության համար: *Օրինակ՝ հանցավորը ցանկացել է սպանել տուժածին, որը գտնվել է անցագրային ռեժիմ ունեցող շենքում: Այդ շենք մուտք գործելու համար հանցավորն օգտագործել է կեղծ փաստաթուղթ, ինչից հետո կատարել է սպանությունը:*

Բերված օրինակում հանցավորի կատարած երկու արարքները, պարունակելով ինքնուրույն հանցակազմեր (կեղծ փաստաթուղթ օգտագործելը և սպանությունը), կապված են օբյեկտիվ և սուբյեկտիվ կապերով: Օբյեկտիվ կապն արտահայտվում է արարքների կատարման տեղի և ժամանակի ընդհանրության մեջ: Սուբյեկտիվ կապն արտահայտվում է նրանում, որ կեղծ փաստաթուղթ օգտագործելու նպատակը սպանության համար նպաստավոր պայմաններ ստեղծելն է: Սակայն նշված երկու արարքներն իրենց միասնության մեջ չեն կարող դիտարկվել որպես արարք-ամբողջ, քանի որ քր. օր-ում չկա նորմ, որով որպես եզակի հանցանք նախատեսված կլիներ կեղծ փաստաթուղթ օգտագործելով սպանություն կատարելը: Սպանության հանցակազմի որևէ հատկանիշ չի «ծածկում» կեղծ փաստաթղթի օգտագործումը: Հետևաբար՝ քննարկվող իրավիճակում արարքը պետք է որակվի ոչ թե նորմ-ամբողջի և նորմ-մասի մրցակցության լուծման, այլ հանցանքների համակցության կանոններով:

2) Արարք-մասի և նորմ-մասի համապատասխանության ստուգում: Այս գործողության նպատակն է հաստատել, որ արարք-մասը պարունակում է ինքնուրույն հանցակազմ, այսինքն՝ արարք-մասի փաստական հանգամանքներն իրենց ամբողջության մեջ համապատասխանում են նորմ-մասով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշներին: Դրա համար անհրաժեշտ է պայմանականորեն ընդունել, որ նորմ-ամբողջը կորցրել է իր ուժը, և պարզել, թե արդյո՞ք արարք-մասն ամբողջությամբ «ծածկվում» է նորմ-մասով, թե՞ արարք-մասի որևէ փաստական հանգամանք դուրս է մնում նորմ-մասով նախատեսված հանցակազմի շրջանակներից կամ հակառակը՝ նորմ-մասով նախատեսված հանցակազմի որևէ հատկանիշ «մնում է օդում», քանի որ արարքում բացակայում է դրան համապատասխանող փաստական հանգամանքը:

Եթե պարզվի, որ արարք-մասն ամբողջությամբ չի համապատասխանում նորմ-մասին, ապա դա կնշանակի, որ արարք-մաս, որպես այդպիսին չկա, հետևաբար՝ ալգորիթմի հաջորդ գործողություններին անցնելու անհրաժեշտությունն նույնպես չկա: *Օրինակ՝ հանցավորը տուժածին մեկ անգամ*

հայհոյելով նվաստացրել է վերջինիս արժանապատվությունը, ինչի հետևանքով տուժածն ինքնասպանություն է գործել: Գործով հաստատվել է, որ հանցավորը գործել է անուղղակի դիտավորությամբ:

Նշված արարքն ամբողջությամբ «ծածկվում» է նորմ-ամբողջով՝ քր. օր-ի 162-րդ հոդվածի 3-րդ մասով (սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ արժանապատվությունը նվաստացնելու եղանակով անձին ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը): Առաջին հայացքից կարող է թվալ, թե արարք-ամբողջից հնարավոր է առանձնացնել արարք-մասը՝ տուժածին մեկ անգամ հայհոյելը, առանց հետևանքի: Սակայն այդ արարքն ինքնին չի կարող դիտարկվել որպես արարք-մաս, քանի որ այն ինքուրույն հանցակազմ չի պարունակում: Այսպես՝ քր. օր-ի 194-րդ հոդվածի 1-ին մասը որպես հոգեկան ներգործության դրսևորում առանձնացնում է պատիվն ու արժանապատվությունը **պարբերաբար**¹⁵ (ընդգծումը մերն է՝ Մ.Մ.) նվաստացնելը: Դա նշանակում է, որ տուժածին մեկ անգամ հայհոյելն ինքնուրույն հանցակազմ չի պարունակում, հետևաբար, այդ արարքը քննարկվող իրավիճակում չի կարող դիտարկվել որպես արարք-մաս, և նորմ-ամբողջի ու նորմ-մասի մրցակցությունը բացակայում է:

3) Արարք-մասի և նորմ-ամբողջի համապատասխանության ստուգում: Այս գործողության նպատակն է հաստատել, որ արարք-մասի փաստական հանգամանքներն ամբողջությամբ «ծածկվում» են ոչ միայն նորմ-մասով, այլև նորմ-ամբողջով, իսկ ավելի կոնկրետ՝ նորմ-ամբողջով նախատեսված հանցակազմի այն հատկանիշներով, որոնք համընկնում են նորմ-մասով նախատեսված հանցակազմի հատկանիշներին:

Ընդ որում՝ երբ խոսում ենք նորմ-ամբողջով և նորմ-մասով նախատեսված հանցակազմերի համընկնող հատկանիշների մասին, նկատի չունենք, որ նորմ-ամբողջի և նորմ-մասի համընկնող հատկանիշների օրենսդրական նկարագրությունը պետք է բառացիորեն նույնանա: Դեպքերի մեծամասնությունում նորմ-ամբողջով նախատեսված հանցակազմի հատկանիշի ծավալն ավելի լայն է լինում, քան դրա հետ համընկնող՝ նորմ-մասով նախատեսված հանցակազմի հատկանիշի ծավալը: Օրինակ՝ նորմ-մասով կարող է նախատեսված լինել Ոստոջությանը միջին ծանրության վնաս պատճա-

¹⁵ Քր. օր-ի 3-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի համաձայն՝ պարբերաբար նշանակում է նույնաբնույթ արարքը երկու կամ ավելի անգամ կատարելը:

ռել՝ հատկանիշը, իսկ նորմ-ամբողջով՝ «բռնություն գործադրել» հատկանիշը, կամ՝ նորմ-մասով կարող է նախատեսված լինել «գույքը ոչնչացնելու սպառնալիք» հատկանիշը, իսկ նորմ-ամբողջով՝ «հարկադրանքի այլ ձև» հատկանիշը և այլն:

Ալգորիթմի այս գործողության էությունը հանգում է հետևյալին. անհրաժեշտ է պայմանականորեն ընդունել, որ նորմ-մասը կորցրել է ուժը, և պարզել՝ հնարավո՞ր է արդյոք առանձացնել նորմ-ամբողջով նախատեսված հանցակազմի հատկանիշների որոշակի խումբ, որն ամբողջությամբ «կծածկի» արարք-մասը: Այդ հարցին դրական պատասխան տալու դեպքում կարող ենք հաստատել, որ ընտրված նորմերն իսկապես գտնվում են ամբողջի և մասի հարաբերության մեջ, և անհրաժեշտ է անցնել ալգորիթմի վերջին գործողությանը:

Իսկ եթե ալգորիթմի այս գործողության արդյունքում կպարզվի, որ նորմ-ամբողջի «հավակնություն ունեցող» նորմով նախատեսված հանցակազմի հատկանիշներով հնարավոր չէ ամբողջությամբ «ծածկել» արարք-մասը, ապա դա կնշանակի, որ ընտրված նորմերը ոչ թե ամբողջի և մասի, այլ խաչավորման հարաբերության¹⁶ մեջ են: Այդ դեպքում արարքը պետք է որակել հանցանքների համակցության կանոններով:

Օրինակ՝ հանցավորը հափշտակել է տուժածի պայուսակը՝ իր մոտ ապօրինի պահվող հրազենով սպառնալով սպանել նրան:

Ալգորիթմի առաջին գործողությամբ հաստատում ենք, որ հանցավորի կատարած երկու արարքները՝ հրազենով սպառնալը և գույքը հափշտակելը միասին վերցված՝ կարող են դիտարկվել որպես եզակի հանցանք, քանի որ կապված են օբյեկտիվ և սուբյեկտիվ կապերով և համապատասխանում են մեկ քրեաիրավական նորմին՝ քր. օր-ի 252-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետին (ավազակություն, որը կատարվել է զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ):

Ալգորիթմի երկրորդ գործողությամբ հաստատում ենք, որ հանցավորի կատարածից կարելի է առանձնացնել մի արարք՝ հրազենն ապօրինի կրելը, որը պարունակում է ինքնուրույն հանցակազմ և համապատասխանում է քր.

¹⁶ Խաչավորման հարաբերության մեջ են այն հասկացությունները, որոնց ծավալները մասնակիորեն հատվում են: Տե՛ս **Քրուտյան Գ.Ա.**, Տրամաբանություն: Երևան, ԹԳԻտություն՝ հրատ., 1998, էջ 21:

օր-ի 335-րդ հոդվածի 1-ին մասին (ապօրինի կերպով հրազեն (բացառությամբ քաղաքացիական ուղորկափող հրազենի, դրա փամփուշտների կամ դրա բաղկացուցիչ մասերի), դրա հիմնական բաղկացուցիչ մաս, ռազմամթերք, ակոսափող հրազենի փամփուշտ, պայթուցիկ նյութ կամ պայթեցման սարք ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը, առաքելը կամ կրելը):

Ալգորիթմի երրորդ գործողությամբ անհրաժեշտ է պարզել, թե արդյո՞ք հրազեն ապօրինի կրելը «ծածկվում» է նաև քր. օր-ի 252-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով: Նշված կետում օգտագործված «գործադրել» հատկանիշը համադրելի է քր. օր-ի 335-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործված «կրել» հատկանիշի հետ, քանի որ հրազենը գործադրելիս անձն այն պահում է իր մոտ, այսինքն՝ կրում է: Սակայն քր. օր-ի 335-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի մեկ այլ հատկանիշը՝ «ապօրինի կերպով», համադրելի չէ քր. օր-ի 252-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հանցակազմի որևէ հատկանիշի հետ:

Արարքը քր. օր-ի 252-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով որակելու համար պարտադիր չէ, որ ավազակության ժամանակ գործադրվող հրազենն անձի մոտ գտնվի ապօրինի կերպով: Ավազակության այդ ծանրացնող հանգամանքն առկա կլինի նաև այն դեպքում, երբ անձն ավազակությունը կատարի իր մոտ օրինական կերպով գտնվող հրազենով: Հետևաբար՝ հրազենի կրման ապօրինությունը չի «ծածկվում» քր. օր-ի 252-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով¹⁷: Իսկ դա նշանակում է, որ քր. օր-ի 252-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը և 335-րդ հոդվածի 1-ին մասը կատարված արարքի կապակցությամբ գտնվում են ոչ թե ամբողջի և մասի, այլ խաչավորման հարաբերության մեջ: Այսպես՝ հնարավոր են դեպքեր, երբ անձը՝

1) ապօրինի կերպով կրի հրազեն, բայց դրա գործադրմամբ չկատարի ավազակություն,

2) հրազենի գործադրմամբ կատարի ավազակություն, բայց այդ հրազենը կրի օրինական կերպով,

3) ապօրինի կերպով կրվող հրազենով կատարի ավազակություն:

¹⁷ Նշված նորմով չեն ընդգրկվում նաև անձի կատարած այլ գործողություններ՝ հրազենն ապօրինի ձեռք բերելը և պահելը, սակայն նշված օրինակը քննարկելիս այդ հանգամանքը չենք շեշտադրել, քանի որ մեր նպատակն է ցույց տալ երկու հանցակազմերի մասնակիորեն համընկնող հատկանիշները:

Ելնելով վերոգրյալից՝ քննարկվող իրավիճակում հանցավորի արարքը ենթակա է որակման քր. օր-ի 252-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի և 335-րդ հոդվածի 1-ին մասի համակցությամբ:

4) **Նորմ-ամբողջով և նորմ-մասով նախատեսված պատիժների համեմատում և արարքի որակման վերաբերյալ որոշման կայացում:** Սա ալգորիթմի վերջին գործողությունն է: Եթե հասել ենք այս գործողությանը, նշանակում է՝ հաստատել ենք, որ ընտրված նորմերը գտնվում են ամբողջի և մասի հարաբերության մեջ, և առկա են նույն հարաբերության մեջ գտնվող երկու արարքներ: Սակայն դա դեռ բավարար չէ, որ մրցակցությունը լուծենք հոգուտ նորմ-ամբողջի:

Քր. օր-ի 52-րդ հոդվածի 6-րդ մասում նախատեսված կանոնի համաձայն՝ անհրաժեշտ է նաև համեմատել նորմ-ամբողջով և նորմ-մասով նախատեսված պատիժները: Պատժի առանձին տեսակների համեմատումն ըստ խստության պետք է կատարել քր. օր-ի 56-րդ հոդվածում դրանց թվարկման հերթականության հիման վրա, իսկ նույն պատժատեսակի չափերի համեմատումը պետք է կատարել տվյալ պատժատեսակի չափման հստակ միավորների (ամսական եկամտի չափ, ժամ, օր, ամիս, տարի) միջոցով:

Մրցակցությունը կարող է լուծվել հոգուտ նորմ-ամբողջի միայն այն դեպքում, երբ նորմ-մասով նախատեսված պատիժն ավելի մեղմ է, քան նորմ-ամբողջով նախատեսված պատիժը: Իսկ եթե նորմ-մասով նախատեսված պատիժը հավասար կամ ավելի խիստ է, քան նորմ-ամբողջով նախատեսված պատիժը, ապա արարքը ենթակա է որակման՝ հանցանքների համակցության կանոններով:

Այսպես՝ քննարկենք երեք օրինակ: Առաջին դեպքում հանցավորը տուժածի կամքին հակառակ ապօրինի մուտք է գործել նրա բնակարան՝ առողջությանը թեթև վնաս պատճառելով, երկրորդ դեպքում՝ միջին ծանրության վնաս պատճառելով, երրորդ դեպքում՝ ծանր վնաս պատճառելով:

Նշված բոլոր դեպքերում նորմ-ամբողջը քր. օր-ի 207-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետն է (բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը, որը կատարվել է բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով), որով նախատեսված առավելագույն պատիժը երեք տարի ժամկետով ազատազրկումն է:

Առաջին դեպքում նորմ-մասը քր. օր-ի 171-րդ հոդվածի 1-ին մասն է (առողջությանը թեթև վնաս պատճառելը), որով նախատեսված առավելագույն պատիժը մեկ տարի ժամկետով ազատազրկումն է: Երկրորդ դեպքում նորմ-մասը քր. օր-ի 167-րդ հոդվածի 1-ին մասն է (առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը), որով նախատեսված առավելագույն պատիժը երեք տարի ժամկետով ազատազրկումն է: Երրորդ դեպքում նորմ-մասը քր. օր-ի 166-րդ հոդվածի 1-ին մասն է (առողջությանը ծանր վնաս պատճառելը), որով նախատեսված առավելագույն պատիժը յոթ տարի ժամկետով ազատազրկումն է:

Առաջին դեպքում նորմ-մասով նախատեսված պատիժն ավելի մեղմ է, քան նորմ-ամբողջով նախատեսված պատիժը, հետևաբար՝ արարքը պետք է որակել միայն նորմ-ամբողջով: Երկրորդ դեպքում նորմ-մասով նախատեսված պատիժը հավասար է նորմ-ամբողջով նախատեսված պատժին, հետևաբար՝ արարքը պետք է որակել հանցանքների համակցությամբ: Երրորդ դեպքում նորմ-մասով նախատեսված պատիժն ավելի խիստ է, քան նորմ-ամբողջով նախատեսված պատիժը, հետևաբար՝ արարքը նույնպես պետք է որակել հանցանքների համակցությամբ:

6. Եզրակացություն

Սույն գիտական հոդվածի շրջանակներում առանձացրինք քր. օր-ի Հատուկ մասի նորմ-ամբողջի և նորմ-մասի մրցակցության տիպային դրսևորումներն ու առաջարկեցինք միասնական ալգորիթմ, որով պետք է լուծել քրեաիրավական նորմերի մրցակցության քննարկվող տեսակը: Կարծում ենք, որ նշված ալգորիթմի գործնական կիրառումը կնվազեցնի հանցագործությունների որակման սխալներն ու կնպաստի նորմ-ամբողջի և նորմ-մասի մրցակցության լուծման հարցում միատեսակ դատաքննչական պրակտիկայի ձևավորմանը:

Բանալի բառեր. քրեաիրավական նորմերի մրցակցություն, եզակի հանցանք, հանցանքների համակցություն, հանցանքի որակում, նորմ-ամբողջ, նորմ-մաս:

РАЗРЕШЕНИЕ КОНКУРЕНЦИИ НОРМЫ-ЦЕЛОГО И НОРМЫ-ЧАСТИ ПО НОВОМУ УГОЛОВНОМУ КОДЕКСУ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Маркосян Мисак Меружанович

Первый заместитель начальника

Образовательного комплекса полиции РА,

кандидат юридических наук, доцент,

полковник полиции

В статье дана общая характеристика конкуренции нормы-целого и нормы-части, представлены типичные проявления подобной конкуренции с разъяснением конкретных примеров, а также случаи, когда присутствуют нормы, внешне находящиеся в отношении целого и части, но совершенное деяние следует квалифицировать не по правилам разрешения конкуренции нормы-целого и нормы-части, а по какому-либо другому правилу, предусмотренному Уголовным кодексом. Подчеркнуто практическую направленность имеет та часть статьи, в которой автор предлагает единый алгоритм разрешения конкуренции нормы-целого и нормы-части.

Ключевые слова: конкуренция уголовно-правовых норм, единичное преступление, совокупность преступлений, квалификация преступления, норма-целое, норма-часть.

SOLUTION OF THE COMPETITION BETWEEN THE NORM-WHOLE AND THE NORM-PART ACCORDING TO THE NEW CRIMINAL CODE OF THE REPUBLIC OF ARMENIA

Markosyan Misak

First Deputy Head of the Educational

Complex of Police of the Republic of Armenia,

PhD, Associate Professor, Police Colonel

The article gives a general description of the competition between the norm-whole and the norm-part, presents typical manifestations of this competition with an explanation of specific examples, as well as cases when criminal-legal norms are externally present in the relationship between the whole and the part, but the act

should be characterized not in accordance with the rule of solving the competition between the norm-whole and the norm-part but according to some other norm stipulated by the criminal code. In that part of the article that has an emphasized practical orientation, the author proposes a united algorithm for solving the competition between the norm-whole and the norm-part.

Key words: competition of criminal-legal norms, single crime, a combination of crimes, qualification of crime, norm-whole, norm-part.

Հոդվածը գրախոսվել է՝ 25.01.2023թ.:
Ներկայացվել է տպագրության՝ 31.01.2023թ.:

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ (ԳԻՏԱ- ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

Մարուքյան Գայանե

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիա
Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական
դատավարության ամբիոնի դոցենտ,
Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ոստիկանության կապիտան*

Համառոտագիր: Գիտական հոդվածի շրջանակներում քննարկման առարկա են դարձել պայմանագրի հասկացության օրենսդրական սահմանման որոշ հիմնարար հարցեր՝ խնդիրը քննարկելով նաև իրավական ֆենոմենի՝ դոկտրինալ գրականության մեջ տեղ գտած բնորոշումների համատեքստում: Կատարված վերլուծական աշխատանքը թույլ է տվել ներկայացնել նաև պայմանագրի սահմանման ինքնուրույն տարբերակ՝ երևույթը քննարկելով բոլոր հնարավոր առանցքներում:

Բանալի բառեր: Պայմանագիր, պարտավորական հարաբերություններ, իրավական ֆենոմեն, գիտական գրականություն, օրենսդրական սահմանում:

Պայմանագիրը՝ որպես իրավական ֆենոմեն, դիտարկվում է հետևյալ հիմնական առանցքներում.

- Որպես իրավահարաբերության սկիզբ
- Որպես բուն իրավահարաբերություն
- Որպես ձև, որն ընդունում է տվյալ իրավահարաբերությունը¹:

Տեսական գրականության մեջ հատուկ նշանակություն է տրվում պայմանագրերի՝ որպես յուրօրինակ ֆենոմենի քննարկման հարցին:

Պայմանագիրը հնագույն իրավական կառուցակարգ է: Հնագույն ժամանակներում գործող իրավակարգավորումները թույլ էին տալիս պարտավորական հարաբերությունների առանցքում դիտարկել բացառապես դելիկտը կամ անիրավաչափ գործողությունները: Սակայն այս մոտեցումն այդքան էլ

¹ Տե՛ս **Романец Ю.В.**, նշված աշխատ., էջեր 15-16:

արդարացված չէր և բոլորովին չէր ողջունվում: Հասարակական կյանքում շփումների ընդլայնումը հարաբերությունների զարգացումն ու կատարելագործումն արդեն իսկ առաջացնում էին օբյեկտիվ անհրաժեշտություն որոշակիորեն վերափոխելու նաև պարտավորական հարաբերությունների առաջացման հիմքերը: Այստեղ անբեկանելիորեն իր կայուն դերն ու նշանակությունը կարող է ունենալ պայմանագիրը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ պատմականորեն բոլոր ժամանակներում պայմանագիրը ներկայացվել է որպես կամային ակտ՝ բնական է, որ հարաբերությունների սահմանման հարցում ևս այն ունենալու էր կարևոր նշանակություն:

Հասարակության տնտեսական կառուցակարգում կատարված փոփոխություններն արդեն իսկ առաջ բերեցին պայմանագրի՝ որպես իրավական ինստիտուտի առավել գիտակցված հիմնավորում:

Պայմանագրի հասկացության օրենսդրական սահմանման առանցքում գործ ենք ունենում բավականին հետաքրքիր կարգավորումների հետ: ՀՀ քաղ. օր. 436-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագիրը բնորոշվում է որպես երկու կամ մի քանի անձանց միջև կայացած համաձայնություն, որն ուղղված է քաղաքացիական իրավունքների և պարտականությունների սահմանմանը, փոփոխմանը կամ դադարեցմանը: ՌԴ քաղաքացիական օրենսգիրքը ևս հարցին տվել է նմանօրինակ կարգավորում: ՌԴ քաղ. օր. 420-րդ հոդվածն օրենսդրական սահմանման հարցում ընդգծում է պայմանագրային հարաբերությունների նկատմամբ պարտավորական հարաբերություններն իրավական կարգավորման ենթարկող ինստիտուտների կիրառման հանգամանքը: Պայմանագրի հասկացության սահմանման հարցում բավականին ընդլայնված իրավական կարգավորում է սահմանում Եվրոպական մասնավոր իրավունքի մոդելային փաստաթուղթը՝ սահմանելով պայմանագիրը որպես պարտավորական հարաբերությունների սահմանման առանցքային ինստիտուտ՝ իրեն բնորոշ մի շարք հատկանիշներով.

- Պայմանագրերն ունեն ընդգծված պարտավորական բնույթ և կոչված են հստակ կերպով սահմանելու իրավունքներ և ամրագրելու պարտավորությունների շրջանակ՝ հիմք դառնալով դրանց առաջացման, փոփոխման կամ դադարման համար:
- Պայմանագրային հարաբերություններն ուղղված են կյանքի բոլոր ասպեկտներում պարտավորական իրավահարաբերությունների ձևավորմանը:

- Պայմանագիրը հանդես է գալիս որպես իրավաբանական փաստ, սակայն շատ հաճախ պրակտիկ կիրառության մեջ պայմանագրի իրավական հասկացությունն օգտագործվում է նաև որպես պարտավորական հարաբերությունների բաղկացուցիչ:
- Ոչ բոլոր համաձայնությունները կարող են ստանալ կամ ունենալ պայմանագրային բնույթ, այսինքն՝ ամեն հարցի շուրջ կողմերի միջև ծագած համաձայնությունը չի կարող մեկնաբանվել որպես պայմանագիր²:

Պայմանագրի հասկացության սահմանման հարցում բավականին հետաքրքիր բնորոշում ունի Եվրոպական պայմանագրային իրավունքի օրենսգիրքը: Այստեղ 1-ին հոդվածով սահմանվում են պայմանագրի իրավական բնույթին վերաբերող մի շարք առանցքային կետեր: Մասնավորապես, նշվում է, որ պայմանագիրը երկու և ավելի անձանց միջև կայացող համաձայնության տեսակ է, որը կոչված է իրավահարաբերությունների սահմանմանը, փոփոխմանը կամ դադարմանը: Անմիջապես հաջորդ պարբերությամբ Օրենսգիրքն անդրադարձ է կատարում այն հստակ սահմանվող սուբյեկտային կազմին, որոնց միջև կարող է կնքվել պայմանագիրը: Այդ սահմանմամբ արդեն իսկ բացառվում է որևէ այլ անձի հետ կամ այլ անձի նկատմամբ պայմանագրային պարտավորությունների առաջացումը, քան սահմանվում է արդեն օրենսգրքով, թեև պայմանագիր հասկացության օրենսդրական սահմանումը հնարավոր կլինի տալ միայն տվյալ հասկացության լեզվա-տրամաբանական վերլուծության արդյունքում: Այս առումով եթե փորձենք անդրադարձ կատարել պայմանագրի հասկացության սահմանմանը, ապա կտեսնենք, որ դեռևս վաղ պատմական ժամանակաշրջանից բառարաններում կարելի էր տեսնել ամենատարբեր վերլուծություններ: Մասնավորապես, Դ. Ն. Ուշակովի հեղինակած «Ռուսաց լեզվի բառարան-մեկնաբանություն» աշխատության մեջ պայմանագիրը ներկայացվում էր որպես երկու և ավելի անձանց միջև կայացող համաձայնություն, որն ինքն իրենով ունակ էր առաջացնել որոշակի տեսակի իրավահարաբերություններ³: Մի փոքր ավելի արդիական ժամանակաշրջանի աշխատություն-

² St' u Договорное и обязательственное право, общ. Часть, постатейный комментарий, М., изд Статут, 2017, отв. Ред. **А.Г. Карпетов**, стр 815-517 (1112 էջից):

³ St' u Словарь русского языка. Под ред. **А.П. Евгеньвой**: в 4-х томах, 2-ое перераб. Издание, М., 1999, стр 171:

ներում պայմանագիրը մեկնաբանվում է որպես գրավոր կամ բանավոր համաձայնություն, որն ունակ է առաջացնել փոխադարձ պարտավորություն⁴: Եթե փորձենք նույն հասկացությունը մեկնաբանել գործնականի առանցքում, ապա պայմանագիրը հնարավոր կլինի ներկայացնել որպես ոչ ֆորմալ համաձայնություն, իսկ դրա իրագործումն արդեն օրենսդրական երաշխիք է տվյալ պարտավորության կատարման առումով:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ պայմանագրի հասկացությունը շատ հաճախ նույնացել է նաև դեռևս հռոմեական իրավունքից եկած «contractus» եզրույթի հետ՝ գիտական գրականության մեջ հաճախ հնարավոր է հանդիպել նաև «կոնտրակտ» եզրույթին և դրա շուրջ տրվող տարատեսակ մեկնաբանությունների: Այն ներկայացվում է որպես գրավոր կերպով ամրագրում ստացող պարտավորությունների համակարգի ամբողջություն⁵:

Ինչպես տեսանք, պայմանագրի հասկացության սահմանման առանցքում ներկայացվում է նրա՝ որոշակի պարտավորությունների առաջացման հիմքում դրվելը, ինչը մեկ անգամ ևս ընդգծում է այն կարևորությունը, որը կա և/կամ կարող է լինել պայմանագիր-պարտավորություն կապի առանցքում:

Պայմանագիրն օրենսդրական սահմանման տարբեր ձևաչափերում ամենատարբեր կերպ է մեկնաբանվել նաև օրենսդրության զարգացման տարբեր ժամանակաշրջաններում: Եթե փորձենք անդրադառնալ օրենսդրական զարգացման պատմությանը, ապա կտեսնենք, որ դեռևս հին ռուսական իրավական աղբյուրներում այս կամ այն կերպ անդրդարձ էր կատարվում պայմանագրի հասկացությանը: Դեռևս հին Ռուսաստանում 9-3-րդ դարերում պայմանագիրը ներկայացվում էր որպես համաձայնություն կամ քննարկման արդյունքի մարմնավորում: Պսկովյան գրամտաններում (Судебные грамоты) պայմանագիրը ներկայացվում էր արդեն որպես ոչ միայն ձևական, այլ որոշակիորեն նաև պաշտոնական արտացոլում ունեցող փաստաթուղթ: Ընդ որում՝ շատ հետաքրքիր և ուշագրավ օրինաչափությամբ նշվում էր նաև այն մինիմալ արժեքը, որի շրջանակներում կարե-

⁴ St u **Даль В.** Толковый словарь беликого русского языка , в 4-х томах, 1998, Том 1, Астрахань, 1998, стр 450:

⁵ St u Римское частное право: уч. Для ВВЗ-ов, под ред. **Н.Б. Новицкого, И.С. Перетерского**, М., 1999, стр 295:

լի կամ թույլատրելի և ընդունելի էր կատարել գործարքներ առանց համաձայնությունը գրավոր կերպով ամրագրելու՝ հիմքում դնելով ընդամենը բանավոր համաձայնությունը: Խոսքը վերաբերում էր 1 ՌԴ ռուբլի արժեք ներկայացնող գործարքներին: Արդեն հետագայում՝ 16-17-րդ դարերում, Իոնի դասագրքի շրջանակներում առավելապես սկսեցին գերակշռել գրավոր կերպով ամրագրում ստացող փաստաթղթերը⁶: Ակնհայտ է, որ պայմանագրի հասկացության սահմանման առանցքում հիմնական տեղն ու դերը տրվում է սուբյեկտի ակտիվ վարքագծին: Ասել է թե՛ շեշտադրվում էին բացառապես այն գործողությունները, որոնք կարող էին ստանալ հետագա ամրագրում ակտիվ վարքագծի տեսքով: Այսինքն՝ զուտ խոսքը, պարզապես կատարված արտահայտությունները չէին կարող վկայել պայմանագրի գոյության մասին, եթե դրանք չէին ստանում ակտիվ վարքագծի տեսք կամ մարմնավորում: Սրա կարևորագույն պատճառներից մեկն էլ հենց այն էր, որ պայմանագիրը՝ որպես փիլիսոփայական կատեգորիա, ուներ մարդու գործողության արտահայտում, որն ուղղված էր նրա տարրական պահանջմունքների բավարարման և ֆիզիկակա գոյության պահանջների ապահովմանը: Այս առումով, դեռևս Ի.Գ. Ֆիխտեն նշում էր, որ մարդը ստեղծված է հասարակությունում ապրելու համար, և եթե նա ապրում է նույնիսկ առանձնացված, կնշանակի, որ ինքն արդեն իսկ կանխորոշում է իր գոյությունը⁷: Շարունակելով այս տեսակետը՝ գիտնականը նշում էր, որ մարդ արարածը՝ որպես հասարակության ակտիվ անդամ, նախատեսված է այդ հասարակության մեջ կամ նրա համար գործելու, արարելու, իր ակտիվ վարքագծով որոշակի գործողություններ կատարելու համար: Իրավաբանական և փիլիսոփայական հուշարձանները Ժան Ժակ Ռուսոյի հասարակական պայմանագրի տեսության միջոցով փորձեցին ներկայացնել նույնիսկ պետությունը որպես մարդկանց միջև պայմանագրային հիմունքներով կայացած համաձայնության արդյունք՝ այդպիսով ընդգծելով պայմանագրի դերը նաև այս ասպարեզում⁸:

⁶ Տե՛ս **Владимирский -Буданов М.Ф.** Обзор истории русского права, Ростов на Дону, 1995, стр 566:

⁷ Տե՛ս **Фихте И.Г.** Несколько учении о назначении ученого, назначение человека: основные черты современной эпохи. Пер. С немецкого. Минск, 1998, стр. 20:

⁸ Տե՛ս **Жан Жак Руссо** Об общественном договоре, или принципы ... права, 1969..:

Մարդկային հասարակության պատմության առանցքում հատուկ տեղ զբաղեցնող պայմանագրի հասկացության սահմանման, դրա օրենսդրական և գիտական ամրագրման մասին խոսելիս, բնականաբար, առավելագույնս հիշատակվում է հենց քաղաքացիական իրավունքը, քանզի քաղաքացիաիրավական առանցքն է օգնում արտացոլել պայմանագրի հասկացության սահմանումն ու դրա դերը և նշանակությունը:

Քաղաքացիական իրավունքը՝ որպես հասարակության վաղ պատմական ժամանակաշրջանից հասարակության զարգացմանն ուղեկցող իրավունքի ճյուղ, իրեն բնորոշ դիսպոզիտիվ իրավակարգավորումներով հանդերձ, հատուկ շեշտադրում էր պայմանագիրը որպես կամային ակտի տեսակ:

Որպես դիսպոզիտիվ իրավակարգավորման կողմնակից և մարմնավորում դրսևորող իրավունքի ճյուղ՝ քաղաքացիական իրավունքը միշտ գնացել է դեպի այն ուղին, որ հասարակական հարաբերության բոլոր սուբյեկտները հավասար են, ուստի քաղաքացիական իրավահարաբերություններում չի կարող գործել պետա-իշխանական լիազորություններով օժտված լինելու, դրանցից մեկի՝ մյուսի նկատմամբ ունեցած գերակա դերակատարության հիմնահարցը: Որպես իրավունքի այս ճյուղի դիսպոզիտիվությունը մարմնավորող գլխավոր երևույթ՝ շեշտադրվել է պայմանագրի գոյության հիմնահարցը, որը հասարակական կյանքի զարգացման ամենատարբեր առանցքային փուլերում ստացել է տարբեր ամրագրումներ՝ հիմքում միշտ ունենալով և պահելով դրա կամային ակտ լինելու հանգամանքը: Հարկ է նշել, որ 1964թ. քաղաքացիական օրենսգիրքն անդրադարձ չէր կատարում պայմանագրի հասկացության սահմանմանը՝ անդրադառնալով միայն պարտավորություններին և դրա սուբյեկտային կազմին: Օրենսդրության զարգացման հետագա փուլերում արդեն սահմանում ստացավ պայմանագիրը, որն ամրագրվեց որպես երկու և ավելի անձանց միջև կայացող և կամավորության հիմքով ձևավորվող համաձայնություն, որի հիմնական նպատակն իրավահարաբերությունների սահմանումը, փոփոխումը կամ դադարեցումն էր: Գիտական գրականությունը, օրենսդրական սահմանման վերլուծությանը զուգահեռ, պայմանագիրը ներկայացնում էր առավելապես նաև տեսա-փիլիսոփայական առանցքում: Մասնավորապես, Դ.Ի. Մեյերի կարծիքով պայմանագիրը երկու անձանց կամքի արտահայտման հիմնական մարմնավոր-

րումն էր⁹: Վ.Ի. Մինոյսկիի կարծիքով պայմանագիրը քաղաքացիական իրավահարաբերության սուբյեկտների միջև կայացող սուբյեկտիվ համաձայնության արտահայտում է¹⁰: Արդեն Գ.Ֆ. Շերշենևիչը պայմանագրին տալիս էր դասական սահմանում՝ այն ներկայացնելով որպես սուբյեկտիվ իրավունքների և պարտավորությունների ձեռքբերման, փոփոխման կամ դադարմանն ուղղված գործողությունների շարք¹¹: Ե.Ա. Սուխանովի կարծիքով պայմանագիրը կարելի էր մեկնաբանել որպես քաղաքացիական իրավահարաբերության սուբյեկտների միջև կայացած համաձայնության տեսակ, որն իրենում պարունակում էր իրավաբանորեն պարտադիր որոշակի գործողությունների համալիր ամբողջություն¹²: Պայմանագիր հասկացության առավել պարզեցված բնորոշում է տրված Ս.Ե. Ժիլինսկու աշխատանքում, որտեղ այն ներկայացվում է որպես օրինական կերպով քաղաքացիական շրջանառության մեջ թույլատրելի իրերի շրջանառությունը թույլատրող գրավոր ամրագրում ունեցող փաստաթուղթ¹³: Պայմանագիր հասկացության բավականին հետաքրքիր բնորոշում էր ներկայացրել Ա. Դ. Կորեցկին՝ շեշտադրելով պայմանագրի դերը որպես անձնական գործարարական շահերի և պահանջմունքների բավարարման մեխանիզմ¹⁴:

Ինչպես տեսանք, գիտական գրականության մեջ պայմանագիրը ներկայացված է ամենատարբեր մեկնաբանություններով: Այս առումով ուշագրավ են թե նրանք, որոնք պայմանագրի հասկացությունը ներկայացնում են բացառապես պարտավորությունների առաջացման առանցքում, և թե նրանք որոնք շեշտադրում են պայմանագիրը որպես անհատական շահերի և պահանջմունքների բավարարման միջոց:

Այնուամենայնիվ, կարծում ենք, որ քաղաքացիական իրավունքի գիտության և տեսության առանց կազմող պարտավորական իրավունքում պայմանագրի ունեցած դերի և նշանակության մասին կարելի է խոսել ան-

⁹ Տե՛ս **Мейер Д.И.** Русское гражданское право в 2-х частях, М., 1997, стр. 156:

¹⁰ Տե՛ս **Синойский В.И.** Русское гражданское право. М., 2002, стр. 309:

¹¹ Տե՛ս **Шершеневич Г.Ф.** Учебник русского гражданского права. М., 1995, стр. 309:

¹² Տե՛ս **Гражданское право в 2-ж томаж. Ов. Ред. Е.А. Суханов**, 2-ое перераб. Издание. Т. 2. М., 1999, стр. 153:

¹³ Տե՛ս **Жилинский С.Е.** Предпринимательское право (правовая основа предпринимательской деятельности). 3-е издание, измен. И дополненное. М., 2000, стр. 218:

¹⁴ Տե՛ս **Корецкий А.Д.** Теоретико-правовые основы учения о договоре. Отв. Ред. **П.П. Баранов.** СПб., 2001, стр. 35-36:

դադար՝ այն քննարկելով ամենատարբեր առանցքներում: Սակայն, նկատի ունենալով այն հանգամանքը, որ պարտավորական հարաբերությունների տեսությունն այնուամենայնիվ շեշտադրում է պայմանագիրը որպես պարտավորությունների առաջացման հիմք, իսկ պարտավորությունը ենթադրում է փոխադարձություն և նաև փոխադարձ իրավունքների առաջացում, կարծում ենք՝ առավել ճիշտ և ընդունելի կլիներ պայմանագիրը ներկայացնել որպես *քաղաքացիական իրավահարաբերության սուբյեկտների միջև կայացող կամային ակտ, որն ուղղված է իրենց կամ երրորդ անձանց մոտ կամ նրանց հանդեպ որոշակի իրավունքների և պարտականությունների առաջացմանը, փոփոխմանը կամ դադարմանը:*

Կարծում ենք՝ այսօրինակ բնորոշումն ունակ է սպառնիչ կերպով և հստակ ներկայացնելու պայմանագրի իրավական բնույթը և արտացոլելու դրա բովանդակությունը՝ շեշտադրելով նաև երրորդ անձանց գոյության հանգամանքը պայմանագրային հարաբերությունների առանցքում:

К ВОПРОСУ О ЗАКОНОДАТЕЛЬНОМ ОПРЕДЕЛЕНИИ ДОГОВОРА В ГРАЖДАНСКОМ ПРАВЕ (НАУЧНО- ПРАКТИЧЕСКИЙ АНАЛИЗ)

Марукян Гаяне

*Академия Образовательного комплекса полиции РА
Доцент кафедры гражданского права и гражданского
процесса, кандидат юридических наук, доцент,
капитан полиции*

Аннотация. В рамках научной статьи предметом обсуждения стали некоторые принципиальные вопросы законодательного определения понятия договора. Надо отметить, что в рамках статьи обсуждение вопроса было осуществлено в контексте определений правового явления в доктринальной литературе. Проведенная аналитическая работа позволила представить также самостоятельный вариант определения договора, рассматривая явление во всех возможных аспектах.

Ключевые слова. Договор, обязательственные отношения, правовое явление, научная литература, законодательное определение.

ON THE ISSUE OF THE LEGISLATIVE DEFINITION OF A CONTRACT IN CIVIL LAW (SCIENTIFIC AND PRACTICAL ANALYSIS)

Marukyan Gayane

*Academy of Police Educational Complex of RA,
Associate Professor of the Department of Civil Law
and Civil Procedure, Candidate of Legal Sciences,
Associate Professor, Police Captain*

Summary: Within the framework of the scientific article, some fundamental issues of the legislative definition of the concept of contract have become the subject of discussion. It is noteworthy that the discussion of the issue within the article was done in the context of definitions of a legal phenomenon in the doctrinal literature. The performed analytical work allowed to present also an independent version of the definition of the contract, discussing the phenomenon in all possible aspects.

Key words: Contract, binding relations, legal phenomenon, scientific literature, legislative definition.

Հոդվածը գրախոսվել է՝ 16.01.2023թ.:
Ներկայացվել է տպագրության՝ 02.02.2023թ.:

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊՐՈՎՈԿԱՑԻԱՅԻ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

Մեկիքյան Մեկիք

*ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի
իրավական փորձաքննությունների ծառայության
գլխավոր մասնագետի պաշտոնակատար,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ*

Համառոտագիր: Հանցագործության պրովոկացիայի էությունը, քրեական իրավունքում նրա զբաղեցրած տեղը, իրեն ներհատուկ գծերը բացահայտելու և դրա վերաբերյալ հիմնախնդիրները վեր հանելու տեսանկյունից հատուկ կարևորություն ունի անդրադարձ կատարել դրա բնորոշմանը, հատկապես երբ պրակտիկ և տեսական հարթություններում դրա շուրջ ձևավորված մոտեցումները տարբեր են և հաճախ նաև իրար հակասող: Միննույն ժամանակ, հարկ է ընդգծել, որ հանցագործության պրովոկացիայի ընդհանուր բնորոշումը ՀՀ քրեական օրենսդրությամբ բացակայում է, ինչն էլ ավելի է մեծացնում իրականացվող աշխատանքի գիտական հետաքրքրությունն ու կարևորությունը:

Հոդվածում արտահայտված տեսակետները հիմնվել են սոցիալական կյանքի տարբեր ոլորտներում պրովոկացիայի առանձին դրսևորումների, հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ պատմական ակնարկների, դոկտրինալ մեկնաբանությունների, արտասահմանյան երկրների փորձի և դատական պրակտիկայում ձևավորված կայուն նախադեպային իրավունքի վրա, ինչի արդյունքում էլ արձանագրվել են մի շարք նկատառումներ և տրվել համապատասխան եզրակացություն:

Բանալի բառեր: Հանցագործության պրովոկացիա, քրեական իրավունք, իրավունքի աղբյուր, դոկտրին, արտասահմանյան փորձ, դատական պրակտիկա:

Հանցագործության պրովոկացիայի էությունը, քրեական իրավունքում նրա զբաղեցրած տեղը, իրեն ներհատուկ գծերը բացահայտելու և դրա վերաբերյալ հիմնախնդիրները վեր հանելու տեսանկյունից, անհրաժեշտ է

անդրադարձ կատարել դրա բնորոշմանը, հատկապես երբ պրակտիկ և տեսական հարթություններում դրա շուրջ ձևավորված մոտեցումները տարբեր են և հաճախ նաև իրար հակասող: Միննույն ժամանակ, հարկ է ընդգծել, որ հանցագործության պրովոկացիայի ուղղակի բնորոշումը ՀՀ քրեական օրենսդրությամբ բացակայում է, ինչն էլ ավելի է մեծացնում սույն գիտական հոդվածի գիտական հետաքրքրությունն ու կարևորությունը:

Նախևառաջ պետք է նշել, որ պրովոկացիա եզրույթը ծագել է լատիներեն *provocatio*-ից, որը թարգմանաբար նշանակում է մարտահրավեր¹:

Պրովոկացիայի՝ որպես եզրույթի իմաստն ընկալելու նպատակով նախ անհրաժեշտ է ուսումնասիրել հայրենական և արտասահմանյան տարբեր բառարաններում դրա վերաբերյալ տրված բացատրությունները:

Այսպես՝ Ստեփան Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ում պրովոկացիան բնորոշվում է որպես «*Պրովոկատորի գործ, սադրում, գրգռում, բանասարկություն, (մի խառնակություն՝ յուզմունք առաջ բերելու կամ մեկին վնասելու նպատակով*»:

Ըստ Էդուարդ Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի»՝ պրովոկացիան ենթադրում է՝ «*(...) 1. Առանձին մարդկանց խմբավորումների՝ կուսակցությունների՝ երկրներին դրդելը դեպի այնպիսի գործողություններ, որոնք կարող են հանգեցնել նրանց համար ծանր, երբեմն կործանիչ, հետևանքների: 2 Ոստիկանության գաղտնի գործակալների դավաճանական գործողությունները և դրանց իրականացման միջոցներն ու եղանակները՝ հեղափոխական կազմակերպությունների գործունեությունը լրտեսելու և կազմակերպությունը քայքայող կամ թուլացնող արարքներ գրգռելու նպատակով: 3. Խռովություն, պրովոկացիոն բնույթի ապստամբություն(...)*»³: Նույնն է պրովոկացիայի բացատրությունը «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»⁴, «Հանրագիտակ գրպանի բառարան»⁵ աշխատություններում:

¹ Տե՛ս <https://www.wordsense.eu/provocatio/>, վերջին այցելության ամսաթիվ՝ 21.10.2022թ.:

² Տե՛ս Ստեփան Մալխասյանց, «Հայերեն բացատրական բառարան» Երևան: Հայկական ՄՍՌ Պետական Հրատարակչություն (1944), էջ 1893:

³ Տե՛ս Էդուարդ Աղայան, «Արդի հայերենի բացատրական բառարան», Երևան, 1976, էջ 1233:

⁴ Տե՛ս Հ.Աճառյանի Անվան Լեզվի Բնստիտուտ, «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», Երևան, 1980, Հատոր 4, էջ 223:

Աշոտ Սուքիասյանի՝ «Հայոց լեզվի հոմանիշների բառարան»-ում պրովոկացիայի հոմանիշներն են՝ բանասարկությունը, նենգարկությունը, սադրումը, սադրանքը, գրգռումը և գրգռանքը⁶:

Համանման են նաև արտասահմանյան տարբեր բառարաններում պրովոկացիա բառի իմաստային բնորոշումները:

Մասնավորապես, Կուզնեցովի՝ «Ռուսաց լեզվի բացատրական մեծ բառարանում» պրովոկացիան բնութագրվում է որպես՝ ա) ագրեսիվ գործողություն, որը միտված է ռազմական հակամարտություն առաջացնելուն, բ) դավաճանական պահվածք, որն ինչ-որ մեկին սադրում է այնպիսի գործողություններ կատարելու, որոնք կարող են ծանր հետևանքներ ունենալ նրա համար, իսկ Ն.Բլեքի բառարանում պրովոկացիան ներկայացվում է որպես ուրիշին որոշակի արարքի կատարմանը սադրելու գործողություն⁷:

Պետք է ընդգծել, որ պրովոկացիան համընդգրկուն երևույթ է, որը կարող է դրսևորվել սոցիալական կյանքի տարբեր հարաբերություններում: Անգամ կարծիք կա, որ պրովոկացիայի դրսևորումները կարող են արտահայտվել սոցիալական փոխհարաբերությունների բոլոր հարթություններում⁸, ուստի, մեծ կարևորություն է ներկայացնում պրովոկացիայի դրսևորումները տարբեր ասպարեզներում դիտարկելը, որպիսի ուսումնասիրության արդյունքներն էլ հարաբերակցելը քրեաիրավական դաշտում խնդրո առարկա երևույթի շուրջ առկա առանձնահատկությունների հետ խթան կհանդիսանա տալու դրա քրեաիրավական բնորոշումը:

Քաղաքագիտության ոլորտում պրովոկացիան բնորոշվում է որպես քողարկված գործողություն՝ ուղղված հակառակորդին դիտավորությամբ պարտվողական արարքների մղելու⁹, ինչպես նաև դիվերսիոն քաղաքակա-

⁵ Տե՛ս **Ա.Մելիք**, «Հանրագիտակ գրպանի բառարան», Նյու Յորք, Dicran Siramark, The Dixie Press, 1930, էջ 207:

⁶ Տե՛ս **Ա.Սուքիասյան**, «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան», Երևան, 1967, էջ 555:

⁷ Տե՛ս **Henry Campbell Black, M. A.**, black's law dictionary, Revised Fourth Edition, ST. Paul, Minn. west publishing Co. 1968, էջ 1390:

⁸ Տե՛ս **Zygmunt Bauman**, Liquid Modernity, 2000, Padstow, էջ 22:

⁹ Տե՛ս **Загладин Н.** Событие политическое//Политическая энциклопедия: в 2-х томах // М.: Мысль. 2000. т. 2., էջեր 419–420.

նություն վարելու մեթոդ, որը միտված է հակառակ թևի համար ծանր հետևանքներ առաջացնելուն¹⁰:

Նշվում է, որ «պրովոկացիայի ծրագրավորմամբ» կարող է ստուգվել հակառակորդ պետության արձագանքն իրադարձությունների սրմանը, ինչի միջոցով հնարավոր է հանգեցնել հակառակորդի դիրքի կորստի, այսինքն՝ պրովոկացիան համարվում է թշնամուն վնաս պատճառելու միջոց¹¹:

Քաղաքագիտությունում պրովոկացիան դիտարկվում է նաև ինֆորմացիայի օգտագործման և քաղաքական ազդեցության տարածման նախատեսված միջոց, որով քաղաքական ուժը կարող է տարածել իր քաղաքական ազդեցությունը¹²:

Հոգեբանությունում պրովոկացիան ներկայացվում է որպես «հակամարտություն առաջացնող փոխազդեցություն»՝ ըստ որի այն իրականացնող և դրան ենթարկվող անձանց միջև առաջանում է հետաքրքրությունների, նպատակների մրցակցություն, ինչի ներգործության արդյունքում այն իրականացնող անձը հասնում է իր հետապնդելի նպատակին¹³:

Հոգեբանական ազդեցությունը, որը գործում է պրովոկացիայի միջոցով, կարող է փոխանցվել նաև խոսքով, քանզի հնարավոր են դեպքեր, երբ հաղորդակցության ընթացքում հաղորդակցվողներից մեկը (պրովոկատորը) միտումնավոր կերպով կարողանում է կիրառել մյուս (պրովոկացիայի ենթարկվող) անձի համար դրա իրական նպատակն անհայտ, քողարկված այնպիսի հնարքներ, որոնց միջոցով գրուցակցից ստանում է այն տեղեկությունը, որը վերջինս չէր ցանկանա փոխանցել¹⁴:

Ուշագրավ է բժշկության ասպարեզում կատարվող պրովոկացիան, որը, ի տարբերություն վերոնշյալ անդրադարձների, առաջ է քաշում դրանով օգտակար արդյունքի հասնելու հնարավորության գաղափարը, ինչի կապակ-

¹⁰ Տե՛ս **Глухова А.В.** Политическая провокация: природа, контекст, разновидности // Провокация: сферы коммуникативного проявления, Екатеринбург, 2016, էջ 39–72.

¹¹ Տե՛ս **Пашенцев Е.Н.** Провокация как элемент стратегической коммуникации США: опыт Украины // Государственное управление. Электронный вестник. 2014. № 44, էջ 149:

¹² Տե՛ս **Кузнецов И.И.** Технологии политических провокаций в Рунете // Теория и практика общественно-научной информации. 2004. № 19, էջեր 197–211:

¹³ Տե՛ս **Сычев А.А.** Провокация между теорией и жизнью // Провокация: сферы коммуникативного проявления. 2016, էջեր 18–38.

¹⁴ Տե՛ս **Иссерс О.Ц.** Стратегия речевой провокации в публичном диалоге//Русский язык в научном освещении, Москва, 2009, թ. 2 (18), էջ 93:

ցությանը էլ բժշկության ասպարեզում առանձնանում է հատուկ ուղղություն՝ «պրովոկացիոն հոգեթերապիան», որի հիմնադիրն է Ֆրենկ Ֆարելլին¹⁵:

Պրովոկացիայի վերաբերյալ նաև առկա է պատմական հարուստ փորձ: Այդ առնչությամբ հիշատակումների շարքին կարելի է դասել նաև Աստվածաշունչը: Մասնավորապես, «Գիրք ծննդոցում», որտեղ խոսվում է Աստծո արարչագործության և Ադամի ու Եվայի կողմից «թունավոր պտուղը» քաղելու հատվածի մասին, նկարագրվում է հետևյալը. «Օձը երկրի վրայ Աստծու ստեղծած բոլոր գազաններից աւելի խորամանկ էր: Օձն ասաց կնոջը. «Ինչո՞ւ Աստուած ասաց, թէ դրախտում գտնուող բոլոր ծառերի պտուղներից չէք կարող ուտել»: Կինն ասաց օձին. «Դրախտի ծառերի պտուղներից կարող ենք ուտել: Սակայն դրախտի մեջտեղի ծառի պտղի համար Աստուած ասաց. «Դրանից չուտեք եւ չմտենաք, որպէսզի չմեռնէք»: Օձն ասաց կնոջը. «Չէք մահանայ, որովհետեւ Աստուած գիտէր, որ այն օրը, երբ դրանից ուտէք, կը բացուեն ձեր աչքերը, եւ դուք կը լինէք աստուածների նման՝ կիմանաք բարին ու չարը: (...) Տէր Աստուած ասաց կնոջը. «Այդ ի՞նչ էս արել»: Կինն ասաց. «Օձը խաբեց ինձ, եւ էս կերայ»:¹⁶»:

Մեջբերվածից միանշանակ է, որ տվյալ պարագայում նկարագրված է պրովոկացիայի դասական օրինակ. օձի սադրիչ գործողությունների արդյունքում մարդու մոտ առաջանում է անթույլատրելի արարքի կատարման վճռականություն, ինչն էլ իր հերթին հենց իր համար հանգեցնում է անբարենպաստ հետևանքների:

Պրովոկացիայի մասին հիշատակումներ կան նաև Հին Հռոմի ժամանակաշրջանի աղբյուրներում, որտեղ, սակայն, տվյալ հասկացությունն արդի պատկերացումներից տարբերվում էր:

Հին Հռոմում պրովոկացիա (jus provokationis) էր համարվում քրեական գործերով բողոքարկման իրավունքը՝ մագիստրատից ժողովրդին (provocatio ad populum) փոխանցելը, ինչպես նաև հայցվորին ընդհանուր կանոնին հակառակ հայց ներկայացնելու իրավունքը (provocacio ad agendum)¹⁷:

¹⁵ Այս մասին մանրամասն տե՛ս, **Frank Farelly and Jeff Brandsma**, Provocative therapy, California, 1974:

¹⁶ Տե՛ս <https://www.qahana.am/bible/OldTestament/Genesis.html#3-16> , վերջին այցելության ամսաթիվ՝ 21.10.2022թ.:

¹⁷ Տե՛ս **Забелов А.Ю.** Историко-правовой опыт криминализации провокации преступления, Хабаровск, 2017, էջեր 388-391:

Միջնադարյան ժամանակաշրջանի տարբեր փիլիսոփաներ և իրավաբաններ, անդրադառնալով պրովոկացիայի էությանը, այն դիտարկել և բնորոշել են տարբեր կերպ:

Այսպես, օրինակ՝ հոլանդացի իրավաբան, աստվածաբան, պետական գործիչ, բնական և միջազգային իրավունքի տեսության հիմնադիրներից Հուգո Հրոցիոսը, անդրադառնալով հանցագործության պրովոկացիային, նշել է. *«Յուրաքանչյուր ոք, ով պատճառ է հանդիսանում այլ անձի կողմից հանցանք գործելուն, մեղավոր է հանցանք կատարելու համար»¹⁸*:

Հետագոտման օբյեկտի վերաբերյալ կան նաև տարբեր հեղինակների առաջադրած դոկտրինալ հայեցակետեր, որոնց ուսումնասիրումը ևս կնպաստի պատկերացում կազմելու հանցագործության պրովոկացիայի քրեաիրավական բնորոշման մասին:

Վ.Կուդրյավցևի մոտեցմամբ հանցագործության պրովոկացիա ասելով հասկացվում է անձի կողմից միտումնավոր այնպիսի իրավիճակի ստեղծում, որը «դրանց տրվող զոհին» մղում է կատարելու պրովոկատորին ձեռնառու արարքներ¹⁹:

Ռ.Աբիգովի և Ս.Սանդակովսկու առաջադրած թեզերի համաձայն՝ հանցագործության պրովոկացիա ասելով պետք է հասկանալ իրադրության ստեղծում, որի ազդեցության տակ գտնվող անձը կատարում է այնպիսի գործողություն, որն իր համար առաջացնում է վնասակար հետևանքներ²⁰:

Հետագոտելով հանցագործության պրովոկացիայի հասկացությունը՝ Ս.Մաստերկովը նշել է, որ այն ֆիզիկական կամ հոգեբանական ճնշմամբ ձեռնարկվող գործողություն է՝ այլ անձի մոտ հանցագործության կատարմանը մասնակցելու ցանկություն «արթնացնելու» նպատակով²¹:

Ս.Ռադաչինսկին իր հերթին կարծիք է հայտնել այն մասին, որ հանցագործության պրովոկացիան հանցագործի դիտավորյալ միակողմանի գործունեությունն է, որն ուղղված է այլ անձին վարկաբեկելու, շանտաժի կամ նրա դեմ արհեստական մեղադրական ապացույցներ ստեղծելու նպատա-

¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 592:

¹⁹ Տե՛ս **Кудрявцев В.Н.** Российское уголовное право. Особенная часть (главы автора Кудрявцева В.Н.): учебник. Москва., 2016. էջ 408:

²⁰ Տե՛ս **Абызов Р.М.,** Сандаковский С.А. Провокация взятки: уголовно-правовой аспект: монография. Барнаул, 2009, էջ 9:

²¹ Տե՛ս **Мастерков А.А.** Уголовно-правовые и криминологические аспекты провокационной деятельности : дис. ... канд. юрид. наук : 12.00.08. էջ 32:

կին, տվյալ անձի մոտ այնպիսի վարքագիծ մողելավորելուն, որի արդյունքում նրա արարքները կունենան հանցագործության բոլոր արտաքին հատկանիշները²²: Համանման տեսակետ է արտահայտել նաև Ն.Բաբիան²³:

Ա.Դմիտրենկոյի հայեցակետի համաձայն՝ հանցագործության պրովոկացիա ասելով պետք է հասկանալ այն իրավիճակները, երբ պրովոկատորը պրովոկացիայի ենթարկվողի մոտ առաջացնում է հանցագործություն կատարելու մտադրություն՝ վերջինիս քրեական պատասխանատվություն ենթարկելու նպատակով²⁴:

Արևմտյան երկրների հետազոտողների դոկտրիններից հանդիպում ենք տեսակետի՝ ըստ որի հանցագործության պրովոկացիա է համարվում որոշակի գործողություն կամ գործողությունների շարք, որը գիտակից մարդու մոտ կարող է առաջացնել ինքնատիրապետման կորուստ²⁵: Կարծիք է արտահայտվել նաև այն մասին, որ հանցագործության պրովոկացիան համարվում է որոշակի գործողություններով անձին միտումնավոր կերպով այնպիսի իրավիճակին հասցնելը, որի արդյունքում վերջինս կատարի, ինչպես որոշակիացված, այնպես էլ նախապես պրովոկատորի կողմից չձրագրված՝ քրեական օրենքով պատժելի արարքներ²⁶:

Անցում կատարելով հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ արտասահմանյան երկրների օրենսդրություններում առկա իրավակարգավորումների ուսումնասիրմանը՝ հարկ է նշել, որ դրանք լայնատիրույթ են և տարբեր պետություններում կարգավորվում են տարբեր կերպ: Դրանցում առկա են բազմաբնույթ իրավադրույթներ ինչպես քրեադատավարական և առանձին օրենքների, այնպես էլ քրեաիրավական կարգավորումների ձևով,

²² St´u **Радачинский С.Н.**, Провокация преступления как комплексный институт уголовного права: проблемы теории и практики, Москва, էջ 46:

²³ St´u **Бабий Н.А.** Соучастие в преступлении: формы, виды, ответственность: монография, Москва, 2015, էջ 715:

²⁴ St´u **Дмитренко А.П.** Провокация преступления в решениях Европейского суда по правам человека // Уголовное и оперативно-разыскное законодательство: проблемы межотраслевых связей и перспективы совершенствования: материалы межведомственной научно-практической конференции (Рязань, 20 октября 2017 г.) / под ред. **Е.Н. Билоуса, Г.В. Ищуга, А.В. Ковалева, Г.С. Шкабина**, Москва, 2017, էջեր 51-55:

²⁵ St´u **Holton Richard, Shute Sephen** Self-control in the Modern Provocation Defence, Oxford Journal of Legal Studies, volume 27, 2005, էջեր 49-64:

²⁶ St´u **Albrecht, P.**, Anmerkungen zur Ermittlung in Verfahren wegen Widerhandlungen gegen BetmG, Basel, 2005, էջ 9:

որոնք գետեղված են տարբեր ինստիտուտների և առանձին հանցագործությունների վերաբերյալ դրույթներում, սակայն սույն հոդվածի հետազոտման շրջանակներում կառանձնացվեն այն նորմերը, որոնք կոնկրետ տալիս են հանցագործության պրովոկացիայի սահմանումները:

Վրաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 145-րդ հոդվածում, որն ամրագրված է «Մարդու իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հանցագործություններ» վերտառությամբ 23-րդ գլխում, հանցագործության պրովոկացիան սահմանված է հետևյալ կերպ. *«Հանցագործության պրովոկացիա է համարվում այլ անձի հանցագործություն կատարելուն դրդելը՝ վերջինիս քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով»²⁷:*

Ղազախստանի Հանրապետության քրեական օրենսգրքի, 2020 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 365-ՄՄ օրենքին համապատասխան, լրացվել է «Հանցագործության պրովոկացիա» 412.1-րդ հոդվածով՝ ըստ որի հանցագործության պրովոկացիա են համարվում օպերատիվ-հետախուզական միջոցառում կամ նախաքննություն իրականացնող պաշտոնատար անձի անօրինական գործողությունները, որոնք դրդել են անձին հանցագործություն կատարելուն՝ նրան քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով²⁸:

ԱՄՆ-ում գործում է գլխավոր դատախազի՝ «Հետաքննությունների դաշնային բյուրոյի կողմից գաղտնի գործողություններ անցկացնելու մասին» 2002 թվականի մայիսի 30-ի հրահանգը (The Attorney General's guidelines on Federal Bureau of Investigation undercover operations), որի «A» կետում նշված է, որ իրավապահ մարմինների ներկայացուցիչները պետք է զերծ մնան պրովոկացիա կատարելուց: Այստեղ ձևակերպված է նաև պրովոկացիայի սահմանումը, որի համաձայն՝ *«Պրովոկացիան առաջանում է այն ժամանակ, երբ Կառավարությունը, իր ներկայացուցիչների միջոցով անձի (ով հակված չէ կատարելու հանցագործություն) գիտակցության վրա ներազդելով, նրա մոտ առաջ է բերում հանցագործություն կատարելու մտադրութ-*

²⁷ Տե՛ս <https://matsne.gov.ge/en/document/view/16426> (21.10.2022):

²⁸ Տե՛ս նույն տեղում:

յուն, այնուհետև դրդում է կատարելու այդ հանցագործությունը՝ նրան պատասխանատվության ենթարկելու նպատակով»²⁹:

Համանման կրագավորում է գործում նաև Լիտվայի Հանրապետությունում 2002 թվականի հունիսի 20-ին ընդունված «Օպերատիվ գործունեության մասին» թիվ IX-965 օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետում³⁰, ինչպես նաև «Հանցագործությունների մասին» Ավստրալիայի 1914 թվականի Դաշնային օրենքում (Crimes Act)³¹:

Հանցագործության պրովոկացիան բնորոշելու առումով արժեքավոր են նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) և ՀՀ Վճռաբեկ դատարանի (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) կողմից կայուն նախադեպային իրավունքում ձևավորված մի շարք իրավական դիրքորոշումները: Միաժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ նշված դիրքորոշումները վերաբերում են քրեադատավարական հայեցակետին և իշխանության մարմինների, նրանց հետ համագործակցող կամ նրանց հրահանգմամբ գործող անձանց գործունեության իրավաչափության գնահատմանը՝ արդար դատաքննության հիմնարար իրավունքի համատեքստում:

Այսպես, *Ռամանաուսկասի* գործով կայացված որոշմամբ Եվրոպական դատարանը նշել է, որ ոստիկանության կողմից հանցագործության պրովոկացիան առկա է այն դեպքում, երբ ներգրավված ոստիկանները կամ անվտանգության ուժերի անդամները, կամ նրանց հրահանգմամբ գործող անձինք, չեն սահմանափակվում հանցավոր գործունեությունը զգալիորեն պասիվ ձևով քննելով, այլ այնպիսի ազդեցություն են գործադրում անձի վրա, որով վերջինիս հրահրում են հանցագործության կատարման (որը հակառակ դեպքում չէր կատարվի), որպեսզի հնարավոր դարձնեն հանցագործության հաստատումը՝ ապացույցների ապահովումը և քրեական հետապնդման հարուցումը³²:

²⁹ Տե՛ս <https://www.justice.gov/sites/default/files/ag/legacy/2013/09/24/undercover-fbi-operations.pdf>, վերջին այցելության ամսաթիվ՝ 28.05.2022թ.:

³⁰ Տե՛ս <https://e-seimas.lrs.lt/portal/legalAct/lt/TAD/TAIS.400662?jfwid=72zogm8lt>, վերջին այցելության ամսաթիվ՝ 21.10.2022թ.:

³¹ Տե՛ս http://www.austlii.edu.au/au/legis/cth/consol_act/ca191482/, վերջին այցելության ամսաթիվ՝ 21.10.2022թ.:

³² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Ramanauskas v. Lithuania* գործով 2008 թվականի փետրվարի 5-ի վճիռը, գանգատ թիվ **74420/01**, կետ 55:

Զարգացնելով նախկինում արտահայտված իր դիրքորոշումները՝ Եվրոպական դատարանը *Stjuputejra v. Gasstun* ընդդեմ *Պորտուգալիայի* գործով պրովոկացիայի առկայությունը գնահատելիս Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ գործակալների գործողությունները վերածվում են պրովոկացիայի, երբ նրանք անձին դրդում են իրավախախտման, և որևէ հիմք չի լինում ենթադրելու, որ առանց նրանց միջամտության նշված իրավախախտումը կկատարվեր³³:

Խնդրո առարկա հարցի շուրջ Վճռաբեկ դատարանը, Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո, *Գաունիկ Գալստյանի* գործով կրկին քրեադատավարական իմաստով հանցագործության պրովոկացիան բնորոշել է որպես իշխանության ներկայացուցիչների (նրանց հետ համագործակցող կամ նրանց հրահանգմամբ գործող անձանց) կողմից իրականացված գործողություններ, որոնք դուրս են գալիս զգալիորեն պասիվ ձևով քննության շրջանակներից՝ պայմանավորելով անձի կողմից հանցագործություն կատարելու նախաձեռնության ձևավորումը, որպեսզի հնարավոր դարձնեն հանցագործության հաստատումը, այն է՝ ապահովեն ապացույցներ և հարուցեն քրեական հետապնդում³⁴:

Հարկ է նկատել, որ քրեական դատավարության հայեցակետում միջազգային դատարանի և ՀՀ բարձրագույն դատական ատյանի կայուն նախադեպային իրավունքում հանցագործության պրովոկացիայի՝ վերը վկայակոչված իրավական դիրքորոշումները, ի համեմատություն քրեական իրավունքում հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ իրավակարգավորումների և դոկտրինալ մեկնաբանությունների, ավելի նեղ են և տարբերվում են ինչպես սուբյեկտային կազմով, այնպես էլ դրա վերջնանպատակով:

Տվյալ դիրքորոշումն ամրապնդվում է ինչպես վերոնշյալ քրեական իրավունքի տարբեր աղբյուրներում հանցագործության պրովոկացիային տրված բնորոշումներով, այնպես էլ հատկապես այն հանգամանքով, որ 2003 թվականի խմբագրությամբ գործող ՀՀ քրեական օրենսգրքի 350-րդ (Կաշառքի կամ առևտրային կաշառքի պրովոկացիան) հոդվածի վերաբերյալ տրված գիտական մեկնաբանությունում նշված է, որ միայն հատուկ

³³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Teixeira de Castro v. Portugal* գործով 1998 թվականի հունիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 44/1997/828/1034, կետեր 37-38:

³⁴ Տե՛ս, mutatis mutandis Վճռաբեկ դատարանի՝ *Գաունիկ Գալստյանի* գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵՄԴ/0027/01/14 որոշման 15-րդ կետը:

սուբյեկտը չէ, որ կարող է լինել տվյալ հանցատեսակի սուբյեկտը, և միակ նպատակն անձին քրեական պատասխանատվության պայմաններ ստեղծելը չէ, որ կարող է ընդգրկված լինել նրա դիտավորության մեջ³⁵, ինչն ըստ էության վերաբերելի է նաև 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված քրեական օրենսգրքի 477-րդ հոդվածի (Կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիան) դիսպոզիցիայի մեկնաբանմանը, քանզի այդ մասով նոր օրենսդրական կարգավորմամբ գործող իրավանորմի նկարագրական մասն էական փոփոխությունների չի ենթարկվել:

Ընդհանրացնելով հոդվածում կատարված ուսումնասիրությունները՝ պետք է փաստել, որ թեև քրեական իրավունքում հանցագործության պրովոկացիայի կոնկրետ և համընդհանուր ճանաչում ստացած բնորոշումը բացակայում է, այնուամենայնիվ, սոցիալական կյանքի տարբեր ոլորտներում դրա առանձին դրսևորումների, պատմական ակնարկների, դոկտրինալ մեկնաբանությունների, արտասահմանյան երկրների փորձի և դատական պրակտիկայում ձևավորված կայուն նախադեպային իրավունքում դրա վերաբերյալ բնորոշումների համապարփակ վերլուծությամբ հնարավոր է առանձնացնել որոշակի ընդհանրություններ, որոնց միջոցով կարելի է արձանագրել, որ հանցագործության պրովոկացիան՝

- ներգործության ձև է, որը գործադրվում է պրովոկատորի կողմից՝ ուղղված մեկ այլ անձի կամ անձանց դեմ,

- միջոց է անձի կողմից հանցագործություն կատարելու վճռականություն ձևավորելու և դրա կատարմանը մղելու,

- քողարկված բնույթի մեթոդների ամբողջություն է, որի բուն նպատակը մյուս անձի համար անհայտ է և միտված է այդ անձի համար վնասաբեր հետևանքներ առաջացնելուն:

Այսպիսով, կարելի է փաստել, որ հանցագործության պրովոկացիան քրեական իրավունքում բնորոշվում է որպես մի անձի կողմից մյուս անձի նկատմամբ գործադրվող ներգործություն, որը միտված է քողարկված մեթոդների միջոցով վերջինիս հանցագործության մղելուն՝ նրա նկատմամբ քրեական պատասխանատվության հիմքեր ստեղծելու կամ այլ վնասակար հետևանքներ առաջացնելու նպատակով:

³⁵ Այս մասով առավել մանրամասն տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով). /Երևանի պետական համալսարան, Երևան, 2012, էջ 1026:

ОПРЕДЕЛЕНИЕ ПРОВОКАЦИИ ПРЕСТУПЛЕНИЯ В УГОЛОВНОМ ПРАВЕ

Меликян Мелик Арташесович

И.О. главного специалиста

Службы правовой экспертизы

Кассационного суда РА,

Соискатель кафедры уголовного

права юридического факультета ЕГУ

Сущность провокации преступления, ее место в уголовном праве с точки зрения выявления присущих ей черт и раскрытия ее проблем, имеет особое значение при решении ее определения, особенно когда подходы к ней различны и часто противоречивы.

В то же время следует подчеркнуть, что в уголовном законодательстве РА отсутствует общее определение провокации преступления, что еще больше повышает научный интерес и полезность выполненной работы.

Взгляды, высказанные в данной статье, основаны на отдельных проявлениях провокации в различных сферах общественной жизни, исторических намеках на провокацию преступления, доктринальных трактовках, в опыте зарубежных стран, устойчивой судебной практике на практике, в результате автором чего был высказан ряд соображений.

Ключевые слова. Провокация преступления, уголовное право, источник права, доктрина, зарубежный опыт, судебная практика.

DEFINITION OF CRIME PROVOCATION IN CRIMINAL LAW

Melikyan Melik

Acting Chief Specialist of the Legal Expertise

Service of the RA Court of Cassation,

Ph.D student (Researcher),

Chair of Criminal Law, YSU Faculty of Law

The core of crime provocation, its place in criminal law, from the perspective of identifying its characteristics and revealing its problems, has a unique significance in referring to its definition, especially when the approaches to it are diverse and often contradictory.

At the same time, it should be noted that the RA criminal legislation lacks a comprehensive definition of crime provocation, which a lot more increases the scientific interest and value of the work done.

The viewpoints, expressed in this article, are based on individual forms of provocation in various spheres of social life, historical indications of crime provocation, doctrinal interpretations, experience of foreign countries, stable judicial practice in practice which resulted in making a number of judgments.

Key words. Crime provocation, criminal law, source of law, doctrine, foreign experience, judicial practice.

Հոդվածը գրախոսվել է՝ 03.01.2023թ.:
Ներկայացվել է տպագրության՝ 13.01.2023թ.:

**ԱՐԴԱՊՏԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

Նագարյան Նաիրա

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
ուսումնական կենտրոնի հատուկ
պատրաստականության կրթաճյուղի
ավագ դասախոս, հ. գ. թ.,
ոստիկանության փոխգնդապետ*

Համառոտագիր: Հոդվածում ներկայացվում են մասնագիտական գործունեությանը հարմարման գործընթացի որոշ առանձնահատկություններ: Քննության է առնվում մասնավորապես ոստիկանության ծառայողների մասնագիտական ադապտացիայի գործընթացը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ աշխատանքի արդյունավետությունը և հուսալիությունը մեծապես պայմանավորված են աշխատակցի՝ մասնագիտական գործունեությանը հարմարվածության կամ մասնագիտական ադապտացիայի հաջողությամբ:

Մասնագիտական գործունեության ընթացքում ադապտացիոն գործընթացների ոչ պատշաճ իրականացման պատճառով կարող են ի հայտ գալ կամ սրվել մասնագիտական ճգնաժամեր՝ հանգեցնելով մասնագիտական ձևախեղումների, որոնք բացասաբար են անդրադառնում գործունեության արդյունավետության և հուսալիության վրա, խոչընդոտում են մասնագետի անձի ինքնիրացման գործընթացին:

Բանալի բառեր՝ մասնագիտական գործունեություն, անձ, ադապտացիա, հարմարում, դեգադապտացիա, ձևախեղում, մասնագիտական ադապտացիա, ինքնիրացում:

Մերօրյա հասարակությունում ընթացող ինտենսիվ վերափոխումների համատեքստում առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում անձի՝ որպես գործունեության և հաղորդակցման սուբյեկտի ադապտացիայի հիմնահարցի ուսումնասիրությունը: Հայտնի է, որ աշխատանքի արդյունավետությունը և հուսալիությունը մեծապես պայմանավորված է աշխատակցի՝

մասնագիտական գործունեությանը հարմարվածության հաջողությամբ: Որպես մասնագիտական բարդ գործունեության սուբյեկտի՝ ասվածն առավել քան կարևորվում է ուստիկանության ծառայողների պարագայում, քանի որ, մասնագիտական գործունեության սոցիալական նշանակությամբ և յուրատիպությամբ պայմանավորված, նրանց շատ ավելի բարձր պահանջներ են ներկայացվում:

Ներկայումս գրականության մեջ ադապտացիայի երևույթի մեկնաբանության մեջ որոշակի միտումներ են արձանագրվում: Ադապտացիան լայն իմաստով անձի՝ կենսագործունեության արտաքին և ներքին փոփոխվող պայմաններին հարմարվելու գործընթացն է¹: Տարբերվում են հարմարում (adjustment) և ադապտացիա (adaptation) հասկացությունները պասիվ հարմարումից, վերջնական նպատակից՝ հոմեոստատիկ հավասարակշռությունից շեշտադրումը փոխադրվում է անձ-միջավայր արդյունավետ համակարգի կառուցման վրա, կոնֆլիկտների բացակայությունից դեպի անձի ինքնիրացում և ինքնիրականացում իրական սոցիալական միջավայրում: Սոցիալական գործընթացների անկայունությունը բարձր պահանջներ է ներկայացնում անձին, ով հարկադրված է հաշվի առնել արտաքուստ պայմանավորված տարաբնույթ գործոնները, այսինքն՝ փոփոխվել և, դրանով հանդերձ, պահպանել հարաբերականորեն կայուն ներքին հավասարակշռության վիճակը: Այս դիտանկյունից ադապտացիան համարվում է անձի արտաքուստ ակտիվ հարմարման և ներքին փոփոխությունների գործընթաց ու արդյունք²:

